

Գ Ա. Գ Ի Ն

© 1970 ՅՈՒՆԵՍԿՕ  
digitised by A.R.A.R.®

ԹԻԻ 6

**باکین**  
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
 مدير المسؤول  
 السيد اوتين كارنيك قزائجيان

•

**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

•

**ԲԱԳԻՆ**  
 ԱՄՍԱԳԻՐ  
 ԿՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
 ԵՒ ԱՐԹԻՍՏԻ

ԱՐԻՔ ԽՐԲԱԳԻՐ  
 Կ. ՍԱՍՈՒՆԻ  
 ԽՐԲԱԳԻՐ  
 Պ. ՄԱՊԵԱՆ

ԽՐԲԱԳՐՈՒԹԵԱՆ  
 ԱՆՉԱՄՆԵՐ  
 Յ. ԳԵՂԱՐԿ  
 Տ. ՈՍԳՈՒՆԻ  
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ  
 Ն. ՊՈՐԹԵԻՆԵԱՆ  
 Ժ. ԱԹՔԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆՊԱՄՆԵՐԵՆ  
 † ԵԴ. ՊՕՑԱՃԵԱՆ

**ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ**

Ս. ՓԱՆՈՍԵԱՆ
ԱՐՄԱՆՏ
Կ. ՄԵՃԵԱՆ
Ռ. ԳԱՌՕՆԷ
Յ. ԿԱՐԱՊԵՆՅ
Գ. ԳԵՂԱԿ
Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ
Ն. ՊԷՐՊԵՐԵԱՆ
ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻ
Պ. ՍԵՒԱԿ
Յ. ՕՇԱԿԱՆ
ԵԴ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ
Լ. ՄԳՐՏՋԵԱՆ
.....
ՆՇՄԱՐՆԵՐ

Խմբագրութեան հասցէ  
**G. SASSOUNI**  
 Rue Sélim Boustani,  
 Beyrouth-Liban  
 Հեռաձայնի թիւ 296898

# Քաղաք

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Թ. ՏԱՐԻ. ԹԻԻ 6

ՅՈՒՆԻՍ 1970

ՊԷՐՈՒԹ

### ՍՄԲՍ ՓԱՆՈՍԵԱՆ

Այս անունը, Սմբատ Փանոսեան, առաջին անգամ է, որ կ'երևայ «Բագին»-ի մէջ, բայց ներկայացուելու գրեթէ կարիք չունի, որովհետեւ նայ գրականութեան ծանօթ անձին քաջածանօթ է նաեւ ինք, եւ կը համարուի մէկը Ափիւօրի արձակիչ սակաւ ընտելանքին:

Հատորով լոյս ընծայած է իր ստեղծագործութիւններէն մէկ մտալ միտքը.— «Անտրապոսիկ Զայլեր» (1949), «Որ մըրկաւ էին գտնուած» (1953), «Էւայկակամ վերէր» (1969), եւ «Սէրը, որ ցիւց յունէր» (1968):

Փանոսեան կարճ դաստուանքով մուտք գործեց գրականութենէն ներս եւ արձանագրեց աստիճանական վերելք մը, անկաս թէ՛ լայնքով եւ թէ՛ խորքով: Իր գրականութեան ամէնէն տկերաբա յատկութիւնը կը հանդիսանայ յրացումի եւ արտայայտութեան թարմութիւնը:

Կ'ողջունենք իր ներուժը «Բագին»-ի մէջ եւ շնորհը կը յանձնորարենք «Վարք Կոստանա Կոստանայի» վերականգնող, որ մեծ վարդապետին կեանքը վերականգնող բարստան զորք մըն է:

Վ Ա Ր Ք



ԿՈՄԻՏԱՍ ԿՈՒՏԻՆԱՑԻԻ



Ա.

Վոստորին կապույտ ջուրերն ու Պոլիսը ալլեւ խորթ կը թուէին: Պիտի մեկնէր ու անապարանք կար իրմէ ներս աւ քարափին վրայ: Առաջին սոյլը նեւած էր արդէն մաքսատան գործերը փութացնելու եւ ուշ մնացած ճամբորդները իրեն քաշելու համար: Մնա՛ք-բարոյի եւ ողջերթի անմիջական

արտասուքը, որ գրուհեր էր մարդոց կողմերէն դուրս, կը վերածուէր գնդիկի: Մոռցուած պատուէրներ, նորադարձ յանձնարարութիւն, կամ շահակըցւած պոռչտուքներ կը կամըղէին մէկ-մէկ բացը, որ ինկած էր վարը սպասողներուն եւ նաւուն տախտակամածին խոնուած մարդոց միջեւ...

Ինչ ետք, հրր խարխիւսը վերցնէր նաւը ու մեկնէր գէպի Փրանտա — այդ պիտի ըլլար առաջին ապահով նաւային ճամբորդութիւն մը, պատերազմէն նոր ձերբազատուած ծովուն վրայ: Պիտի ճոճուէին սպիտակ թաշկինակներ, հոսկէ ու հոնկէ պիտի շարժուէին թեւեր. այն ատեն գնդիկի վերածուած արցունքը հոսք պիտի դառնար ու աղի բանով մը կծկէր մարդոց այտին մաշկը:

Անշամբոյրով ու արցունքով էր, որ քարափին խոնուած հոծ բազմութիւն մը ճամբայ բացաւ հնայոց երգի եւ երաժշտութեան զժրախտ արքային» նաւ բարձրանալու: Վերելքի սանգղտմատերէն ան տարուեցաւ որքան թէ անութեամբ-գրկուած, այն վախով, թէ մի գուցէ ոտքը սայթաքէր... Բոլորին լեզուին վրայ միեւնոյն մաղթերգն էր, աղօթքն ու բաղձանքը.

— Բարի ե՛րթ, Վարդապե՛տ. ու առո՛ղջ վերադարձ...

Շուքին հետ խիկ անհաշտ, անտպիտ, այտերուն դեղնամաշկը պրկած, անմաս, խոտով որպէս, սեւ սքեմին փէշերուն մէջ շփոթող սրունքներով՝ Կոմիտաս Կուտինացին քալած-անցած էր բազմութեան մէջէն, խլուած աջին վրայ դրոշմուած ճամբորդներէն վախուորիկ, բիրախաղով վախ ազդող նայւածքով ու հիմա ան կանգնած էր կամըղակին վրայ խնամատար բոխիկին եւ բոյժ-բոյր պաշկան միջեւ: Կ'անգիտանար մեղուացող եռուղեքը քարափին ու բարեկեանական պոռչտուքը, որ կը շարունակուէր կամըղակին վրայ... Կանկանած էր սեւ մարմարէ կոփուած արձանի մը նման. սակայն իր շիճորիկ, սնկրակ, ակնակապիճները խուզարկող անհանդարտ բիրերը հրած էր դէպի հեռո՛ւ, հեռաւոր հարիզոնի մը:

Պա՛հ մը հրճուանքի քող մը կը շողացնէ անոր բիրերը. իմացականութիւնը սուս կը վերադառնայ կարծես: Սրած է ակնարկը, այտերուն մաշկը պրկած. կը շտանան ճակտին յոնքավերի կնճիռները, կը թուի, թէ յիշողութիւնը դժած է արգէն հայրենի աշխարհին երազ-պատկերը: Կը նշմարէ ահա Վարդէն եկող միտարը» կամ ձորամիջին, շինարի ծառին տակ չպատկած հաւմարը, նրնսը բաց»...: Երկվայրկեանի կեանք ունեցող ժպիտ մը կը քաղցրացնէ նայուածքը. սակայն յանկարծ կը լրջանան գէժքին գիծերը. սարէն շէր գտր ձիւտրը, այլ Վարդա՛վ, սարեքա՛վ գացող ի՛մ հարը»: Ու մէկէն՝ ժայռէն ձայն հանող խոյանքը միաւորներու եւ քրտական յօ՛ւ-յօ՛ւին ընդմէջէն Միփանայ սէ՛ղ սարէն իջնող կտրիճներուն երգը, որ տակաւ կը հեռանա՛յ, կը հեռանայ... Կոմիտաս Կուտինացին յիշողական կարողութիւնն ալ հետը...

Այդ ո՞վ էր, որ երգեր էր զնոսրերն հն գերանները. այդ ի՞նչ ճիւղաւորութեամբ պատարագեալ էր, որ կը լսէր: Ժամերգութիւն չէր. տօնական ալ չէր, այլ՝ տեսակ մը վայնասունի նմանող լացուկոծ... Անելի մատնուած միտքը պարապ է այժմ. կոտուացող ցաւ մը կ'արձագանգէ ուղեղին մէջ. խաւարը կը խուժէ վրան, կը կապկպէ ձեռքն ու ոտքը ու կը կեցնէ զինք նաւուն կամըղակի պատուարին առջեւ...:

Իր ինչո՞ն էր պէտք երգիներանդ գոյներով օտ ծաղկեփունջը, որ կը շննն ահա իր ձեռքերուն մէջ: Ո՞վ էին այդ երիտասարդն ու աղջիկը, որոնց գէժքը իրեն ծանօթ կը թուէին: Առաւ ծաղկեփունջը, բայց միեւնոյն անտարբեր շարժումով նետեց զայն ծովը ու մնաց ներկային մէջ բացակայ մը:

Տախտակամածին վրայ շրջող օտարական մը, որ բանիժաց մարդ մը կը կարծէր ինքզինք, չկրցաւ զսպել զարմացական գոչ մը.

— Բայց, սա՛ կրօնաւոր պարօնը պէտք է որ խելագար մը եղած ըլլայ, այլապէ՛ս... :

Հետաքրքիրներու վճճակ մը արթնցած՝ իր շտապ բնավրէն, ծօտ-մօտ եկաւ. շրջապատեց սեւ արձանի նման կանգնադեղ «կրօնաւոր պարօնը», քշփշաց, շափեց ու ձեւեց իր Հետաքրքրութիւնը եւ ականջամէջ լսելի՛ փրփրօսաց.

— ձի՛ւղ է, որ մարդը խելագարի երեւոյթ ունի... :

Հողերոյսթ-խնամատար բժիշկը ուրէր պիտի աչքերը վճճակին վըրայ, ցցուն մատը տանելով հաստ շրթունքներուն: Բոյսթ-քոյրը սակայն նեւտէր պիտի հայտէն օտարականներու անպէտք երեսին, ինչ որ ունէր որպէս կսկիծ ու մաղձ ամբարած սիրտին մէջ.

— Դուք, անխիղճ պարօններ, ի՛նչպէս կրնաք երեւակայել տնաւեր փոթորիկը, որ եկաւ անցաւ մեր մեծ Կոմիտասի գլխուն խորէն... դացէ՛ք, Հեռացէ՛ք դուք խելօք ապուշներ եւ ձգեցէք մեր Հիւանդը մեր ցաւին... :

Կոմիտաս Կուտինացին, որ ունեցած էր սուր ականջ, զգայուն սիրտ, որ կրնար որսալ ծաղիկներու շնչնկոցն իսկ — չէր լսեր կարծես չուրջ բոլորը պատու դափառքը: Ուրիշ ժամանակներ ան պիտի չրջէր անմիջապէս գէձքը, նայուածքին մէջ ներողամիտ ժպիտ մը ապրեցնելով ու հարցնէր. «Ի՛նչ կ'ուզէիր ըսել», — հիմա կը դառնար քիչ մը ետին ու կը բռնէր բըժիշկին ականարկը.

— Ո՛ւր կ'երթան, սա՛ մարդիկ... — կը հարցնէր կարուկ, անմաս:

— Կը ճամբորդեն, Վարդապետ. ինչպէս որ դուք պիտի ճամբորդես... :

— Ե՛ս. ո՛չ. կանգնած եմ ահա հաս եւ պիտի կռնդնիմ հո՛ւ... :

— Այո՛, Վարդապետ. կանգնելով պիտի ճամբորդենք, — շատ լուրջ էր բժիշկը:

— Ո՛ւր, — Կոմիտաս Կուտինացին կը նայէր հեռուն:

— Փարիզ, Վարդապետ:

— Փարի՛զ. ո՞վ էր Փարիզը... :

Խնամատար բժիշկը պէտք չունէր զբոնելու իր հիւանդին ջիւղերը: Լըսեց: Կոմիտաս վերագարձած էր նախկին դիրքին ու պաղ ականարկը զամած հորիզոնին, ուր կրկին թաւալել կը սկսէին յուշապատկերները: Կը զգա՞ր, կ'ապրէ՞ր միթէ՞ շարունակուող ողբերգութիւնը իր ժողովուրդին, որուն համար գոհեր էր ամէն բան, մինչեւ իսկ ժառանգականութեան իրաւունքը... :

Թերե՛ս: Եկած էր պատերազմը. շատ մը ժողովուրդներ ինկած էին ոտքի տակ, ապրած գաղթելու գառնութիւնը ու տուն գարձի սփոփանքով արեւի տակ կ'ապրէին: Պատերազմը սմանց պարտութիւն տուաւ, ուրիշներու՝ յաղթանակ բերաւ: Ձեզաւ ամբողջական տնաքանդութիւն. իսկ հայուն համար պատերազմը դարձաւ պատուհաս եւ մե՛ծ Եղեօն: Ամբողջ երկիր մը ամառացաւ. մարդիկ խողխողուեցան. ջարդուեցան մեծ ու պղտիկ, կին ու մարդ, շմաց մէկը, որ տեսնէր արեւը կրկին. լուծը դնէր եղան վիզին ու հերկէր «խոր ախօսներ հողին մէջ». ցանք ընէր. բերքահաւաք տար ու էրնէր: Ձկային այլեւս եղէգնեայ դրչով երդ երգողներ եւ ոչ ալ «Սօնա հար, Սօնա հար» կանչող մը...: Իսկ ինքը չէր խնայած կեանքը, կօշիկ մաշեցնելով ինկած էր սար ու ձոր, տքնաշան, անքուն, ժպտաչուրթ միշտ, որպէսզի սպրեցնէր ցեղին երգը, որ խոպան մնացած էր...: Քառասո՛ւն երկար տարիներ եւ քիւր-քիւրաւոր երգեր, որ մնացին անտէր-անտերական... :

Յուսակումը եղած էր խոր. խոկաց ու ողբաց. արցունքը չոր էր. արմատն քանդող, այրող. շփմացան ջիզերը, որոնք անհունօրէն պրկուած էին ու կը ճարճատէին: Աւղիւր ըմբոսացաւ. չէր կրնար տանիլ հետզհետէ անպնայող խուճապը ու մէկէն ճարճատեցան երակները, անշարժացաւ միտքը. մտածումին լոյսը եղաւ նախ աղօտ, երերուն, օրը օրին պատրոյշը կարճացաւ, կանթեղին ազատած իւղի պակասէն: Աղջամուղը եւ մթութիւն ապա, որ դիզուէին վրայ վրայի: Ստացաւ, քարացաւ մութը եւ եղաւ այնուհետեւ զօնւ խաւարը...

— Վարդապետը ցնորած է, — ըսին սրտացաւ ծանօթ-բարեկամներ:

— Այժմ, կ'ըմբռնէ՞ք, պարոնայք օտարականներ, — կը հարցնէր ինքն իր մէջ խորտուզուած բոյժ-քոյրը ու կը բարձրացնէր թեւը ինկած վերարկուին, որ կը ծածկէր կոմիտասին ուսերը:

Նաւը տուած էր կողը Վոսփորի արեւելեան կողին ու զրկուած քարափին հետ: Գարնայի՞ն էր եղանակը, թէ դեռ աշուն շտեմած տաք ամառ, յայտնի չէր. բայց կոմիտաս կը մտէր եւ անա թէ ինչն էր բոյժ-քոյրը կը բարձրացնէր վերարկուին թեւը: Արեւը այժմ ծուռ կը նայէր նաւուն, որ շուքին մէջ առած էր քարափէն մաս մը:

Կոմիտասի ուսերը վեր ելան. ձեռքերը թաղեց սքեմին փէշերուն տակ. մատները երկու ափերուն՝ փնտոցին զիրար, իջան զով զով. բռնուեցան խօշ զրգրուով մը եւ յանկարծ յարձակեցան իրարու վրայ. մտան մէջ-մէջէր. մատնայողներ ճարճատեցան: Դիմացը բաղձած էր բազում բլրակներէ կազմուած գահին վրայ դարաւոր Պոլիսը, հազար ինը հարիւր տասնիկի չպարտաւան հնիքը ճակատին: Միշտ պատուած, սակայն բնաւ յծերացած պըրուհի նման հոյանի: Ասկիզիջիւրի կապոյտ ճուրղերը մեղմ ալիքներով, հաւատարիմ շան մը պէս կը լիզէին անոր մերկ ուղեքը, որոնք կը կամըջէին եւրոպա-ափական զոյգ ափերը Մարմարա ծովուն: Սառնածին էր ու անման իր գեղեցիկութիւնը, խորամանկ, վաւաչուտ, նենգամիտ՝ ժպիտն ու խօսքը: Ինքն էր, որ դարձեց առաջին ցեղատպանութիւնը եւ դայն փաթթեց հայու վիզին, միանգամ ընդ միշտ խեղդելու համար անոր ազատատենչ շունչը: Պատերազմը եղած էր առիթ մը. գործարարած ոճիւրը բռնուած էր յանցանքի վրայ: Սակայն, կրցաւ ազատիլ ծանր շղթաներէ: Մեծերը սիրեցին ու ըզմացին պըրուհիի իր հուանի թեւերը, բաց կուրծքը եւ մերկ ազգերը: Յարձակեցան վրան համբաւչի ոգիով, բայց չկրցան բաժնել անոր սննդաւ հարստութիւնը իրենց մէջ: Սոված գազանի բնազդով իջան միտերուն, ու եղաւ վէճ իրենց միջեւ: Հիմա անոնք սեռային կիրքէ յազեցած՝ փողոցային բերաշուններու պէս թաւալած էին արեւելեան ղեղեցիկուհիին շուրջ բոլորը ու զըրմուսլով եւ ժանիք ցցելով կը խանդէին զիրար...

Այդպէս էր, որ ապրեցաւ Պոլիսը եւ այժմ թրջօրէն բազմած էր բազում բլուրներէ շինուած իր գահին, սակեղիթայ դօտին կապած մէջքին, ձեռքերը ազատ, միտքը՝ անկախ ուղածը ընկու: Իսկ անոր ուղածն ի՞նչ էր, երկա՞ր, երկար ցանկութիւն մը, որ ուրան-թուրան կը կոչուէր: Կիրք մըն էր անիկա պատմական բնազդին մէջ կազմաւորուած: Կար ու կը մնար արդեւաւոր վերջին ուղը, որ կուտահատով մտած, փոքրացած՝ կը մնար Արաքսի արեւելեան ափին, Արազածի փէշերուն կպած...:

Նոր աշխարհ մը ստեղծելու միտքէն հրուած՝ զմեծերը գրազած էին Բաբելոն շինելով, որ նոր ջրհեղեղին դէմ փրկութեան խարխուի մը ունենային: Չէրար չհասկնալով, ձգեցին Պոլսոյ ձեռքերը ազատ. իրենց հո՞գն էր, թէ պիտի վերցուէր պատմութեան բեմէն հայ ցեղն ու հողը...:

Գերերջանիկ էր Պոլիսը. բնութիւնը կապոյտ կամար մը կազմած էր անոր զլխավերեւը: Իբրեւ խաղաղութեան խորհրդանիշ՝ աղանձիներու սպիտակ ծփանք մը կար վեր խոյացող մինարէններու շուրջը: Ազանը ձևատուած մէկ է՝ կ'աղաղակէր. իսկ Պոլիսը կը քաշէր արեւելեան իր նարկիլէն: Բաց-խուփ չրթօնքները մօտիս ու բոց կը ժայթքէին հեւքով... Կռուող բանուկներ կը քալէին տեղ մը, արեւելեան կողմն աշխարհին. իսկ կապոյտ ջուրերու վրայ ահա կ'երթեւեկէին փոխադրական նաւակներ, որոնց մէջ կարժիր Փէսեր արիւն կը շառաւէին կարծեա մէկ ափէն միւսը Ոսկեղջիւրին:

Մինչդեռ նաւուն վրայ կանկնած էր ահա հայ երգի, Համերգներու խմբավար, երեք հարիւր հոգինոց «Գուսան» երգչախումբին կազմակերպիչ, բայց այժմ պատուաւրի, պարզ ու սեւ կրօնաւորի սքեմը հապած Մեծ Կոմիտասը, դուրիսն պարտուած ու որբ... կողոպտուած խելքէն ու միտքէն, վրնատուած՝ հոգիէն ու սիրտէն. սակայն խաղն ցեղային կ'աղմկէր խաչափողին մէջ, ասեղութեան փոխուած: Ակնթարթային արթնամտութեան մէջ պահը վերապրելով, ինչպէ՞ս կը տենչար լսել սպիտակ աղանձներու դոն-դոնի տեղեակ կոխնչը դիակնատեա սեւ աքառաներու ու տոնոց թեւարարու-մով սեւացած մրտա երկինք մը կապորտին փոխարէն... Ափսո՛ս... Ո՞վ պիտի տար Հոգեվարք անցըող հիւանդին վերջին, միտքը տանջող բաղձանքին սփոփանքը...: Կը մեկնէր անդարձ. աչքերը չռած, հտին թողած սիրելիներու ամբոխ մը, որ դեռ ձեռք կը շարժէր ու կը ժողթեղէր -

— Բարի երթ, Վարդապետ. ու առողջ վերադա՛րձ...

Աւելի համեստ ու մարդասէր, քան Քրիստոս, բայց աւելի զգայուն եւ մարդամօտ, քան Որդին Աստուծոյ — Կոմիտաս Կուսինայի սիրեց իր ցեղակիցներն ու անոնց երգն ու խաղը: Նուիրեց ամբողջ կեանքը իր ժողովուրդին, տուաւ յիշուած, դաշնաւորուած երգ ու խաղ. բերաւ անոր ճանաչման փառք: Պողոս էր հայրց երգի խոսկանք. մէկ կեանքով պիտի չբաւեր ինք անոր պեղումին, սուրբին, ընտրեց երանելի աշակերտներ, թլուով վից հոգի եւ անոնց մէջ դրեաւ սէրը պութանին, հով բերող հայրենի լեռներուն, զլխարի պոյին՝ կրակուած սիրտին ու «աւրէ՛լ՝ եամանքին... Ուրախ էր հունձքին համար:

— Կորուստէ փրկեցէք մեր զեղնակ երգը. դացէ՛ք որոնեցէք անոր փչրանքները ամէն տեղ, ամէն անկիւն... ջով ջովի բերէ՛ք զանոնք, մաղեցէ՛ք, ջոկեցէ՛ք հարազատը անհարազատէն. ձեր ամէն մէկ երգին դիմաց իմ ջերմացած սիրտս...:

Չհասցուց ըսել կրօնաւորի իր վերջին մաղթանքը — «Տէր ընդ ձեզ... ամէ՛ն»...

Այժմ քարափին իռնուած ողջերթի կկողներուն առաջին շարքին կանգնած են ահա անոնք, ձեռն ի ծոց, տխրազէմ, յուսակաուր: Կ'ապրե՛ն արդեօք վերջին յոյսի մը կառչած, թէ ունին իրենց Վարդապետէն ընդմիջա բաժնրելու կեկիծը սրտերնուն մէջ: Դրած էին իրենց լուսման սիրելի ուսուցչին խաւարած միտքը վերստին լուսաւորելու ճիւղին: Երգուընցած էին շարունակել անոր գործը...

— Իցի՛ւ թէ մեր յոյսերը ի զերեւ շեյին, — Կանաչեա՞ն էր, որ փսփոսաց ընկերոջ ականջին:

— Ճակատաւարական սխալ մը գործուեցաւ, զինք դարմանելը՝ ոճերէն պատուհասուած ոճբատան մէջ, — միւսն էր, Մէմէրնեանը, որուն աչքերուն մէջ դառնութեան լող կար:

— Ի՞նչ կրնայինք ընել. պատերա՛զմ էր, ձամբաները փակ...:

— Իսկ մե՞նք. տարտղնուած հոս-հոն, ամէն տեղ, թաքուն-թաքուն...

— Յոգուալը ո՞ւր անցնալին վրայ ողբալէն. անօրինենք ներկան ու զաւրիքը, որ անոր շուքը անպակաս ըլլայ մեր վրայէն, — աչակերտներէն երբորդ մըն էր, — Սրուանձտեանցը:

— Ամէ՛ն...:

Եւ այս զամէնոյն-ը ամէնուն շրթունքին կրկնութեան պէտ ցանկութիւն մը կը հաստատէր: Մէկը մօտեցաւ քարափի եզրին, ուր նաւը կողը տուած կլորակ, կակուղ արպիւակներուն, քայլատի բաց մը կը թողոր իր եւ քարափին միջեւ: Մութ-կանաչ ծովաջուրը հոս կը ծեծէր ծաղկեփունջէն փերթած մասերը տարուբեր ցնծութեամբ մը:

— Գէ՛շ նշան էր. գէ՛շ. ծաղկեփունջը չընդունեց. յոյս չմնաց իրմէ...:

Ու այդ մէկը զլուխը շարժելով ետ քայլ ըրաւ, որ զբաւէր տեղը եւ անկէ տնդամ մը եւս նայէր մեծ հիւանդին, որը, ո՞վ գիտէ, յուշ դառնար յետոյ...

Նաւը կրկնեց դորդազին իր վերջին երկար սոյլը խարխիս վերցնելէ առաջ: Խուլ, մեքենական դղրդոցներ լսուեցան ներսէն. մէկը հոն քարածուխ կ'աւելցնէր բորբոքող կրակին: Այնուհետեւ դանդաղօրէն նաւը հեռացուց կողը բարձիկներէն: Բարափին եւ իր միջեւ ծովաչերտը լայնցաւ տակաւ, ազատուած բացին վրայ կ'օրորուէր ահա ինչ որ կը մնար երփնեքանդ ծաղկեփունջէն, ոչ դոյն կար վրան եւ ոչ ալ թարմութիւն...

Թափահարուող թաշկինակները առատացան, ապա քիչ-քիչ կորսնցուցին իրենց չափադանցութիւնը, երբ նաւը ինկաւ ծովուն բացը եւ մութ-կապոյտը շրջապատեց զայն չորս կողմէն: Տարտակամածին խոնձուած մարդերը կորսնցուցին ամէն անհասականութիւն, խտացան, շտկուեցան հաւասարէ հաւասար սեւ երիզի փոխուելով: Սրբիկն մէջտեղը կ'երեւէր ահա դծիկ մը երկնակապոյտէն ու փոքրացող կէտ մը այդ կապոյտ գծիկին վրայ:

— Ահա՛, ի՛նքն է, վարդապետը. կը տեսնէ՞ք, չէ՞...:

Յայտնի չեղաւ, թէ ո՞վ էր խօսողը քարափէն: Անպարման ամէնքն ալ ունէին իրենց տեսողաշտին մէջ երեւցող այդ կէտը, որ անյայտանալէ առաջ, վերջուշի մը ընդմէջէն յառնելով պիտի կրկնէր Մանկութիւնը Կոմիտաս Կուտինացիին...

Բ.

Քանի՞ դար առաջ էր — զուցէ եօթը կամ ութ հարիւր տարի — երբ որք Սողոյի պապուն պապերը թողուցին հայրենի հողը, որը պաշտպանել չէին կրնար այլեւս եւ զաղթական դարձան: Երանելի օրեր ապրած էր Գողթան դաւառը. հայ պատմիչներ հիւսած էին անոր դովքը. տաղասաց դուստաներով լեցուած էր փոքրիկ այդ աշխարհը... Ափոս՝. շատ մը չէն գիւղերու նման Յղձայ գիւղն քիչ դարձաւ աւերակ. փլած գերաններ, կող տուին կիսակործան պատերու եւ բուեր բոյն դրին հոն: Եկուորներ չնայեցան աւերուած տուներուն, բայց տէր դարձան արտ ու արօտի, հունձք ու բերքահաւաքի, մինչդեռ հայ թոնիրը հանգաւ ընդմիջաւ...

Այժմ վերջուշը բան չունէր ընելիք այնտեղ. կը բաւէր, որ արձանադրէր. ճեօթը դար առաջն խօսքը, որ դրուած է պատմութեան էջին: Հետեւելով զաղթուղիին, վերջուշը պիտի անցնէր հայկական պարի լանջերէն, իր ձախին ունենալով պատմական Արածանին: Ապա պիտի մտնէր Բիւրակնի



ձորը, ուր հազար աղբուր հազար փոստ փոստ ըսէին իր ականջին տակ :  
 Հեռո՛ւն, ալիս պիտի տեսնէր Շամբէ Կարնոն եւ հիբրատեան սեւ ջուրը : Ափ-  
 սոսանքի զղացումը պիտի տանէր զինք զէպի Արշակունի թագաւորներու յա-  
 լիտենական հանգստարանը : Այնուհետեւ լիւս ու ձոր, դաշտ ու հովիտ ոտ-  
 նատակ ըրած՝ պիտի քալէ՛ր, քալէր յողմարեկ, տնակեր գողթնցիներու պէս,  
 դաղթականի մաշող ցուպը հոս-հոն դարնելով, մէկ լայով, մէկ աղօթելով,  
 որ հայու Աստուածը քաղցր աչք ունենար, մինչեւ որ հասնէր Անատոլիի խո-  
 բերը տեղ մը, ուր Քիւթասիան կը գտնուէր...

Քիւթասիա եւ Հայկական եկեղեցի՛ մը...

Արեւը ճառագայթ նետած էր Սուրբ Թադէոս եկեղեցիի դմբէթին, սո-  
 կեթել քող մը հիւսելով անոր շուրջ : Ներքեւէն կը լսուէր սաղմոսերգութիւն :  
 Վերջուշը յողնած էր թէ՛ եւ բայց ուժ գործադրեց, որ մարդանար եւ արեւի  
 շողերէն բռնելով իջաւ խորանին առջեւ :

Հոս կնուճք կար :

Չառամեալ, փառ-փառ սղիտակ մօրուքով՝ Տէրտէր մը աւետարանէն  
 կը կարդար : Բորբոս ձայն ունէր եւ զողզղացող ձեռքեր՝ փոքրիկ խաչը ար-  
 ծաթ լողք ունէր, երբ կանթեղ մը լոյս կը նետէր անոր վրայ : Իսկ եկեղեցին  
 քիչ մարդ կար : Աղքատ մարդու զաւկի կնուճք էր եղածը արգէն : Մեր քա-  
 հանան կ'ուտէր բառերը ու հասցուց ծիսակատարութիւնը հոն, ուր կնքա-  
 հայրը պիտի պատուխանէր երեք անգամ Տէր Հօր հարցին : Իսկ կնքահայրը  
 փոքրիկ մանչուկ մըն էր, բան չէր ըմբռներ, մտնաւանդ որ քահանային բա-  
 տերը մաշած էին, ծերունական կուրծքի խորերէն հանուած :

— Քեզի բմ, տղայ՝... Մանուկ զի՛նչ կը խնդրէ. կրկնէ՛ — Յո՛յս,  
 Հաւա՛տք եւ Մկրտութի՛ւն...

Կնքահօր մանկական ձայնը սուր էր. շուտասան. ճըճըւոց .

— Յո՛յս... Հաւա՛տք եւ... .

— Մկրտութի՛ւն, — կու դար շարունակութիւնը ետեւը կեցողներէն :

— Մանուկ զի՛նչ կը խնդրէ... — Թաւաձայն՝ Տէրտէրէն :

— Յո՛յս... Հաւա՛տք եւ... — կոտրած՝ թափը տղեկին :

— Մկրտութի՛ւն... — Թաւ ձայն մը՝ ետեւէն :

Երեք անգամէն վերջ կը գտնէր փոխասացութիւնը : Ամէն անգամին  
 միւտոնով կ'օծուէր կնքուած մանչուկը, որ կը ճշար վախէն ու կուլա՛ր, կու-  
 լար քաղցրաչաչաւ, Տէրտէրին մօրուքը սպիտակ ամպի նման գէժքին ունե-  
 նալով :

Սողոմոն կնքուեցաւ այսպէս հօրով ու մօրով : Մայրը տղուն անունին  
 մէջ ահաւ Սուրբ Գիբրէին Սողոմոն Իմաստունը, հայրը ուղեց, որ մանչու-  
 կին անունով կենդանանար Սողոմոնեաներուն գերդաստանը : Երկուքն ալ  
 հաշտ եղան անունի ընտրութեան շուրջ : Հաշտ էին նաեւ հասկացողութեամբ .  
 մանչուկը ունէր զրնգուն, անուշ ձայն. հայրը առաջին օրէն կանխած էր  
 կնոջ փափաքները .

— Հօրը գերդաստանին քաշած է, կնիկ, հա՛... :

— Ինծի բաւ է Սողոմոն Իմաստունին խելքը... .

Կնուճքը եկեղեցիէն փոխադրուեցաւ կօշկակար Գէորգին տունը :

— Խնամի՛ Գէորգ. բարո՛վ մեծանայ աղաղ, — ներկայ եղող այրերէն  
 մէկը բարձրացուցած էր օղիին դաւաթը :

— Ե՛կն մնաս, խնամի :

— Քա՛, Թագուհի. չըսե՛ս որ տղադ անուշ-անուշ կայնա կուլայ. բա-

բով պսակին հասնիս, — հասուն կին մը լաչակին ճօթը բերնէն հեռացնելով կը ժպտէր:

— Ամբին. զոր Սաթիկ. բարով մնաս, — մանչուկին մայրն էր՝ ուրախ:

Հայրը, արհեստին բերումով, ծածկ միշտ կաշիի ու զամի վրայ՝ եղած էր կտի-գլուխ, աչքի տակէն նայող: Մանչուկին բացը սրտովը շէր, ինչպէս սրտովը պիտի չըլլար ուրախ հարսանիք մը կամ վաղուցին մէջ հասնելէն խօսելը: Սողոմոնը կը ճշար, հայնա կ'երգէր, ինչպէս որ կը հասննար մազթանք ընող կինը: Բարկացաւ ու ձայն բարձրացուց.

— Կի՛ն, հայնա երգե՛լս որն է. ինչո՞ւ սուտ իՓթիրա կ'ընես...

— Խօսք մըն էր ըսի, Գէորգ ամի. հայնա երգելը ո՛ւր, մենք ուր, — փրկուելու գիճեց կինը:

Ու Գէորգ ամին զձեզ մտապասկեր մը. «Վաղը կու գան զործատեղի. կը փնտեսն պատրուակ. քարի տակէն ջուր կը հանեն, թէ քու աղաղ եկեղեցիէն մինչեւ տուն հայնա կ'երգէր. ուրեմն գուն ջոճիթանի ես...»:

— Մով թրքութեան մէջ՝ ջոճիթանի՛ կոչկակար Գէորգ. հա՛... հա՛... հա՛... — օղին ծանր եկած էր:

— Քա՛. խենթեցա՞ր, մարդ, — նեղարեացաւ թաղուհին:

Սողոմոնին հայրը բարի մարդ էր. իմած ժամանակ՝ տխուր կամ հեղձոտ: Մուկացաւ օրօրոցին վրայ:

— Լաց մանչւ, լաց, որ թոքերդ բացուին: Քու լացը հայնա է. իսկ ես ահա կը սկսիմ ալաթուրքիս կանչել...

Ու ձեռքը ականջին սկսաւ «Տէլի եաման» երգել ու պարել:

Ներկաները ծափ տուին. ցնկոր մէկը տեղէն վեր ցատկեց եւ պորտը խաղցնելով Գէորգին առջեւ ոտք շարժեց: Կնուներին ուրախութեան մէջ ասիկա զրուած համեմ մըն էր: Մափերը առատացան, կարկուցին երգիքը փլցնելու չափ:

Փոքրիկ Սողոմոն լսեց. ու յօնքերը կիտած մտիկ ըրաւ: Իր եռամսեայ դուրսութիւնը ամբողջ դարձանք կտրած էր: Մայրը առաւ տղան գիբկը.

— Քա, մարդ. Սողոմոնի մեղք է. թող որ քնանայ. ի՞նչ վեր-վեր կը ձայնես...

— Լաւ, կնիկ. ես լռեցի. թո՛ղ աղաղ հայնա նինջ քաշէ...

Օղիին եւ քէֆին սեղանը ե՛րբ վերջ գտաւ, վերջուշը արձանագրութիւն չունի այդ մասին: Միայն սա յայտնի է, որ մայրը՝ թաղուհին պարուրեց մինուեար մանչուկը խանձարուրով եւ այդպէս առաւ զայն գիբկը ու ծիծը թիմեց անոր պայիկ բերանը: Ապա օրօրոցին վրայ երգեց ոչ-հայնա երգեր. ու մանուկը քնացաւ եւ արթնցաւ. մօրը ձայնին քաղցր ալիքներով: Իսկ հայրը՝ Գէորգ զնաց խանութ յաջորդ օրերուն ու տուն եկաւ կնիկին բերելով միշտ անուշ բան մը, որ ուտելով՝ կաթը առատ ըլլար եւ մանչուկը՝ առողջ:

Օր մըն ալ Սողոմոն արթնցաւ խոպոտ նեճի-նեճի-ն ականջին տակ: Օրօրոցը բարձր էր ու երգողը շէր տեսնուեր: Մէկ տարեկան մանչուկը զլուխը վեր վերցուց բարձին վրայէն ու տեսաւ ծեր կին մը, աչքը դոյ ու երգը՝ նեճի-նեճի: Այնուհետեւ մանչուկը միշտ լսեց խոպոտ ձայնով օրօրոցի երգը: Մօրը դէմքը շոտեց իր յիշողութեան մէջ. Շատ էր փոքր, դրկից ծծմայրերը մօտեցուցին իրենց ծիծը շրթունքներուն. թէեւ ծծեց կաթը, բայց համ չառաւ օտար կաթէն: Մնաց աղաղուն, բարալիկ, դունաթափ այտերով: Որքութեան դառնութիւնն էր որ կը ծծէր...

Տոտիկ-տոտիկ քայլերու հետ անեցան տարիքն ու կլկլան ձայնը: Թա-  
ւիչ ախրուքին մը իջաւ գէժքին, որ հետզհետէ հօրը պիտի քաշէր: Հօրա-  
քրոջ անձպիտ նայուածքը, որ փակ կոպերու տակ շատ խոժոռ կը թուէր —  
Սողոմոնին մէջ վերածուեցաւ ակնածանքի: Պառաւէն սորվեցաւ լայկան տա-  
ղէր, որսնք մայրենի լեզուով շէին երգուեր: Հօրը ներկայութեան, գնաց  
նստիլ անոր ծունկերուն եւ խաղալ պէխին հետ: Ու իմաստէ անհասկնալի  
ՅէՈր-ՅէՈր երգնց հօրը քիթին տակ: Հայրը սեղմեց կուրծքին ու պաշիկ տը-  
ւաւ: Սողոմոնը քաջալերուեցաւ ուրեմն: Կրկնեց հօրաքրոջ երգածը ու քնա-  
ցաւ անոր գոպին մէջ: Ու հետզհետէ մեծցաւ. քայլերը առոյզացան. կէս դըր-  
կըւած, կէս քալելով հօրաքրոջ թաթը բռնած դնաց եկեղեցի: Հինդ թէ վեց  
տարեկանին հայրն էր, որ այս անգամ թաթէն բռնած տարաւ տուաւ դըպ-  
րոց: Իսկ յետո՞յ:

— Գէորդ աղա, մանչդ լաւ ձէն ունի. տուր դպիր...  
— Տէր-Հայր, տուի քեզ փէշքաշ. մեղք չեմ գործեր...:

Այնուհետեւ տոնական եւ Կիրակի օրերուն՝ Սողոմոն գնաց եկեղեցի,  
լապիկ հաղաւ, ճերմակ խաշանիչը կռնակին: Եղաւ պտիկ դպիր: Սկիզբնե-  
րը կէս ձայն հանեց, որովհետեւ շարակոնները անըմբռնելի էին: Սերեց մէ-  
կը անոնցմէ միայն: Իր բնութեան, սիրտին մօտ էր այդ երգը, տրտմաթա-  
խիծ, աղաչական: Ու օր մըն ալ հնչեց իր բարակիկ, քաղցրանուշ, սուր  
ձայնը:

— Սո՛ւրբ, սո՛ւրբ... սո՛ւրբ...

Հայրը ետեւի նստարանէն հպարտացաւ իր տղեկին ձայնով: Աչքերը  
յառեց գմբէթի տակով գէպի երկինք: Միտքն ու երեսակայութիւնը թափան-  
ցեցին գմբէթին թանձր քարեղէնութիւնը, սլացան վեր, վեր դէպի Աստուած,  
որ յերկինա էր: Կարօտի, ինքնուրացման ձայնը մէջէն կաղաղակէր:

— Մնայիր, թաղուկ ու լսէիր տղուդ «Սո՛ւրբ-սուրբ»-ը, ապա երթա-  
յիր. սիրտս չէր մխար. ամժա՛ դացիր, շո՛ւտ վացիր, անձուրաղ մնացիր...:

Սողոմոն գնաց դպրոց՝ օրով մեծցաւ. մտաւ եկեղեցի՝ շաբաթով մեծ-  
ցաւ. տան մէջ ան ամէն օր քիչիկ մը աւելի լրջացաւ: Ու հայր ու որդի —  
մէկը հետզհետէ կոճղի նման շորանալով, իսկ միւսը՝ դալար շի՛ֆ անուժով՝  
եղան քով-քովի, երգեցին միասին ու շատ յանախ թախտելով լոց լացին.  
մէկը իր թագուկին յիշատակը ողեկուէրով, իսկ միւսը՝ մայրական կարօսը  
չկրնալ ստնելով...:

Եւ երբ կոճղը մսխրանալիք փայտ դարձաւ, Սողոմոն կը հասնէր տա-  
սը դարունին ծայրը: Հօրաքրոյրը գինք առաւ գիշեր մըն ալ ծոցը. «Հայրիկդ  
գնաց երկինք, որ մամադ բերէ՛ դէ՛, քնացիր իմ անուշիկս. վաղը կը մեծ-  
նաս. մեծ մարդ կը դառնաս... իսկ հիմա քնացի՛ր, քնացիր...»: — Ու լոց  
մը, որ աղիքներ կը փոքրէրէր:

— Իսկ դուն, հօրաք, ինչո՞ւ կուլաս...:  
— Ես չեմ լար, որբու՛կս... կ'աղօթեմ, ա՛հա՛...:  
— Ինչո՞ւ ըսիր որբուկ, հօրաք: Ի՞նչ ըսել է որբուկ...:  
— Է՛հ, երբ մեծնաս, կ'ըսեմ. հիմա քնացի՛ր, քնացիր...:

Կեանքի եւ մահուան օրէնքով ու կնոջ թողած պարագէն վշտահար,  
Գէորդը շփմացաւ. կ'ուզէր իր թագուկը շուտ տեսնել. աճապարեց. անդի-  
տացաւ, թէ որբ ու անտիրական կը ճգէր Սողոմոնը: Հօրքուրը ի՞նչ կրնար  
ընել միտակը: Աչքի լոյս ալ լուսնէր խեղճը, որ կարենար ժպտիլ տղեկին,  
երբ ցաւ իննար անոր սիրտը...



Յիսուսն տարով էտեւ դացող վերյուշը շատ բան չէր գտներ արձանազրելու: Սողոմոնը, որ հօրաքրոջ մօտ «ձագուկ» էր կամ «որբուկ», տասը-տասնամէկ տարեկանին ձղեց դպրոցն ու ընկերները եւ եղաւ հոս-հոս աշկերտ, շրկիր տղայ եւ կիրակի կամ տօնական օրերը «պալիկ» դպիր: Փոր մը հացի համար՝ փողոցներուն քարը մաշեցուց. մաշեցան իր կօշիկ-մաշիկներն ալ. յաճախ հոտարողիկ մնաց. բայց մէկ փարան հասցուց կոյր հօրաքրոջ: Անանային ցուրտ օր մը ծնած էր. նիհար, շլեցուող մարմինը վարժ եղաւ եկող ցուրտերուն: Տասներկու տարեկանին զգաց, որ ասք ամառ մըն էր, երբ զինք տարին մարդիկ կեցուցին եկեղեցիին բակը, ուր բերուած էին իրեն նման ուրիշ տղաք եւս:

Եկեղեցիին բակին մէջ կանդնիրը անկիւնազարժ մը եղաւ Սողոյի որբ-մանկութեան մէջ: Աստուածածնայ տօնին առթիւ, երբ պիտի օրհնուէր խաղողը — Քիւթահա հովուական այցելութեան կու գար Գէորգ կոչեցեալ վարդապետը: Տուներէն ներս հայուն բերկրանքը ինկաւ, թէ վարդապետ մը պիտի պատարագէր Ս. Թաղէոս եկեղեցիին մէջ: Ժամուն գաւթիքը բերնէ բերան կը յորդէր հայութեան: Քաղաքին մէջ միակ վայրն էր, որ կրնային մարդիկ խոնուիլ եւ ակունջի ետեւ վախ չզգալ: Խորանին առջեւ մտնելուն լոյսը կ'արցունքէր ու կը դողար վարդապետին թաւ ձայնէն: Սողոմոն դըպրաց դասին մէջ մանրուկ բարձունք մըն էր. հազած խաշակիր սպիտակ շապիկը, ակնապիւղ կը գետէր պատարագիչ Հայր Սուրբին դէմքն ու լայն ուսերը, ինքն ալ ունենալով դողէն մոմի լոյսերուն: Հրեշտակներու անխայտ թեւեր կը ճօճէին խունկէն բարձրացող հոտէն պինով: Գինով էր նաեւ Սողոմոն, որուն ձայնը կարկաշատ աղբիւրի պէս կ'իշխէր շուրջը թաւալող թաւ շնչաբերուն:

Գէորգ վարդապետին միտքին մէջ յանկարծ կ'արթննար զեւտի մը սաղմը: Սողոմոնին կլկլան, մեղեդիական ձայնը կը թուէր մղիչ ուժ մը.

— Այս տղուն ձայնը զանգակ է. էջմիածինը պարտական կը մնայ ինձի, եթէ հետս տանիմ զ'նք...:

«Ի սմանէն»-ի դողող թաւա կոշիկն համբնթաց, Գէորգ վարդապետին միտքը թափառեցաւ հեռանկարի մը պատրանքով: Սողոմոն այդ պահուն կ'աղերսէր.

— «Սա՛ւրբ, սա՛ւրբ... սա՛ւրբ, Տէ՛ր զօրութեան»...  
 — Ապրի՛ս, տղաս, քու տեղդ սուրբ տաճարին մէջ պէտք է ըլլայ...  
 Մեղք է քեզ հոս թողուլ, որ կորսուիս... յաւիտեան...:

Պրկուած, թրթուռն, թովիչ դող մը կ'անցնէր անա ներկաներուն մարմնէն. փոճկուն լրթունքներ, շնչացող փափսուքի ընդմէջէն լացի շիթեր ու ո՛րբ տղայ մը. զիմացը պատարագիչ վարդապետին փոխն ի փոխ ակնարկին տակ ինկած, սեւեռուն...:

Ներկաները Ս. Թաղէոս եկեղեցիին նուիրեալ դպիր կ'ընդունէին իրենց քաղաքին ձայնեղ տղան: Հպարտ էին սնով, երբ կիրակի էր կամ տօնական օր. պարզ օրերուն՝ թաղուկի որբուկը, զոր յաճախ կ'անտեսէին: Սակայն, առաջին ակնարկով Գվարգ Հայր Սուրբը պանձ մը գտնողի պէս խանդավառուեցաւ.

— Արդեօք, պարտականք ունի՞ սա մանչուկը, — կ'անցնէր միտքէն: Ներկայ հաւատացեալ ժողովուրդին յուզումնահար ակնարկէն դատելով կ'երկմտէր.

— Չտան պիտի, որ տանիմ հետս... :

Բայց լաւատես յոյս մը կը շերմացնէր սիրտը .

— Կրնան անմիջական ժօտիկ պարագաներ չգտնուիլ . այն ատեն դիւարին կ'ըլլայ տանիլը... :

Պատարազիչ Հայր Սուրբը ուրկէ՞ իմտնար, սակայն, որ «ԱՄՂԻՐՔ-ԱՄՂԻՐՔ» երգող տղան որը էր ու աղքատ տան ճրագ : Եկեղեցիէն եւ դպրիկի շտապիկէն դուրս մինակ, տարեկից աղջիկներու մօտ ամչկոտ, փախստական : Անոնք օրիւր չէին տաքցնէր վրան . մանկական անմեղ տարփանք մը կը խուսափէր անոնց զգացումէն : Սողոմոնին ֆիզիքականը պատրանք չէր կրնար սնուցանել : Աղջիկները կ'անցնէին քովէն զինք անտեսելով . անձնատիրութիւնը կը թելադրէր որ ըսէին .

— Սա՛, այն ազան էր, որ եկեղեցիին մէջ «ԱՄՂԻՐՔ-ԱՄՂԻՐՔ» կ'երգէր... :

Նոյն էր վերաբերումը ուրիշներու, աւելի ժեծ դիրքով կամ տարիքով մարդոց : Ասոնց համար Սողոմոնը ջրկիր տղայ էր կամ մանր գործարքներու աշկերտ : Որո՞նք հոգը, որ ան ապագայի փայտն ձիւքեր կը ծրարէր համեստ Հազուատին մէջ կամ փոքրիկ հոգիին խորը... :

— Անունը ի՞նչ է, — կ'անցնէր հարցումը սեւեռաբեր Հայր Սուրբին միտքէն :

— Սողոմոն՝ . անցիր ձախ, — զպրաց դասէն մէկը ակամայօրէն պատահանած կ'ըլլար Հայր Սուրբի հարցումին, երբ կը թելադրէր տղուն քիչ մը տնդին շարժիլ :

Գէորդ Վարդապետ երկար ճամբայ ունէր կտրելիք : Կ'երթար էջմիածին հայրեկոպոսանալու : Յաջորդ օրը խնդրեց քաղաքէ երեւելիներէն ժամուն բակը հաւաքել զաղութին որբերը, հօրմէ-մօրմէ զուրկ տղաքը : Բերուեցան քանիչ չափ մանրուկ տղաքներ, մակաղեցին բակը : Հայր Սուրբը չզարմացաւ, երբ անոնց մէջ տեսաւ Սողոմոնը : Սակայն յայտնի էր իր զժպտունութիւնը .

— Այսքան որբե՞ր կան միթէ՞ ձեր մէջ . հողացողներ ունի՞ն . օ՞չ . ինչպէ՞ն թէ ոչ . աղդին գաւակները կը նկատուին, ձերբ՝ նոյնպէս . շահագրք թրեկց ապագայի մասին :

Հարցումներու ճամբով Գէորդ Վարդապետ պիտի հաստատէր անգիտութիւնը մայրենի լեզուին : Բացառութիւն մը չէր նաեւ Սողոմոնը, որ ունէր մանրակազմ, գալկադէմ երեւոյթ մը . լաւ չանուածի սուր զիթ եւ խոր նայուածք : Առաջին ակնարկով ոչ համակրելի, ուրացուելիք տղայ մը, բոլոր իր բարատակիցներուն մէջը՝ կորսուած սրբութիւն :

Գէորդ Հայր Սուրբ շեշտը դրաւ մայրենի լեզուին աղքատութեան վրայ : Կը հասկնար վիճակը տեղացիներուն : Կզգիացած, խառն է խուռն՝ յոյն-թուրք բնակչութեամբ շրջապատուած, ֆիւթա՛խայի հայութիւնը մաշեցուցած չէր իր լեզուն, բայց անոր վրայ կապել տուած էր ժանգ մը, տկամայ, դուրսի օտար մարդոց երեսին նետուած իրրեւ չթմեղանք : Հայերէնը տօնական օրերու պէս եղաւ հազուապէս գործնական լեզու . հոգին ու երգը սակայն, պահպանեցին զողթանեան բարձն ու երազները : Սողոմոնի մանկութեան՝ Ձարքօծիքը հոն նշոյլ մը չէր ձգած : Բիւթա՛խան Երկար եւ առոյգ թեւեր չունէր, որ գրկէր Պոլիսն ու Թիֆլիսը :

Գէորդ Վարդապետ բաւականացաւ կրօնականով .

— Գոբիստոսի գառները, ձերն ալ են . եղէք բարեխնամ անոնց հանդէպ... :

Իր զննական ակնարկը դրու ժամուն բակը հաւաքուած տղոց վրայ, այնպէս, իրբեւ մտապործ մը, որ ուղէք հօտէն դատել ամէնէն ծանր ոչխարը: Կլորայտ, երկարաձիւղ, կարմրաթուշ ու դարկազէմ զէմքեր կը տողանցէին իր նայուածքին տակ: Կը տեսնէր կեղտը, որ կեղեւ կապած էր ոմանց ոտքերուն. ջուր չտեսած երեսներ. սանտրէ շանցած գլուխներ, տխուր, սուր նայուածքներ, ուր անասնական վախ մը կը դիտուէր, երբ Գէորդ վարդապետին սեւեռուած ակնարկը կը խորանար անոնց մէջ:

Սողոմոնի վրայ Գէորդ վարդապետին նայուածքը մեղմօրէն սայթաքում ունեցաւ զէպի ետ.

— Սա՛, առջի օր եկեղեցիին մէջ երգող տղան չէ՞...:

Տղան զգաց չհասկցուած զող մը. վախի եւ ուրախութեան խառն ջերմութիւն մը պատեց մարմինը: Ու աչքի տակէ, ինքնակոչ տուաւ պատասխանը.

— Հա՛, ես էի...:

— Ան է, Հայր Սուրբ, — հաւանութիւն տուաւ քահանան, ձեռքերը պահած սքեմին ծալքերուն մէջ:

— Ան՞ ենը:

— Սողոմոն...:

— Ապագային կը դառնայ Սողոմոն Իմաստուն, — միջամտեց Քիւթահայի դպրոցէն՝ ուսուցիչ մը:

— Անհաւանական չէ, — ժպտեցաւ Գէորդ վարդապետ, շծանարարեանքով ժօրուքին ձեռք նետելով:

Կէսօր էր: Նշան ըրաւ, որ կրնային ցրուիլ տղաքը՝ իրենց առնները դառնալով.

— Սողոմոնը թող մնայ. եթէ պարագաներ կան, — նո՛յնպէս, — եղաւ վճիռը:

Յրուեցան բոլորը: Ժամուն բակը մնացին Սողոմոնն ու իր հօրաքոյրը, որ կանչուած բերուած էր մօտիկը տղուն: Գէորդ վարդապետ դարձաւ կնոջը.

— Ի՞նչը կու գաս, մայրի՛կ:

Կինը հարցումը չէր հասկցած — լռեց եւ շունեցած աչքերը յատեց դեմին:

— Հօրաքոյրն է, Հայր Սուրբ, — միջամտեց քահանան:

— Ըսէ՞ք թող տանի տղուն վրան գլուխը շտկուէ. վաղը հետս պիտի առնեմ սանիմ... Էջմիածինի մէջ մարդ կը դառնայ. որք չի՛ մնար հոն...:

Սողոմոնին հօրաքոյրը շառարկեց, երբ իրեն ըրին թեւադրանքը: Մընաց կանգնած. պահ մը իր մինուծար դատուկէն դատուելու վիշտը ծառայաւ մէջը: Ո՛վ պիտի երգէր այնուհետեւ եկեղեցիին մէջ անուշ-անուշ ծայրնով: Քաղաքին մեծերը պիտի ձգէին, սը Հայր Սուրբը տանէր Սողոմոնը: Առանց դիտանալու՝ լաց ու կոծ փրցուց եւ փէշը տարաւ փակ աչքին:

Գէորդ վարդապետ նեղութիւն զգաց. պահ մը ուղեց խիտ ըլլաւ. պոռաւ կնոջ վրան. բայց, մեղմութեամբ էր, որ կրկնեց.

— Աւ տար, լուս՛ վրան գլուխը. հազուեցուր ինչ որ ունի մաքուր բան. չես զղջար եւ դուցէ փառք տաս Տիրոջ, որ նախանձամութիւնը դիս հոս բերաւ օր մը...:

Կինը բռնեց Սողոմոնին թեւէն:

— Հասկցա՞ր, մայրի՛կ:

— Հասկցայ, Հասկցայ, Հայր Սուրբ. ի՞նչպէս թէ չհասկցայ. պիտի տանիս հետդ. մեծ պատիւ է Սողոմոն եւ ինծի Համար, նս քու ոտքի տակի հողը ըլլամ. իմ գառը քեզ մատաղ. տար, տուր նայնա վարժարան... Ողորմած հայրը ըլլար, իմ անպին քորը մտոր՝ երկինքով մէկ կ'աղօթէին քեզ Համար... :

Ձկրցաւ շարունակել. սիգնակեցաւ. արցունքը խեղդեց բաւերը, որոնք անիմաստ դարձան :

Հայր Սուրբը դիտեց պահ մը լացող եւ տղան գիրկին մէջ առնող հօրաքոյրը. իր նայուածքն ալ ջրոտեցաւ. չփորձեց շորցնել. թաշկինակը միայն հասաւ քիթին ու պիտիին : Ու քիչ մը աւրուած ձայնով վերջակէտ ուղեց դընել ղէպքին :

— Դէ՛. սնացէք եւ հարկ եղածը ըրէք. ու չմնանք վաղ առաւօտ... :

— Ոտքդ պահենք, Հայր Սուրբ. տար մեծ մարդ ըրէ, որ երկինքի մէջ հարսս ու եղբայրս հրճուին... Աստուած թող լուսաւորէ անոնց հոգին... :

— Ամէ՛ն, — վրայ տուաւ Գէորգ Վարդապետ, խաչ հանելով Սողոմոնին գլխավերեւը :

Հօրաքոյրն ու Սողոմոն, զիրար զրկած մեծ ու սոքր, դրկից երկու ըլրապագաթներու նման տեղաշարժ եղան ղէպի ժամուն բակին դարպասը : Կոյր հօրաքոյրը կը տանէր Սողոմն եւ իր անլոյս աչքերուն մէջ ունէր պատկերը, այժմէն, ապագայ կոմիտասին... :

Ս. Փ.

(Շար. 1)



## Անկողնուս հետ

Ամէն գիշեր գալիս եմ, սիրտս թափուր ու նկուն,  
Գալի՛ս եմ ես թաղելու քա գրկի մէջ մայրական,  
Ականջներս խժալուր բիւր ձայներով ակազում,  
Ու՛ աչքերս, աչքերս՝ երկու ջահեր հուրհրան:

Թէժ խոհերից հրաբոյր գանգիս սափորը նախած՝  
Ձեռներիս մէջ՝ ինչպէս հին իւզն սպառուած մի կանթեղ՝  
Գալի՛ս եմ ես դէպի քեզ՝ դիպակագարդ գիրկդ բաց,  
Որպէսզի ինձ առնես դու թեւերի մէջ քո անմեղ:

Բարձր քա մերթ դարձաւ քա խորհուրդներիս բեռան տակ,  
Խոնջ գլուխս չարչարեց ու իմ հոգին մաշեց լուռ.  
Ու մերթ եղաւ երկնանեմ երազներիս օրօրան  
Ու ընծայման մի կայան ու գահ սիրոյ մի մաքուր:

Ահա՛, եկել եմ նորէն ես այս գիշեր անձկօրէն  
Փնտռելու գիրկդ բարի՛ խորհուրդներիս հետ մեռակ.  
Սիրտն ու հոգին իմ յոգնած ու յօշոտուած վատօրէն՝  
Բերե՛լ եմ քեզ փայփայես, դու մտերիմդ իմ միակ...

ԱՐՄԱՆՏ

ԹԼՀՐԱՆ



4. ՄԵՆԵԱՆ

Լ՛ Ա Ղ Մ Ե Ն Ի Է Ն



Երկա՞ր թափառումներու շարք մը եղած էին իր մանկութիւնն ու պատանեկութիւնը:

Հայրը, տրապիզոնի հիւտն մը, սպաննուած էր տարագրութեան առաջին օրերուն՝ քուէկով ուրիշ հայերու հետ: Մայրն ու քոյրը կորսնցուց Տրապիզոնէն Երզնկայ ճամբուն վրայ: Մնալով առանձին՝ փախաւ կարաւանէն: Դեղերեցու դիւղէ գիւղ: Մինչեւ Զինադադար ծառայեց զիւրտ գիւղացիի մը քով: Եւ յետոյ, յաճախակի ծեծերէն ընդզգած՝ գիւղեր մը «առաւ քալեց» հասնելով Սերաստիա: Նախ՝ տան մը ջրկիրն էրաւ: Յետոյ՝ սրճարանի մը աշկերտ: «Աւելի՞մ» անուանեց զինք սրճարանին տէրը: Եւ որովհետեւ օր մը առաջարկեց թիփատել, «Հայն ու քրիստոնեան արթնցան մէջը»: Եւ, այլեւս վարժ՝ ամայի ու երկար ճամբաներու դժուարութիւններուն, «կծկեց» Սերաստիայէն եւ, շաբաթներ դեպերիլէ ետք, շունչը առաւ Պոլիս:

Երկու շաբաթ քնացաւ փողոցներու անկիւնները: Առաւուտ մը Հայ մը առաւ զինք եւ որբանոց տարաւ:

— Ուհո՛ւ, — կը պատմէր յաճախ, — թրքախօ՞ւր կ'ուզես, թիփատուածը կ'ուզես... Ոմանք ալ «թուրք ենք» կը

պոռային եւ կ'ուզէին փախչիլ: Մեր վերայ դրած էին սուրբսրբ մէկը: Յօնքերը պատած՝ «նստեցէ՛ք, էլէք»: Քէյ-Փիա չեկաւ: Տարիքով քիչ մը մեծ էի: Զգեցի որբանոցը հեռացայ:

Քանի մը օր բեռնակրութիւն Ղաւթիոյ քարափը: «Ջուրի պէս» քրտերէն կը խօսէր: Եւ քիւրա բեռնակիրները օդնեցին իրեն՝ Քիւրա կարծելով: Պայրամին օրը ուղեցին նամագի տանիլ: Մերմեց մէ անկէ ետք «նեղ եկաւ» քարափը: Երեկոյ մը, յուսահատ, մտաւ Փրանսական նաւ մը: Մովուն բացերն էին, երբ բռնեցին զինք:

— Հա՛յ եմ, — ըսաւ կամբողջին վրայ շրջող հայու մը, — ըո՛հ սա մարդոց, թուրքերէն փախայ:

Եւ խաչակնքեց: Նաւապետը ժպտեցաւ: Քաջալերուած այդ ժպտէն՝ առաւ նստարանին վրայ թողուած աւել մը եւ սկսաւ աւելի:

— Պօ՛ն, — ձայնեց նաւապետը:

— Պօ՛ն, — գլուխը բարձրացուց Սերոբ: Նայեցաւ նաւապետին եւ աջ փովը ծեծեց փորը՝ ըսել ուզելով, թէ պարապ է...

Նաւապետը շրջապատեր էին զինք: Անոնցմէ մէկը բռնեց թեւէն եւ իջեցուց

վար: Սերոբ կարծեց, թէ «ծակը» պիտի նետէ: Նուազը զինք տարաւ սրահ մը, նստեցուց սեղանի մը առջեւ եւ, զնկելով երկու պնակ կերակուր:

— Մտ'նձ, — ըսաւ ժպտուն:

Սերոբ կը նայէր նուազին՝ անակընկալ հիւսարհութիւններով ապշած:

— Մտ'նձ, — կրկնեց նուազը՝ առջեւը զնկելով նաեւ պնակ մը խաղող:

Սերոբ յիշեց իր մանկութիւնը: Տո՛ւնը հայրենի: Ու տան սեղանը: Տարիներու աղօտած, այլ քաղցր անցեալ մը յանկարծ զայնջնուացաւ երեւակայութեանը մէջ:

— Փա՛ռք քեզ, Աստուած, — գոչեց անզգայարար՝ յիշելով մօրը բառերը: Եւ կուշտ ու կուռ կերաւ:

Աստուած մը, մթնշաղին, հասան Մարտէյլ: Ելաւ դուրս: Հոն հոն՝ դտաւ հայոց եկեղեցիներ: Կոնծած երեսներով մէկը կար գրասենեակը: Նայուածքովը վերէն վար շփեց Սերոբը եւ, չոր ու կտրուկ,

— Ձեռքդ ռաքդ կը բռնեն, զնա՛ աչխատէ, — ըսաւ, — Վիէօ Փոռ զործ կը դանտ:

Քանրպիէն հասեր էր, երբ երկու հայերու խօսակցութիւնը լսեց:

— Եի՛փ շիտակ էջի՛ր, Վիէօ Փոռը հոն է, — ըսաւ անոնցմէ մէկը:

Իջնելը զիւրիւն, բայց ո՛չ լեզու զիտէր եւ ո՛չ ալ մարդ կը ճանչնար: Նուահանգիտի աղմուկը յիշեցուց Ղայաթիան: Անթուրիւնը կը դալարէր աղիքները: Նուուն լեցուն պնակները զարման աչքերուն առջեւ: Եւ յանկարծ յիշեց հօրը մէկ խօսքը, — «քարէն հա՛ց պէտք է հանել»: Ծոնեցաւ, առաւ քար մը եւ ձեռքով զնա՛ց պիտի հաննձ» ըսաւ բարձրաձայն: Եւ որոշեց զգործին հաստը բարակը ճնայիլ: Քարափին վերայ տապակած ձուկի բոյրը լեցուց ունեղբերը: Երիտասարդ, լեցուն ու կարմիր թուշերով կին մը, ժանեակներով երիզուած սպիտակ դիւարի մը դիմուն, կեցած էր ճաշարաններէն մէկուն առջեւ: Մօտեցաւ: Ձուկի պարպուած սակառները դրուած էին դետիւնը: Ձաննը մէկ տո

մէկ գրաւ իրարու վրայ եւ, դառնալով կնոջը,

— Պօ՞ն, — հարցուց ժպտուն:

Սերոբի առոյգ կազմը, խաժ աչքերն ու ջլապիւնդ բաղուկները հանճիթ թուցան կնոջ,

— Մ'է ժամքի՞՛յ, — ըսաւ մօտենալով, — վէ՛օ դիւ մամժէ:

«Մանժէ»... Սերոբ յիշեց նուազին բառը,

— Ուի՛, — պատասխանեց:

Գիշերեց ճաշարանին սուղեւ՝ կրոնակն ու գլուխը տուած սակառներու դէզին: Քանի մը օր ետք ճաշարանին ետեւ անկիւն մը տուին իրեն՝ բարակ ներքնակով մը եւ ծածկոյթով մը: Եւ երբ գլուխը պիտի դնէր ներքնակին եւ ծածկոցը պիտի քաշէր վրան, մտաբերեց իրենց տան այժ սենեակը, ուր կը պտուկէին: Նաեւ մա՛յրը, որ անպայման ըսել կուտար «Հայր մեր»ը եւ կը ծածկէր քրոջն ու իր կոնակները:

Մոռոյք մը պատեց հողին: Նստած՝ աչքերը փակեց պահ մը՝ վերապրելու համար կորսուած ու անլերագարձ քաղցրութիւնը իրենց տանն ու իր մանկութեան: Արտասուքի շիթեր կը դուրսէին այտերէն վար: Յիշեց մօրը ձայնը եւ անոր սփին լոյսանքը իր դիմուն: Եւ, խորապէս դառնացած ու վրդովուած՝

— Ո՛րբ... ո՛րբ, — գոչեց՝ այդ եռատառ բառին մէջ խտացնելով դրկեցութիւնը եւ լքեալի տառապանքն ու կակիծը:

Եւ, նայուածքը յառած պատին,

— Ո՛րբ, — ձայնեց կրկին, — ադ դո՛ւ՛մ որբ...: Ողջ մնացողները փախան... Հոն մնացողները կը սանճկան... Աստուածմէ՛ ալ որբ մնացինք...

Բայց տառապանքին ու դրկանքին մէջ կոփուած այս տղան յանկարծ ակարուրեթիւն մը ունեցաւ.

— Մեղա՛յ... մեղա՛յ... — մըլմընջեց, — հայ քրիստոնեայ եմ, չէ՛...:

Եւ ուղեց ապաւինիլ Աստուծոյ: Ակնարկը ուղղեց վեր, խաշակեցեց եւ փորձեց սղօթել:

— Հայր մեր որ յերկինս ես...:

Բայց շիշեց յաջորդող բառերը: Եւ,

ընդզգած՝ ինքդինքե՞ն, թէ Աստուծոյ զէ՞մ:

— Ինչի՞ս մեր Հայրը, — ձայնեց դառնութեամբ, — ինտո՞ր մերը կ'ըլլայ այդ Հայրը, որ ձգեց որ ջարդուինք... Եւ, քաշելով ծածկոցը գլխուն, փակեց աչքերը:

Օր օրէ ընտելացաւ ճաշարանի մարդոց ու աշխատանքին:

— Սեղո՞ք... Սեղո՞ք... — Հեղինեց օր մը ճաշարանին տէրը, — ո՞չ բա ծօլի... Սերժ... ուի՞...:

— Մուտ՞, — դժգոհեցաւ Սերոբը, — մուտ Սե՛րժ... Եօ՞... Սերաստիա՛ Սեղիմ, Մարտիրոս՛ Սերժ... Անունո՞վ ալ րէզիլ պիտի ըլլանք... Նօ՞, մուտ առ մտնի՛ն...:

— Ալոս Աղմէնի՛ն, — ժպտեցաւ ճաշարանատէրը, — տ'ախօ՞ւ...:

«Տեղս դէ՛լ չէ, կը խորհէր Սերոբը, ուտել խմել, պառկելիք անկիւն մը, քանի մը Ֆրանսէ ալ կու տան կոր»: Թէեւ աչքը դո՛ւրան էր: «Քիչ մը վարժուիմ լեզուին, կը մտածէր, մարդագարի գործ մը կը գտնեմ»:

Միկու օրէ ի վեր ճաշարանին տէրը կր բացակայէր: Երեկոյեան՝ կինը, մօտենալով Սերոբին,

— Աղմէնի՛ն, — ըսու ժպտուն, — առանձին եմ տունը, այս պէշեր պիտի դաս ինծի Հեա:

Սերոբ շնորհակցաւ, թէ ի՛նչ ըսել կ'ուզէ:

— Ինծի՛ Հեա, — կրկնեց կինը՝ մեռքը գնելով Սերոբի ուտին, — մեր տունը:

— Քեզի Հէ՞տ, — խոշոր բացաւ աչքերը Սերոբը, — Եօ... Եօ... մուտ Եօ, — ձայնեց այլայլած:

Տունէն, քաւառէն ու անոր բարքերէն մնացած բան մը կար իր մէջ: Այնքան որ՝ վախ մը գզաց այդ կնոջմէն: Եւ որոշեց «օձիքը ազատել»:

Քանի մը օր ետք Աւինեօնէն եկած Հայ մը կը ճաշէր ճաշարանը: «Աղմէնի՛ն»ը ուշադրութիւնը գրաւեց:

— Դուն Հայ ես Ծօ՛, — Հարցուց: — Ուղի ու ծուծովս:

— Ո՞ր տեղացի ես:

— Տրապիզոնցի:

— Հա՞... Աւինեօն տրապիզոնցի Հայ մը կայ՝ Ալթունեան:

— Ալթունեան՞, — պահ մը մտածեց Սերոբը, — մեղի դրացի էին... պապա՞ն է, թէ տղան:

— Պապան մեռաւ, տղան է:

— Գիրգո՞րը... ինձմէ մեծ է:

— Այո՛: Ինչո՞ւ կը շարաւրտուի հոս, Աւինեօն գործ կը գտնենք քեզի: Փապրեքան կ'աշխատիս:

Եւ միտան մեկնեցան Աւինեօն:

Յաջորդ օրը գործատունն էր արդէն: Այդ շրջանին մեծ թիւով Հայեր խոնուած էին Աւինեօն: Եւ շատերը կը բնակէին ընդարձակ տաղաւարի մը մէջ:

Հաստատակամ ու կորոյի, բայց միանգամայն Հեզ ու բարեացակամ՝ Սերոբ մէկ քանի ամուսնի ընթացքին ընդհանուր համակրանք ստեղծեց իրեն Հանդէպ: Եւ «Սերոբ աղբը խօսքը երկուք չէին ընէր» տողաւարը քնակող երիտասարդները, ինչպէս եւ՝ տարեցիները:

Կիրակի տաւառ մը իրեն ծանօթ Հայ մը սրճարան մասաւ, մօտեցաւ եւ, խորհրդաւոր շեշտ մը տալով ձայնին՝

— Սերժ, — ըսաւ, — այսօր Հայոց թաղաւորը պիտի դայ Աւինեօն:

— Ի՞նչ... — ապշած ձայնեց Սերոբը, — Հայոց թաղաւորը... Թաղաւոր ունինք մենք...:

— Այո՞... կէսօրէ ետք ժամը 7-15ին կը հասնի: Կայարան պիտի երթանք դիմաւորելու: Բոլոր Հայերը պէտք է հան ըլլան:

Սերոբ այլայլած ու ակնապէշ կը նայէր խօսակցին:

Եւ յիշեց Հանդիսութիւն մը, որ, տարիներ առաջ, Սերաստիոյ բոլոր Թուրքերը հաւաքած էր թաղապետարանին առջեւ: Ի՛նք եւս ելաւ սրճարանէն եւ մտաւ բազմութեան մէջ՝ յառաջանալով մինչեւ ստնդղամատերը, որոնց վրայ դորդեր փռուած էին:

— Փաշա՞ն, — գոչեցին:

Եւ ճեղքուեալ բազմութեան մէջէն յառաջացաւ զինուորականի հազարատով

մէկը, որուն կը հետեւէր շքախումբ մը: Ամբոխը կը ծափահարէր խելայեղ կերպով եւ «փաշա՛... պի՛ն նաշա...» ազգակը կը խլացնէր ականջները:

Սերոբ, անքթիթ ու շունչը բռնած, մնացեր էր անտարբեր:

— Ինչո՞ւ չես ծափահարեր, — խիստ կշտամբեց զինք թուրք մը, որ սրճարանին յաճախորդներէն էր:

Եւ, տեսնելով Սերոբի յամառող անտարբերութիւնը,

— Քեանփի՛ր, — գոչեց՝ շառաչուն ապտակ մը իջեցնելով երեսին:

Արիւնը խուժեց Սերոբին գլխուն: Լուս եւ զոսպում զայրոյթով մը վերադարձաւ սրճարան: Անկիւնը, առանձին, նստած էր աքորէն վերադարձած տարեց չայ մը:

— Գոցիր տեսա՞ր, — հարցուց Սերոբին՝ արճամարհանքի շեշտ մը ձայնին մէջ:

— Փաշա՞ն... տեսա՞յ... մէկ աչքը փառ է... Ատանկ փաշա՞ կ'ըլլայ...

— Դարեր տառ մեր թագաւորները կ'անցնէին Սերաստիոյ փողոցներէն, — հարուշեց ծերունիքը:

Սերոբ ոչինչ հասկեցաւ: Բայց այդ քանի մը բառերը դրոշմուկեցան իր յիշողութեան մէջ:

Հիմա, ահա, կրկին Հայոց թագաւոր:

Չոպանակէ մղուածի մը պէս՝ ընդոստ կանգնեցաւ: Հանգիստի օր ըլլալուն՝ ամէնքը տաղաւարն էին:

— Մտիկ ըրէ՛ք, — գոչեց՝ հազիւ մտած ներս եւ կանգնելով տաղաւարին մէջուկը, — մա՛րդ, կնի՛կ, աղա՛յ, աղջիկ՝ ամէնքդ ժամը վեց ու կէսին ա լա կառ: Հայոց թագաւորը դիմաւորելու:

Ամէնքը ապշած նայեցան իրեն: Պառաւնքը շարժուեցան: Մէկ քանի երիտասարդներ ծիծաղեցան՝ կատակ կարծելով: Բայց ոչ ոք տուարկեց: Սերոբի լուրջ դէմքն ու գոռ ձայնը լուսեան մատնած էր բազմութիւնը:

Երիտասարդներէն մէկը, մօտենալով Սերոբին, հարցուց, թէ ո՞վ է Հայոց թագաւորը:

Ինք գիտէ՞ր: Բայց չզղացուց: Եւ յիշելով Սերաստիոյ ծերունիին խօսքը,

— Դուն ինտո՞ր հայ ես քի, — յարեց, — չես գիտեր որ դարեր առաջ Հայոց թագաւորները կ'անցնէին Սերաստիոյ փողոցներէն...

Կէսօրէ ետք կայարանին առջեւ խրանքեր էր «ժողովուրդն Հայոց», — հրամարտուք, աղմուկ, իրարանցում, ծծկեր տղու լաց...

Սերոբ, կանգնած՝ վերի աստիճանին վրայ եւ ակնարկը սեւեռած բազմութեան, կը սպասէր անհամբեր:

Լսուեցաւ շոգեկառքին դղրդիւնը: Քանի մը վայրկեան ետք, մութ դոյն հագուստով, զիչ մը թիկնեղ, կարծիր ու լեցուն այտերով եւ ակնոցաւոր անձ մը դուրս ելաւ կայարանին դռնէն: Չայն շրջապատեր էին մէկ քանի Հայեր:

Սերոբ ակնարկը սեւեռեց նորեկին: «Հայոց թագաւորը» մտապատկերած էր յաղթահաւակ, հագուստին՝ ոսկեգոյն երկոյներ, փայլուն կոճակներով, սուրբ մէջքին եւ, անշուշտ, թագ մը գլխուն՝ ինչպէս տեսած էր, Աւինեօսի թագաւորանին մէջ, Փրանսացի թագաւորներուն նկարները: Նախ յուսախարութիւն մը ունեցաւ: Բայց այցելուին լուրջ դէմքը, սիրական ու տպաւորիչ արտաքինը, բարեւը՝ ծափահարող բազմութեան, եւ մանաւանդ Փրանսացի ոստիկանին զգատուի առջը փոխեցին իր տրամադրութիւնը: Բնազգարար կոճակուեցաւ եւ հետեւօրդներուն հետ իջաւ տատիճանէն:

Հիւրը շրջապատողներէն ա՛ն, որ առտուն Սերոբին տուեր էր լուրը, բազմութեան յանձնարարեց չհետեւիլ իրենց:

— Հապա ե՞ս, — հարցուց Սերոբ: — Դուն չարքային չես:

«Շարքայի՛ն» զարմացաւ Սերոբ՝ այդ բառը լսած, բայց անոր նշանակութեան անձանօթ ըլլալով, — ես հայ չե՞մ:

— Միայն ընկերներով պիտի երթանք ճաշի, — վրայ բերաւ խօսակիցը:

— Ես ընկեր մընկեր չեմ գիտեր, — յորեց Սերոբ եւ ընկերացաւ անոնց:

Սեղանին շուրջ ստեղծուած տաք մթնոլորտը հաճելի թուեցաւ Սերորի, եւ որովհետեւ միշտ լուռ կը մնար, այցելուն, ակնարկը ուղղելով անոր,

— Իս ընկերը ինչո՞ւ լուռ է մնում, — հարցուց, — Հայերէն չի՞ իմանում: — Գիտէ՞, — յարեց ներկաներէն մէկը, — Սերորը Քուրթիայէն փախած նախկին որբ մըն է:

— Ուրեմն որդեգրե՛նք, — կատակեց այցելուն՝ մտերմիկ շեշտով մը:

Սերորը չհասկցաւ ի՛նչ բան է որդեգրելը: Բայց, առանց զգալի ընելու, գաւաթը բարձրացուց եւ՝

— Հայոց թագաւորին կենացը, — առաջարկեց:

Ամէնքը ծիծաղեցան: Միծաղեցու նաեւ այցելուն:

— Կուսակցական միրտուեցայ դիւնիով եւ Հայոց թագաւորին կնքահայրութեամբը, — կ'ըսէր յաճախ Հպարտութեամբ, — չընդունեցին՝ ներս մըտայ, հիմա վունտե՛ն ալ՝ դուրս չեմ ելլեր:

Համազդեատի մը նման, որ, իրեն հետ, արամադրութեամբ ու վերաբերումներով որոշ չափով զկը կոճկէ՞ նաեւ զինք կրողը, կուսակցականի հանգամանքը աւելի՛ լրջացուց Սերորը: Իր ամէն մէկ ընթացքին համար ինքզինք հաշուետու կը նկատէր այդ հանգամանքին:

Հինգերորդ տարին՝ Հպարտակ ու նաեւ անձնական համեստ դործի մը տէր դարձաւ: Տուրքերու քննիչին զրազրուհին, որուն երբեմն կ'այցելէր Սերոր դործին բերումով, երիտասարդ, խօսուն եւ քիչ մը անհանդարտ աղջիկ մըն էր: Սերորը կռահած էր, թէ Տ'էզիբէ սովորականէն տարբեր վերաբերում մը ունէր իրեն հանդէպ:

Կր զգուշանար: Կը ջանար անտարբեք ձեւանալ: Բայց Տ'էզիբէի արտաքին շնորհները, ակնարկներն ու բառերուն ջերմութիւնը իր մէջ խլրտեցուցեր էին բան մը. զոր առաջին անգամ կը զգար կիսանքին մէջ: Երթ գրասենեակէն դուրս կու գար, կը կենար պահ մը եւ՝

— Սերո՛ր, — կը յանձնարարէր ինքզինքին, — պի՛նդ կեցիր, վիզիդ շուան շանցընէ՛ աս աղջիկը:

Այո՛, բայց Տ'էզիբէն հեռո՛հեռո՛ տեղ կը դրաւէր իր մէջ: Նայուածքը, ակնարկութիւնները, նոյնիսկ երբեմն ի՛րր թէ պատահաբար ձեռքի Հպումը իր ձեռքին, անդրադառնալ կու տային: Սերորի գեղուէչը հասակը, խոտ ալքերը՝ որոնք ներքին հուր մը կը մատնէին, առնական շարժումները եւ նկարագրի ուժեղ զիծերը հետաքրքրած էին Տ'էզիբէն:

— Ելալի նման չրթներ ունիս, — ըսաւ օր մը Սերորին՝ նայելով չրթներուն, երբ ստացական մը կը յանձնէր:

Սերորը չսեւլ ձեւացուց: Բայց իր ու անոր միջեւ ո՛րքան շեշտուեցաւ մտերմութիւնը, այնքան ուշադիր եղաւ իր հազուստ-կապուտին: Դարձաւ դուստլ՝ շարժումներուն մէջ: Եւ անդրադարձաւ, թէ անոր հաճելի ըլլալու տկարութիւնը ունի:

Իր այդ արամադրութիւնը աւելի՛ շեշտուեցաւ, երբ Տ'էզիբէ Կիրակի օր մը զինք հրաւիրեց իրենց: Առանձին էր: Եւ այդ առանձնութեան մէջ Սերորը, որուն համար վարանուծն օւ երկչոտութիւնը ըմբռնելի չէին, ինք իր մէջ սեղմուած մնաց: Մտածեց, թէ սխալ ըրած էր դաւով: Մոմը աւրող հաւատացեալի մը խղճահարութիւնը ունեցաւ: «Ես՝ Հայ, ան՝ Փրանսացի... ըլլալիք բան չէ՛», կը կը կրկնէր մտովի: Տ'էզիբէ կը դառնար անոր շուրջ: Կը կատակէր, Պահ մը նրատաւ քովը՝ տիւալիմ վրայ: Բունեց Սերորի ձեռքը եւ, միւս թեւովը օղակելով անոր վիզը, ուժգին համբուրեց չրթներէն: Սերորի կեանքին առաջին համբուրն էր: Եւ՝ առաջին հեշտանքը, որ զգլխեց զինք: Յնցուեցաւ: Շտաազունեցաւ: Ելաւ ոտքի՝ մէկուն նման, որ յանկարծ կ'արթննայ հաճելի երազէ մը: Բայց միանգամայն ընկճուեցաւ: Իրեն այնպէս թուեցաւ, թէ դաւանանս էր իր արեւա՛ն, Հօ՛րը, Ժօ՛րը, անցեալի՛ն: Մութը իջեր էր, երբ հետացաւ Տ'էզիբէն՝ իր հետ տանելով անոր սլացիկ ու նուրբ

մարմինն եւ շրթներուն պատճառած հեշտանքն ու խոտիքը...

Գիշերը սարդը չկրցաւ քնանալ: Ելաւ քանի մը հեղ: Ծխեց՝ մէկ զլանիկը վառելով միւսէն: Իրեն անբարոնէի կը թուէր, թէ աղջիկ մը ի՞նչպէս կրնայ ա՛յդ աստիճան համարձակ ըլլալ: Վերադրեց վարժութեան մը: Նեղուեցաւ: Անցեա՛լը: Ինք տուջի՛նն էր: Այդ մտածումը շարժարեց միտքը: Եւ կրկի՛ն անդրադարձաւ անոր օտարուհիի հանգստանքին: «Ո՛ւ, ո՛ւ, — գոչեց՝ կանգնելով սենեակին մէջտեղը, — ես էրիկ մա՛րդ եմ թէ ո՛ւ... Թո՛ղ պիտի չտամ որ չուանք անցընէ վրիս»...

Այդ կապը անտեսանելի մնացած չէր մէկ քանի Հայերու: Երեկոյ մը, զինիի գաւաթներուն առջեւ, թեթեւ ակնարկութիւն մը բրաւ տարեց ընկերներէն մէկը:

— Հայր ըլլալը միայն գաւակ ունենալը չէ, — ըսաւ մեղմ ու հատիկ հաստիկ, — տղաքդ միայն դէմքո՞վ պիտի նմանին ճեղի... Ազգը դուն ու ես պիտի պահենք...: Որքերը պիտի լեցնեն իրենց ծնողներուն պարագ ձգած տեղը...

Սերոբ մնաց լուռ: Մտնեբր սեղմեց ափին մէջ, կանգնեցաւ, գլանիկը ճղմեց մտքամանին մէջ եւ դուրս ելաւ:

— Յառաջիկայ կիրակի մօրս հետ զիւղ պիտի երթանք, — ըսաւ Տէգիբէ, երբ Սերոբ կրկին դացեր էր անոր քով: Կուզեմ որ մեղի հետ դաս:

Սերոբ չպատասխանեց: Տէգիբէ ելաւ ոտքի, մտեցաւ Սերոբին, բոպէ մը ականջ տուաւ նրանցքին՝ ուր ոտնաձայն չկար, շոյեց Սերոբի մազերը եւ՝

— Ամբողջ օրը միասին պիտի ըլլանք, — աւելցուց, — ծառերու ստուերներուն տակ... պիտի դաս չէ՛...

Տէգիբէի մօրաքրոջ տունն էր: Երկարիկանի չէնք մը պարտէզով, ուր պղաղատու ծառեր կային: Վայրը դեղեցիկ էր: Առաւ մը կը կարկաչէր քիչ անդին:

Հազիւ հասեր էին՝ ներս մտաւ երբտասարդ մը եւ համբուրուեցաւ Տէգիբէի եւ մօրը հետ:

— Չարմի՛կա, — ներկայացուց Տէգիբէ եւ սկսաւ շաղակրատել երիտասարդին հետ:

Սերոբի հաճելի շթուեցաւ համբուրուելը: «Մենք մեր քոյրերը չէինք համբուրեբք», մտածեց: Սուրճը կուլ տուաւ մէկ ուժպով: Եւ, ակունքերը սեղմած, մնաց լուռ:

Գիշ ետք եկան այր մը ու կին մը: Սերոբ ելաւ պարտէզ՝ սրտնեղութիւնը փարատելու համար: Գարձաւ անունըրուն շուրջ եւ կրկին վերադարձաւ սենեակ: Տէգիբէ կը շարունակէր շաղակրատել: Անդրադարձաւ, թէ Սերոբ սրտնեղած է: Ուղեց մօտենալ: Բայց ճի՛շդ այդ պահուն տանտէրը ներս մտաւ հաստակաւոր ու դեղանի երիտասարդի մը հետ: Տէգիբէ, տեսնելով դայն, յառաջացաւ՝ ժպիտ մը շրթներուն եւ համբուրուեցան զիչ մը անսովոր ջերմութեամբ: Եւ մինչդեռ Տէգիբէ ուղեց զա՛յն եւս ներկայացնել, Սերոբ ընդոտ կանկանեցաւ, խիստ ակնարկով մը վերէն վար շափեց՝ նախ երիտասարդը, յետոյ՝ Տէգիբէն, եւ նետուեցաւ դուրս: Սերոբի շառագունած դէմքը, պոստուած յօնքերը եւ աչքերուն բոցը անշարժացուցեր էին ամէնքը: Տէգիբէ վազեց հտեւէն:

Բայց Սերոբ հետացած էր արագ քայլերով: Նո՛յն թափով եւ հետիոտն վերադարձաւ Աւինեօն:

Պահ մը մտածեց երթալ սենեակ եւ հանդատանալ: Բայց այդ առանձնութեան շփոտահեցաւ ինքզինք: Յիշեց ընկերոջը խօսքերը: Եւ ուղեց միանգամ ընդմիջտ ազատիլ Տէգիբէէն, իր մէջի այրը, իր մէջի Հայէն հաք, ցցած էր դուրսը: Վերկաթը տաք տաք կը ծեծեն՝ մտածեց եւ մտաւ տաղաւարէն ներս: Դէմքը ունկր անսովոր արտայայտութիւն մը: Տաղաւարին աջ կողմը խմբուած էին մէկ քանի աղջիկներ, որոնցմէ մէկը՝ Վերդին՝ երեսնամե դոզունի ակնարկներ ուղղած էր իրեն: Առտուն՝ գործասուն, իրիկուան՝ տաղաւար, — տան աղջիկ նկատած էր զայն: Եւ ձիւտոնը Վրան է, կ'ըսէր յաճախ:

— Վերդի՛ն, — ձայնեց՝ ձօտենալով, — ջիշ մը կու գա՞ս :

Աղջիկը ձօտեցաւ : Սերոբ քալեցուց դայն իր հետ մինչեւ տաղաւարին դռնը, կանդ առաւ, եւ, պարզ ու կտրուկ՝ — կը կարդուի՞ս ինծի հետ, — հարցուց :

Վերդին անակնկալի եկաւ : Թէեւ դիտէր, թէ Սերոբ կատակող չէր նժան խնդիրներու մէջ, բայց վարանում մը ունեցաւ :

— Ինծի՞ հետ կ'ուզես կարդուիլ, — հարցուց շատազունելով յանկարծ :

— Հապա որի՞ հետ... Գնա՛ մօրդ հօրդ ըսէ եւ երկու ժամէն պատասխան բեր :

Թաջորդ օրը տաղաւարը ծանօթ էր նշանտուքին :

\* \*

Սերոբ մէկ քունի շարաթ խոյս տրուաւ Տէգիբէին հանդիպելէ :

Երեկոյ մը, Սէնթ Էթիէնէն վերադարձին, երբ կայարանէն դուրս կ'ելլէր, հանդիպեցաւ Տէգիբէին : Անտեսել կա-

րելի չէր : Զփորձե՛ց տլ : Եւ երբ Տէգիբէին, մտերմիկ ու ձեղմ, ուղեց իմանալ շարժումիթը իր ընդզուսին, — Կուզե՞ն ամալրասէ... ամի ամալրասէ... Ըօ՛, — գոչեց :

Յետոյ, ձայնը մեղմելով, — Տէգիբէ՛, — աւելցուց, — դուա ֆրանսէզ, մուա առմէթիէն... էմփոսիպլե՛... :

Սերոբ մանչուկի մը հայր էր արդէն, երբ իմացաւ, թէ Տէգիբէ կ'ամուսնանայ :

Նրեթական վիճակը լաւացեր էր : Շքեղ ծաղկեփունջ մը յանձնարարեց եւ զնայ եկեղեցի՝ ծաղկեփունջը տալով հայ աղջնակի մը ձեռքը :

Կեցաւ հրաւիրեալներու շարքին ետեւ : Երբ արարողութիւնը վերջացաւ, յառաջացաւ, ձօտեցաւ նորապսակ զոյգին եւ, աղկան ձեռքէն առնելով ծաղկեփունջը, երկարեց Տէգիբէին՝ շնորհաւորելով դայն :

Տէգիբէ, անակնկալի եկած, պահ մը ուղիղ նայեցաւ Սերոբին, յետոյ համբուրեց երկու այտերէն եւ, դառնալով ամուսնոյն, — Լ'Աղմէնիէն, — ներկայացուց :

Կ. Մ.



## Յաւերժութիւնը Աշխարհի



Յաւերժութեան սուրբ բոգի մէջ, պարուրուած է աշխարհը մեր,  
Աշխարհը մեր՝ կանգուն, հպարտ, ժամանակի գորկերի դէմ,  
Ի՞նչ ահ, ի՞նչ ահ կործանելուց, մեռնելուց կամ

դատարկուելուց,

Երբ դատարկոյ ձեռքը նորից լի է պահում աշխարհը մեր:

Մահն ցորենի ոսկի հասկի՝ ծնունդն է այս ջրադացի,  
Ջրադացի աղմուկն ահեղ ստեղծումը՝ լուսեղ հացի,  
Լուսածագը՝ վերածնունդ անցած-մեռած ժամանակի,  
Գարունը վառ՝ փարատողը ձմրան թօշնած, դալուկ կեանքի:

Ի՞նչ ահ մահին.—

Երբ կայծակի վերացումը ստեղծողն է գոռոզ ամպի՝  
Դադարումը մայրն անձրեւի,  
Անձրեւն գոհար՝ անեցնողը ոսկի հասկի  
Հունձքը հասկի՝ կեանք բաշխողը ողջ աշխարհիին:  
Կամ թէ՛

Մահը դառն ու տխուր քաջ զինուորի  
Պանծացումն է նրա գործի,  
Պանծացումը նրա գործի՝ փառք ու պարծանք  
Յաղթուած երկրին,  
Եւ յաղթուելը երկրի՝ ահա յաղթանակ է  
Մի այլ երկրին:

Աշխարհն մերն է մենք աշխարհինն յաւերժաբար,  
Մահը մէկի՝ կործանում չէ, այլ ծնունդ է նոր էակի,  
Մայրամուտը արեգակի վառ շոգերի ստեղծողն է շինջ գիշերի,  
Սեւ վրանի հաւաքուելը՝ նորից ծնունդ արեգակի:

Աշխարհն մերն է, մենք աշխարհինը յաւիտեան,  
Մահանում ենք, նորից ծնում ենք տեւաբար,  
Կապուած իրար ստեղծել ենք երկիր-երկինք,  
Ե՛ս կամ, դո՛ւ կաս, մենք շնչում ենք յաւերժաբար:

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ



ՅԱԿՈՒ ԿԱՐԱՊԵՆՑ

ԱԲԳԱՐ ԱՄՈՒ ՕՏԱՐ ՀԱՐՍԸ

Մէրիլինի ներկայութիւնը Գարակէօղեան դերգաստանում նման էր իս-  
ւար գիշերում փայլող լուսնին:

Ձէֆըրսոնում ով որ թուխ էր՝ Հայ էին համարում: Այդ հաշուով Հայ  
էին համարում սիրիացիներին, իսպանացիներին, յոյներին, եգիպտացիներին,  
Հարաւային Փրանսացիներին, իտալացիներին, եւ երբեմն էլ հրեանե-  
րին: Սակայն չեղաւ մէկը, որ այդ եզրակացութեան յանդէր Գարակէօղեան  
ընտանիքի նկատմամբ: Եթէ ոչ զամբիացու, ապա եթովպիացու կամ էլ ե-  
մէնցու տեղ էին դնում նրանց, այնքան որ սեւ էին այդ դերգաստանի ան-  
դամները:

Գարակէօղեանները մեծով պղտիկով, հեռաւոր ու մտաւոր ազդա-  
կաններով քառասունեօթ շունչ էին: Համայնք էր համայնքի մէջ՝ կարճ, կո-  
լոտ, մազ ու յօնք իրար խառնուած մի ցեղ, որը Արարիկիբից փախչելով՝  
եկել ու հաստատուել էր Ձէֆըրսոնի ամենարանուկ փողոցում՝ ծնելով ու  
բազմացնելով ժիր ու անճուռնի մանուկների երեք սերունդ:

Ութսունհինգի դռները ծեծող Արգար ամուսնու համար Արարիկիբը մի ա-  
ռանձին աշխարհ էր, մի առանձին երկիր ու ժողովուրդ, որին պատկանելու  
համար միայն մէկ նախապայման էր պէտք: Լինել արարիկիբցի:

— Սա չօճուխիս յլլուպլլը օտար հարս տեսնելու չէ, — հպարտա-  
թեամբ ասում էր Արգար ամին՝ մատնանշելով իր ծնկին յենած տասնհինգե-  
րորդ թռուան սրունքների մէջ կախուած բանը:

Եւ այդպէս էլ եղել էր: Բազաքից քաղաք էր ընկել, նիւ Եռքից Բոս-  
տոն, Բոստոնից Բինգհամթըն, այդտեղից մինչեւ Գիթրոյտ, Շիքագօ ու կա-  
լիֆօրնիա, մտել տները, քրքրել ծխական մատեանները, երկար հարցուփորձ

արհի, մինչև որ դանկ էր իր Հինգ որդիների եւ երեք դստերց համար յարմար կողակիցներ, քնականաբար բոլորն էլ արարկիրցի։ Անւ, պարարա հողի մէջ ընկած սերմի պէս ընդմուտընէն էին հարսերը, ունել՝ ինչպէս հասած նուռ եւ ճուղղիւնով լեցրել Պրանկլին փողոցի անկիւնում կանգնած բազմաթիւ բնակարանը։ Եւ երբ թոռները արբունքի էին հասել, Արզար ամին կրկին մէջտեղ էր հանել իր զբոսնած տետրակը, ուր իւրովի մակագրութեամբ բնութագծուած էր Ամերիկայի Միացեալ Նահանգների բոլոր քաղաքներում ցրուած արարկիրցիների ցեղա-հասարակա-ընտանեկան տընայները։

— Արզար ամի, Փրայիտենսի սա մեր թաղին մէջ ստնկ աղուր աղջիկ մ'ունինք, հօր մօր զաւակ, կրթութիւնը կրթութիւն, վարդի պէս աղջիկ...

— Ի՞նչ ողբ, — հսկայ զթից մացառի պէս դուրս խուժած մազերի հետ խաղալով հարցնում էր նա։

— Խարերդցի։

— Զ'ըլլար, — որոտում էր Արզար ամին։

Այս անգամ հեռուոր ծրեղնոյց այցելութեան պատուակի տակ յատուկ առաքելութեամբ քաղաքս ժամանած Տիկին Մարիամ Գուլաքոզեանն էր խօսողը։

— Չամի՛ի թագաւոր Աստուածատուրը կը ճանչնա՞ս։

— Կը ճանչնամ։

— Կ'ըսեն յամիշ կ'արտածէ Եւրոպաները։

— Ի՞՞՞՞՞՞...

— Կ'ըսեն, որ իր սեփական նունն ունի։

— Հա՞ա...։

— Անոր միւսուճար Եողիկը թուղի պէս հասեր, մնացեր է ծառին։

— Զ'ըլլար։

— Արզար ամի'...

— Ես էրզրումցի հարս չեմ բերեր տունս։

Հպարտ մարդ էր Արզար ամին։ Թօսքի տէր։ Եամուռ ու աշխատասէր։ Իր ձեռքերով էրեք տուն էր շինել, ծախել կրկնակի շահոյթով եւ զբամազուիւն առած Հիմքը դրել «Պարակէօզեան Եինարարական Տան», որը ընդարձակուելով գարձել էր Ջեֆրսոնի եթէ ոչ խոշորագոյն, գոնե՛՛՛ երկրորդական հաստատութիւններից մէկը։ Երկրաշարժութիւնից, ճարտարապետութիւնից զուրի շունէր Արզար ամին։ Աչքի լափով շարում էր պատը, բարձրացնում առատապը եւ գնում գուրը։ Այդ, ի հարկէ, սկզբնական տարիներին էին։ Հետագային, երբ մեծացան որդիները, Արզար ամին որսեց գանգուածային արտադրութեան անցնել՝ որմնադրութիւնը գիջելով հիւանդութեան։ Այդ անիւր շահաւէտ էր։ Քաղաքը տարածուել էր եւ ամէնուր արւարձաններում բնակարանները բուսնում էին սունկի պէս։ Ամէն առաւօտ, յոյսը չբացուած՝ Արզար ամին առնում էր իր զաւակներին ու հասած թոռներին, լեցնում երկու բեռնատար ինքնաշարժերի մէջ եւ ուղեւորում գործի։ Մեղուի նման աշխատում էին եւ մի քանի օրից բարձրանում էին մի տասնեակ բնակարանների փայտէ կառոյցները, երբ նման գործը այլ ընկերութիւններ հազիւ լրացնում էին երկու շաբաթից։

Այսօր, երբ Արզար ամին տարիների յոգնութիւնն է զգնում իր ոսկորներում, «Պարակէօզեան Եինարարական Տան» գործը առաջ են տանում իր որդիները, փեսաներն ու թոռները՝ օր ըստ օրէ ծաւալելով իրենց գործու-

նչու՞թեան ասպարէզը, ա՛յն աստիճան, որ հիմա սովորական երեւոյթ է Ձէ-  
Փըրսոնի փողոցներում KARAGOZIAN & SONS ծանուցադրերով աւելի քան  
քսան կտնաչ բեռնատար ինքնաշարժներէ հանդիպելը :

Գործը կարգաւորելուց յետոյ, Արզար ամուսնու յաջող զլխաւոր մտա-  
սեւեռումը եղաւ տոհմը համատեղելը : Ման եկաւ, փնտռեց, շափեց, չափ-  
լըփեց, ծննդաբերական յարաբերական հանգոյցներէ մէջ մտաւ եւ վերջա-  
պէս կանգ առաւ Ֆրանսիոյն փողոցի հինգ յարկանոց ամրացանման շէնքի տո-  
ջիւ : Ընդհանուր հաշուով յիսուն սենեակ :

Երբ կիներ՝ մայր Բայասանը առարկեց, թէ ճայ մարդ, այսքան սենե-  
կակ ի՞նչ պիտի անենք, Արզար ամին խորամանկ աղուէտի խիտը աչքե-  
րին պատասխանեց .

— Ես լաւ դիտեմ որդիներուս բնութիւնը : Օր մը առ տունն ալ մեզի  
չպիտի բաւէ : Աստուածաշունչին ըսածին պէս ողիտի բաղմանանք եւ արար-  
կիրցիներով լեցնենք աշխարհը :

Եւ արարկիրցիներով լեցունել էր եթէ ոչ աշխարհը, ապա հաստատա-  
պէս Ֆրանսիոյն փողոցը : Եթէ նորեկը քաղաքակենտրոն էր ուզում զնալ, լա-  
ւազոյն ուղղութիւնը ՚ր Արմիճիըմ սրբիթ—ն էր կամ ՚ր Գարակեօղեան ման-  
շըմ—ը, ինչպէս հպարտութեամբ ասում էին սեւամորթ հարեւանները՝ թա-  
քուն յարակցութիւն զգալով թուի արարկիրցիներէ նկատմամբ : Եւ ո՛չ միայն  
սեւամորթները, այլ նաեւ յոյները, խաւացիներն ու իրանտացիները, ո-  
րոնք յաճախ ջանում էին ազդագրական լզոյ կապեր որոնել իրենց եւ հայե-  
րի միջեւ :

Եւ արարկիրցիներէ տոհմի վրայ իշխում էր Արզար ամին՝ բացարձակ  
քմայքներով :

Նա իր տոհմի ո՛չ միայն հիմնադիրն էր, այլեւ ամենայնաթանդամը :  
Երբ քայլում էր, հողն անգամ դժբոլորում էր նրա աւազին ծանրութեան  
տակ : Մի իրական հողի մարդ, որը անմխտելիօրէն հողի վրայ էր կանգնած :  
Երբ աշխատանքից տուն էր գալիս, առաջին գործն էր լինում թեւերը կան-  
թել յետոյքին եւ գէմքին աւելի խոժոռ արտայայտութիւն տալով՝ սենեակից  
ոնենակ, միջանցքից միջանցք եւ յարկից յարկ զնալը : Ստուգում էր իր էշ-  
խանութեան սահմանները, հետաքրքրում իր բաղմանից վերդաստանի ա-  
մենաշունչին խոդիրներով եւ հենց սեղի վրայ հրահանգներ արձակում՝ թիկ-  
նապահի պէս իր ամէն քայլին հետեւող աւազ որդուն :

— Սա Արամիկին ու Վաչիկին համար նոր կօշիկներ պէտք են :

— Նոր դալիի մը պէտք ունի այս սենեակը :

— Յարէթին հարսը ինչո՞ւ սպրդնած է . . .

Գարակեօղեան դերդաստանը ունէր իր սւրոյն սովորութիւններն ու ա-  
ւանդութիւնները, որոնցից թերեւս ամենանուիրականը ընթրիքի սեղանն էր :  
Այդ ընթրիք չէր, այլ իրականում ամէնօրեայ համախմբումը տոհմի երէց  
անդամներէ : Բաղմայարկ շէնքի բաղմաթիւ սենեակներից մէկ առ մէկ ճիշդ  
ժամը եօթին ճաշտարած էին մտնում սոված ու յոգնարեկ տղամարդիկ եւ,  
ըստ տարիքի՝ բոճում իրենց սեղերը ընդարձակ սեղանի շորս բոլորը : Տոհմի  
մսեղ ու լեցուն կանայք, տարօրինակ դիւրաշարժութեամբ դուրս ու ներս  
էին տնում՝ պէս—պէս կերակուրների գոյրչի ցանկով ամէն կողմ : Ու մինչ  
սեղանը լցւում էր հայկական ուտելիքներով, Արզար ամին իր դահին բտղ-  
մած զեկոյցներ էր լսում «Գարակեօղեան Եինարարական Տան» օրուայ գոր-  
ծունէութեան մասին, յաճախ ընդմիջելով ու արագ խորհուրդներ տալով : Եւ  
երբ մայր Բայասանն ու կանայք վերջապէս նստում էին, Արզար ամին մտաւ

յօնքերի տակից աչքերը վեր էր բարձրացնում եւ այսպէս խօսում Աստուծան,  
ո՛չ աւել, ո՛չ պակաս .

Փռո՛ք Քեզ, Տէր, այս տառտ հացին համար :  
Փռո՛ք Քեզ, Տէր, այս տունին համար :  
Սակայն մե՛նք ալ մեր բաժինը բերած ենք այս  
սեղանին : Եթէ չաշխատի՛նք, Դուք ալ մեզի  
չպիտի օգնէ՛իր : Ամէն :

Եւ սկսում էր երկար ու բարակ կերուխումը : Ափսէները ձեռքէց ձեռք  
էին անցնում եւ մէկ ժամից դատարկւում էր սեղանը : Կարծես արարելիքը  
ները սովից էին փախել :

Ընթրիքից յետոյ, Արզար ամին իր աւազ որդիներին ու փեսաներին  
առած՝ քաշւում էր իր առանձնարանը եւ ծխախոտի ծուխի ջուլաների մէջ  
խորհրդակցում նրանց հետ վաղուայ աշխատանքի մանրամասնութիւնների  
շուրջ : Երբ տարածայնութիւն էր ծագում, ընդմիջում էր Արզար ամին եւ  
նրա խօսքը դառնում էր պատգամ : Ո՛վ կարող էր հականառել մի մարդու,  
որը դրեթէ տկուր Նիւ Եորք էր հասել Ապրիլեան մի ցուրտ առաւօտ եւ այ-  
սօր իր կայսրութիւնն էր տարածել Ձէֆըրսոնի մէկ ծայրից միւսը :

Աշխատանքի մարդիկ էին այդ արարելիքները, յամառ, ինքնամփոփ,  
անտաշ մարդիկ, որոնք սեւ բազուկներով հող էին քանդում, բլուրներ տե-  
ղահան անում եւ նրանց տեղ բնակարաններ շինում Ձէֆըրսոնի արուարձան-  
ներում :

\* \*

Մէրիլինը իր հետ բերել էր ո՛չ միայն լոյս, այլ նաեւ կայծակ, որոտ  
ու փոթորիկ :

Ամբողջ Գարակէօզեան դերդաստանը ալեկոծման մէջ էր : Յուզքի ա-  
լիքներ յորդել էին Ձէֆըրսոնի Հայ համայնքի վրայ, տարածուել մինչեւ  
Նիւ Եորք, Սան Ֆրանսիսկօ եւ դեռ հեռաւոր այնպիսի՝ կորած տւաններ, ուր  
հայութեան նաւակին կառչած՝ տակաւին իրենց այդային դոյութիւնը պահ-  
պանում էին մի խումբ յոգնաբեկ հայեր :

Գոյժը ցնցել էր բլուրին :

— Կ'ըսեն Գարակէօզեանի թոռը՝ Վահան օտար հարս բերած է տու-  
նը : Ըլլա՞ւր՞ք բան է...

— Ի՞նչ կ'ըսե՛ս... մեզա՛յ Աստուած :

— Ծիփ շիտակ ամբիկացի : Այրիշի, սքաշի ճուտ...

— Ի՞նչ կ'ըսե՛ս...

— Կապուտաչք, պլուսլատ պռտի աղջիկ :

— Խե՛ղճ Արզար ամի...

Ոնե՞ճ Արզար ամի : Նահապետը քաշուել էր իր առանձնասենեակը,  
ձեռքերը դրել ձեռններին ու քարացել : Նրա ուսերը կքել էին, դէմքը երկարել  
եւ այտերը դատարկ պարկերի պէս կախուել խալու, դէպի վեր ցցուած պե-  
տերի վրայ : Հնդիկ դառամեալ Փակիրի նման պզտոր հայեացքը յառել էր  
դիմացի պատին՝ անշարժ ու անհաղորդակից :

Ծանր էր լսիտի հարուածը : Եւ մեղուցիչ, Վահանը իր աչքերի լոյսն  
էր, իր թոռների մէջ ամենաուշիժը եւ հենց այդ ի նկատի առնելով էր, որ



— Ինչո՞ւ անարդար բաներ կ'ըսէք: Երբ որ հաշի կու գան, մարդ չեւէր մէջտեղ: Քիչ մ'ալ մերինն է յանցանքը:..

Վերնատունը իր օտար հարսով ննչում էր բոլորին:

Վերնատնից ամօթը իջել, նստել էր Գարակէօզեանները սրտում, դուրս եկել, մտել Ջէֆրոսոնի հայոց տները, քանդել աւանդական պարխայները, ի սպառ շուտ տուել հինուուրց հասկացողութիւնները եւ սանձարձակ սիրուել Ամերիկեան Հանրապետութեան անծայրածիր տարածութիւններում բուն գրած հայ համայնքների վրայ:

— Գոնէ Հայ ըլլար, ինչ կ'ուղէր թող ըլլար — երբեմն ճերմակահեր գլուխը երկինք դարձրած մրմնջում էր մայր Բալասանը:

~

Թէ ինչպէս էր հղել, որ Մէրիլինը հաւանել էր Վահանին, այդ մի գաղտնիք է, որը մինչեւ այսօր էլ անլուծելի է մնացել: Ծիչը է, Վահանը միակն էր ամբողջ գերդաստանում, որ համալսարան էր յանձնում, բայց համալսարան-մամալսարան մէկ կողմ գրած, խեղճ տղան իսկապէս որ տղեղութեան մարմնացում էր: Ամէն բան հաստ էր նրա մօտ — գլուխը, վիզը, թիկունքը, փորը, սրունքները, յատկապէս սրունքները, որոնք առանց շափաղանցութեան փիղի ոտքերի էին նման: Նրա դէմքը միշտ խոժոռ արտայայտութիւն ունէր, ոչ որովհետեւ շարունակ ծանր մտածումներէ մէջ էր մխրճուած, այլ որովհետեւ նրա մազերի ու յօնքերի միջեւ հազիւ մէկ մատնաչափ անջրպէտ կար: Այլ խօսքով, Վահանը ճակատ չունէր: Նրա քուռակուսի, նախապատմական երեսի թաւ մազերը խառնուել էին վզի մազերին, իջել, միացել լայնանիստ կրծքի թաւուտ անտառին եւ քմայքոտ տարածուել դէպի նրա մարմնի ծայրագոյն դաւառները:

Միակ բանը, որ փայլում էր նրա մուկ դէմքին վրայ, աչքերն էին — խոշոր, սեւ, տխուր, խելացի ու մելամաղձոտ աչքերը:

Մի օր, համալսարանի գրադարանում, երբ Վահանը խորասուզուած էր բնագիտութեան իր գրքերի մէջ, ինչ-որ կիզիչ մի հոսանք զգաց իր քունքերի վրայ: Գլուխը վեր բարձրացրեց եւ այլեւս չկարողացաւ աչքերը հեռացնել իր դիմաց նստած ուսանողուհուց: Այդպիսի գեղեցկութիւն նա քնաւ չէր տեսել: Լուսամուտից արեւի մի շեղը իջել էր նրա վարսերին եւ ոտկէ հրդեհ առաջացրել: Հրդեհը պարուրել էր նրա նուրբ, դեղձաթոյր դէմքը, որտեղից երկու կապոյտ լճակներ հայում էին իրեն՝ անթարթ ու անպահանջ: Ազդիկը ժպտում էր առանց ժպտալու — ոչ այնքան Մօնս Լիզա, որքան Բրիտիա Բարբօ — հասուն ու միաժամանակ մանկունակ: Նրա մի պուտ քիթը, ա՛հ, այդ վեր ջցուած եռանկիւնը իր հմայք քեանձակերով, իսկ ճերմակ, ճապոնկ պարանոցը այնքան ազնուական էին, որ կարծես մարմարից կերտուած լինէին: Վահանը շփոթուեց, մատներով թաւ յօնքերի քրտինքը մաքրեց, այդ արարքից էլ աւելի շփոթուեց եւ յանկարծ կրկէսի ցանկապատից ցլամարտի հրապարակը խուժող զազանի պէս իրեն դուրս նետեց գրադարանից:

Նա դեռ չէր վերադառել իր անդրբը, երբ ճենապակէ մի վճիտ ծայն խօսեց իրեն.

— Ես Մէրիլին Մմիթն եմ: Ի՞նչ է քո անունը:

— Վա. հատան Գարակէօզեան, — հաղիւ կարողացաւ աւարտել իր անունը:

- Կը ներես անքաղաքավարութեանս համար...
- Ի՞նչն է...
- Որ այնպէս ակնապիւշ քեզ էի նայում:
- Ընդհակառակն, ես էի...

Եւ այդպիսով սկոռուց մտերմութիւնը, որը վեց ամիս յետոյ զազանի ամուսնութեան յանդէս Վահանը անծնատուք եղաւ: Թորոսակեց Գարակէօզեան զերդաստանի պապենական պատերը, գոլորշիացաւ իր մէջ Արարկիբի հողաշէն ծինելոյցներէից իրեն ժառանգութիւն մնացած հին սովորոյթներէ հազարանիստ քարը եւ իր անաղին զիջք ոչնչ տուեց ամօթի պատին՝ սիրա- յօժար ու զիտակցարար: Անգլո-օսթօն գեղուհին գերի էր նրան: Մէրիլին- նով սկսում էր լոյսը եւ մնում լոյս: Մաքրել էր վերնատունը, ներկել պատե- րը, դրել անկողին, արդի կահոյք եւ ստուար մի գրադարակ: Մէրիլինը աշ- խատում էր եւ հազում Վահանի համալսարանական ծախսերը: Երբ տղան ընդդիմացել էր, կիներ պատասխանել էր. «Երբ աւարտես համալսարանը, այն ժամանակ դու կ'աշխատես եւ ես տանտիկնութիւն կ'անեմ»:

Օրերն անցնում էին, իսկ սուգը շարունակուած էր Ծրանկլին փողո- ցում: Ջէֆրսոնի հայ համայնքը բամբասանքի ու մտահոգուելու այլ նիւ- թեր էր գտել, շնայած որ բոլորի տանիքներէ վրայ սակաւին ճնշում էր Գա- րակէօզեանների ցաւի ծանրութիւնը:

Մէրիլինի համար Վահանը գիջել էր ամէն ինչ, զոհել էր ընտանեկան սիրոյ բոլոր շահերը, գրկուել Արգար ամուսնուածաշունչ օրհնանքից եւ գեռ այն բոլոր շօշափելի ու անշօշափելի բարիքներից, որոնց համադրումն էր Մեծի Տանն Գարակէօզեան Նորիսպետութեան պատկանելիութիւնը: Վահանը տուել էր ամէն ինչ, սակայն անգրգռելի մնացել մէկ բանում:

— Մէրիլին, եթէ իմ կիներ պիտի լինես, ապա պիտի դառնաս Հա- յուհի:

- Ինչպէ՞ս, — թախանձել էր Մէրիլինը:
- Հայերէ՛ն պիտի սովորես:
- Քեզի համար, Վահան, ոչ միայն Հայերէն, այլ նաեւ շինարէն կը սովորեմ, բայց ինչպէ՞ս, ո՞վ պիտի սովորեցնի:
- Ես, — պատասխանել էր Վահանը:



Ջմեռը վերջանում էր եւ քիւնահալքի հետ հետզհետէ հալչում էր Գա- րակէօզեան գերդաստանում նստած սառոյցը: Գեկտեմբերին, Վարդանի կի- նը՝ Յասմիկը ծնեց մի մանչ, իսկ Յունուարին երեք հարսեր, որոնց մէջ նաեւ Մէրիլինը, սկսեցին ծանրանալ, ընդարձակուել՝ իրենց եղնիկի աչքե- րից մայրութիւն հոսելով:

Ընտանիքի աւագ անդամները՝ որդի, աղջիկ, հարս, փեսայ, պոսակ- ւած թոռ ու կին, ամէն երեկոյ, ըստ սովորականի, հաւաքում էին ընթրիքի սեղանի շուրջ: Սկզբնական ամիսներին Վահանի ու իր օտար կնոջ ներկա- յութիւնը ցուրտ հոսանքի պէս կախում էր միջոցից, սակայն գնալով վե- րանում էր խորթութիւնը եւ Արարկիբը հանգէս էր գալիս իր ամբողջ ըզե- րով, բարձրագոյն հնչիւններով ու մանաւանդ անյատակ արորժակով: Մեծ, սեւ գլուխների մէջ ճաճանշում էր Մէրիլինը՝ հեզ ու բարեհամբոյց: Մի ու- թոշ ժամանակ կանայք սեղմում էին իրենց պոռչները, թեւները կանթում եւ

մեքենայորէն ծածուծ: Բայց երկար չտեսցեց, նրանք էլ տղամարդկանց պէս  
զինաթափ եղան Մէրիլինի տնտէսն րարութեան առջեւ:

— Կը հնգրեւմ ինսի հետ օնլի հ-ա-յ-ն-ը-ն հօսիս, — գերմարդկա-  
յին ճիշ գործ գնելով արտարելու էր օտար Հարսը, երբ սեղանակիցներէր  
ոեւէ մէկը նրա Հեա խօսելիս անզլերէնին էր ապաւինում:

Ջարմանալին Մէրիլինի վնասականութիւնն էր: Առաւօտից գիշեր Հայե-  
րէն էր սովորում: Սովորում էր տանը, Հանրակառքում, աշխատավայրում  
— նա կրտսեր գիտաշխատող էր քիմիա-արդիւնարեբական մի Հաստատու-  
թեան մէջ — գրօսանքի եւ թէ Հայկական Հանդէսների ժամանակ՝ շարունակ  
Հարցնելով «ատիկա ի՞նչ ըսել է» կամ թէ «ատ բառին հ-ա-յ-ն-ը-ն-ը ին-  
տո՞ր կ'ըլլայ»:

Տան տղամարդիկ այլեւս ազաւ Հայեացքներ չէին նետում Մէրիլինի  
փարթած ծծերի ու բարձր սրունքներէ վրայ նստած կոլոր յետոյքի վրայ:  
Հիմա նրանք նրա աչքերին էին նայում եւ կարծես ուզում էին մի կերպ Հա-  
կացնել, թէ քո՛յր, ճիշդ է, որ օտար ես, բայց մեր Հայալ եղբոր կնիկն ես,  
ինչ արած, այս է կեանքը...

Մայր Բայասանը լսել էր օտար Հարսի յղի լինելը, մի պահ շմեւ, ա-  
պա արտասուել էր, կակղել եւ մի օր էլ լուսարանում իր շորացած բարի  
ձեռքերով գրկել էր Մէրիլինին եւ ճակատը Համբուրել:

Այլ էր պարագան ամբողջ առանձնասենեակում: Արգար ամէն, պար-  
տուած ալեւոր զօրավարի պէս՝ Հայեացքը պատի ծաղկանկարներից շէր Հե-  
նացնում: Ամբողջ մի կեանք պայքարել էր, կոտորած ու աւերից էր անցել,  
սերունդներ էր Հասցրել, Հարազատներ թաղել, չար ու բարի տեսել, բայց  
միշտ յարգել էր իր պապերի յիշատակը, նրանց թողած սրբազան աւանդու-  
թիւնը եւ ամէն բանից առաւել՝ վեր պահել Արարիկի պատիւը: Ո՛չ, Աբ-  
րուր Գարակէօզեանը այդ չի ների: Կը գերազատի օձի Հեա պատառ կիսել  
եւ մենակութեան մէջ վերջին շունչը փչել, քան տեսնել իր անառակ թոռան եւ  
օտար Հարսի երեսը:

Եւ կայծակնահար Հինաուրց կոճղէ պէս երերում էր Արգար ամին իր  
Հնամենի բաղկաթոռում՝ ձեռքերը ծնկներին, միտքը կախ ու վշտաւ:

Մէրիլինին սկսել էր ճանաչել նաեւ Ջէֆրսոնի Հայ Համայնքը:

Ամբողջ ամառը մրափելուց յետոյ, Սեպտեմբերին յանկարծ աշխու-  
ժանում էր Հասարակական կեանքը: Սուրբ Մաշտոց Մշակութային Կեդրոնը  
դառնում էր փեթակ: Ժողովներ, Հանդէսներ, մշակութային-եկեղեցական  
դանադան ձեռնարկներ, Շարաթօրեայ եւ Կիրակնօրեայ դպրոցներ, նոյնիսկ  
թատրոն ու Համերգ: Եւ այդ բոլորին ներկայ էր Արգար Գարակէօզեանի օ-  
տար Հարսը: Ամուսնու Հուժկու ձեռքը բռնած՝ խնդհ աղջիկը ժամեր շա-  
րունակ նստում ու լսում էր անվերջ ճառերը, ելոյթները, վէճերն ու տխուր  
երգերը:

Առաջին մի քանի ամիսներին, ամէն ոք իրեն Հեռու էր պահում գիտյ-  
տասակ» զոյգից: Տարեցները երես էին դարձնում, կանայք իրենց նուա-  
տացման պաշտումը թաքցնելու Համար զթնների տակ բաներ էին շնչում եւ  
շարունակ «ախ ու վախ» անում, իսկ երիտասարդները նախանձից այրուե-  
լով՝ սափրիչի խանութից նոր գուրս եկած մերօրեայ Դոն Ժուաններէ պէս  
կանգնում էին օրահի պատերի տակ, անընդհատ շակում իրենց փողկապն ու  
մաքրում իրենց վզի ջրտինջը:

— Ես որ ուղիմ նէ, կրնամ սուպէս տասը աղջիկ մէկ անպամէն...  
— Դայմ է դազըն... փողոցները լեցուն...



— Հո՞ւ Բէյրզ...

Նախնական անասելի ցնցումին յաջորդեցին երկրորդական մի քանի այլ ցնցումներ: Երկրաշարժի ալիքները ցրուեցին Ձէֆըրոսից դուրս ու կորան հայարնակ այլ քաղաքներէ բնդերքում: Եւ փլուտակների տակից կրկին բարձրացաւ Մէրիլինի սլացիկ հասակը՝ ոսկէ մաղերից մեղր ծորելով չորս շին: Նրա ներկայութիւնը այժմ դարձել էր մի տեսակ անհրաժեշտութիւն: Նախ անդամագրուեց Հայ Կանանց Եկեղեցատեղաց Օժանդակ Միութեան, ապա դարձաւ Հայ Օգնութեան Միութեան տեղիս մասնաճիւղի քարտուղարը եւ երբ եկեղեցուն կից կառուցուեց Հայկական դպրոցը, իր նախաձեռնութեամբ հիմքը դրուեց «Մեծագոյն Ձէֆըրոսի Հայոց Քուսանեան մանկապարտէզին»:

Մէրիլինը ամէն տեղ էր: Հասնում էր ամէնքին, օգնում Կրթական Յանձնախումբին, յարգարում բեմը, ծաղկաղարում Կեդրոնի պարտէզը եւ թեւերը սոթթած նոյնիսկ կարատում Շաբաթ դիւերուայ ճաշերոյթի խորովածի միտը: Մէրիլինը դարձել էր բոլորի սիրելին: Այնքան նրա նուիրում-ծոթիւնը չէր, որքան հայախօսութիւնը, որ հմայել էր համայնքին:

— Անթառամ, մէյ մը մտիկ ըրէ սա մեր Մէրիլինի հայերէն խօսելը, պուլպուլի պէս...

— Խուրպան քու լեզուիդ...

— Հազար հայ աղջիկ ծովը կը տանէ ծարաւ ետ կը բերէ...

— Երանի՛ ի՞մ հարսը ըլլար...

— Աստուած չէն պահի Արզար ամիի տունը...

Արզար ամու տունը մտել էր իր բնականոն հունի մէջ: Վերահաստատուել էր օրէնքը, կարգն ու կանոնը: Մայր Գարակէօղեանը իր անբաժան սեւ շալը ուսերին՝ վերադարաւ էր ճաշատենակի իրեն վերապահուած աթոռը: Ահարունեանի «Հազրէմ» լիւնցնող իր արտաքինով, նա վախ ու ակնածանք էր պարտադրում շրջապատին: Անպատճառ աւազ սրդին՝ Կիրեղը, որի սպանադին կար ընկած պեխերից աստափում էին բոլորը, ձայնը չէր բարձրացնում մօր առջեւ:

Մայր Բալասանը պառաւ մտտերով հացը փրթում էր պնտիկ մէջ եւ իր մէկ լոյս աչքի տակով զննում իր տո՛ւմի երէց անդամներին: Եւ ամէն անգամ նրա հանդարտ հայեացքը մի պահ կանգ էր առնում Մէրիլինի վրայ եւ բարձրտնում վեր: Խորթութիւնը հարթուել էւ սովորոյթը ընտանիութիւն էր բերել Գարակէօղեան գերզաստանին: Հարսերից շատերը նոյնիսկ համակրում էին Մէրիլինին: Բայց եւ այնպէս կար Արզար ամու թափուր բազկաթուր, որը լուս վկայի պէս խառնում էր անդօրը, նզովք կարդում եւ հազար ու մի թեւերով ներկաներին կապում հեռաւոր Արարկիտին:

Այդ գիշեր, ընթրիքից յետոյ մայր Բալասանը իր սենեակը հրահանուակեց Մէրիլինին:

— Մօտ եկուր, հաւրուս:

Պառաւը բարի մտտերով վեր քաշեց Մէրիլինի փէշը եւ քնջութեամբ հպեց, շոյեց, շոյափեց նրա պայթիլու աստիճան ուսած փորը: Հարսը ժըլվա-տալիք ցնցում էր, երբ ամէն անգամ աքացի էր տալիս իր ներսի կեանքը: «Քոռանս պէս ժիւր մանչ ըլլալու է», ասաց մայր Բալասանը եւ հակուելով համբուրեց կնոջ պրտը:

— Երբ աշխարհ պայ, տար Մենծ Փառային ցուց տուր, հաւրուս: Չմոռնա՛ս:



Գարունը հազիւ էր եկել, երբ Արզար ամուստար հարսը մի ծոռ ըն-  
ծայեց Գարակէօղեան գերդաստանին:

Այդ օր, իբարանցումի մէջ էր Աբարկիրը: Մայր Բալասանի հրահան-  
գով այդ օր բան, գարծ թողած, ընտանիքի բոլոր անդամները հաւաքուել  
էին նաւապետի առանձնասենեակը ասնող ընդարձակ ու երկար միջանցքի  
երկու կողմերում՝ ինչ-որ ածական թափօրի սպասող ամբոխի ակնկալու-  
թեամբ: Սեւահեր գլուխների մի յուզքոտ ծով էր: Մայրերը ջանում էին զրո-  
պել կայտառ մանուկներին, դէսից ու դէնից մանկիկների գլի ճշոց էր լրո-  
ւում, իսկ տղամարդիկ ոտքները չոսած՝ ծխում էին եւ հոսանդով քորում ի-  
րենց մազոտ ծնօտները: Եռստով միջանցքի հանդիպակաց ծայրում երեւաց  
մայր Բալասանը, իսկ իր յետեւից Մէրիլինը՝ նորածինը գրկին: Մայր Գա-  
րակէօղեանը ձեռնափայտով ճանապարհ էր քայում եւ միաժամանակ ինչ-որ  
բաներ շնչում քթի սակ: Քրմուհու ահից մանուկներն անգամ պայպանծ-  
ւում էին:

Մէրիլինը դուռստ էր կապոյտ շրջադեփտի մէջ: Նա շարունակ ժրպ-  
տում էր պրկի մանկանը:

- Աչքդ լոյս, Մէրիլին:
- Ատուած պահէ:
- Եիտակ արարկիրցիի բէյբի:
- Աբարկիրցի՛ . . .

Ահագին կաթնաթոյր մի մանուկ էր՝ ոսկեհեր ու վարդաբերան, ձուա-  
դէմք ու թաւշամորթ: Եթէ չլիներ Գարակէօղեանների մեծղի քիթը, ապա  
տեսնողը պիտի մտածէր, որ վերջին շատաւիզն էր Նիբելունդեան արեւտթեւ  
հերոսների:

Մայր Բալասանը մինչեւ առանձնասենեակը առաջնորդեց իր հարսին,  
դուռը քացեց, ներս հրեց նրան, երեսը խաչակնքեց ու արձանացաւ:

Հանուր լուսթիւն տիրեց միջանցքում:

Մի քանի կանայք դէպի գոցուած դուռը շտապեցին ականջ դնելու ներ-  
սի խօսակցութեանը, սակայն հանդիպելով պառաւի ձեռնափայտի հատու  
սաստին, պոչները քաշած յետ դարձան: Եղբայրներից մէկը սիրտ էր տալիս  
Վահանին, որը յողնած հագիամարտիկի տեսք էր ստացել:

Յանկարծ առանձնասենեակից մանկան ճիչ լսուեց, որը դնալով սաստ-  
կացաւ՝ վարակելով նաեւ միջանցքում իրենց մօր կրծքին ու փէշերին կառ-  
չած մանկիկներին: Միտեց ժուրը ու լաց: Անհանդիստ մի ալիք անցաւ սրտից  
սիրտ:

Մի պահ հոք, քացուեց դուռը եւ շեմին երեւաց Արզար ամին՝ ափե-  
րի մէջ առաջ պարզած մերկ մանկիկը, ինչպէս մատուցման զոհի: Ոսկեհեր  
նորածինը այլեւս չէր ճշում, այլ աքացի էր տալիս ծերունու միջուկին:

Բոլորը նկատեցին, թէ ինչպէս Արզար ամուսնու գէմքի մուկ ամպերը հե-  
տըզհետէ ցրուեցին եւ խօսաչունչ խաւարի միջից ծապեց նրա զստամեալ  
ժպիտը: Մերունին վեր բարձրացրեց իր ծոռանը եւ ի լուր աշխարհի քացա-  
զանչեց:

— Պումպուլը ուտեմ:

**Ք Ա Ն Ե Ն Տ Պ Ա Ր Ա Ի Ա Մ Պ Ա Ր Ա Ի Ն Է Ն Տ**

Փոխուեր է դարը, շրջեր՝ աստառը գոյապայտարին,  
Ժանգոտեր՝ սուրը երէկուան անյաղք յաղթականներուն:  
Ո՛չ Ալեքսանդրը, ո՛չ ալ Նափօլեօնն այն ուժը ունին  
Որ դէմը դնէ աշխարհասասան նոր հրքիռներուն...:

Երէկուան նման գայուօթիւն չունին ուժեղ ու տկար  
Ազգեր: Յիշեցէ՛ք, Հա՛յեր, դեռ երէկ, — անապատին մէջ, —  
Մեզուն քաւս վեր առիւծը խայթեց, «բաղբէն» բերաւ վար:  
Նորէն յիշեցէ՛ք, Մեզուն, պատմութեան, տուաւ մի նոր էջ:

Դո՛ւն ալ քօթափէ՛ք ճու ճորճերը հին: Հագի՛ր արծիւի  
Թեւեր, քռի՛ր վեր: Աստուածն ալ ուժն իր, տե՛ս վերէն կ'առնէ:  
Շանքերով շէնցո՛ւր վրէժի կարօտ աչքերդ ծաւի,  
Հրքիռդ երբ որ, վար խոյանայ, բիրախին գարնէ...:

Փոխուեր է դարը: Հին ուղիները Հոսմ չեն տանիր:  
Նոր ուղիներէ կ'արշաւեն հիմա ազատուած ազգեր:  
Մտփոյ շուփին տակ նստեցո՛ւր Ներսէս անմիտ ու նանր,  
Որ, այսօր անգամ, հողդ ետ չի տար, քեզ ալ չի յարգեր:

Կոչունքի՛ կանչէ, — ձեռքը դեռ արնատ, — պարտական մարդը,  
Անկէ ետ ուզէ՛ դու՝ ճու հողերը: Եթէ մտնէ ճուն,  
Ձեռք առ նշտրակդ, միսին մէջ մտցո՛ւր պահանջիդ կարթը,  
Աք. նա իմանայ թէ ինքը տէր չէ Հայոց հողերուն...:

Իր շուփին հանգոյն հետեւի՛ր իրեն: Տգրուկի նման  
Կաշի՛ր իր մորթին: Թող որ ճուն չիջնէ կարմիր աչքերուն:  
Զգացո՛ւր իրեն թէ թիւը, այսօր, ուժ չէ անպայման,  
Թէ՛ չի կրնար ինք յաւէտ տէր մնալ Հայոց հողերուն:

Մէկ նամբայ ունիս, — իրեն ըսէ՛ դուն, — եւ մէկ՝ նպատակ, —  
Եւ թէ ճու նամբան, — ուրկէ ալ ծայր տայ, — կ'անցնի ճու հողէն:  
Եթէ պատահի որ մէկ Հայ մնայ այս արեւին տակ,  
Իր հողը պիտի ետ առնէ ձեռքէն երէկուան գողէն...:

Թիւը որակ չէ: Այսօրուան Հայը սուրէն չ'երկնչիր:  
Կռուի չ'ելլեր ինք. չի փախչիր կռուէն. չի դադար գողէն:  
Զօրին անգորին չի սպառնար ինք: Մէկուն չի գաշիր:  
Միանգամ ընդմիջտ չի հրաժարիր իր խուած հողէն:

Փոխուեր է դարը: Հայը մտեր է մտփն մարտին մէջ, —  
Կրծքին տակ արեւ՝ եւ աչքերուն խոր՝ ճանանչներ՝ անշէջ:  
Իր նամբան մէկ է, իր պայտարը՝ նոյն, իր պահանջը՝ մէկ, —  
Ան, այդ պահանջէն չի՛ հրաժարիր, չի գատուիր երբեք...:

Հալիվուտ, Քալիֆ. ԳԵՂԱՄ - ԳԵՂԱԿ

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄՈՒՐԶԸ

(Վ Է Պ)

Գ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Դ  
ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՓԵՐԸ

ԳԼՈՒԽ Ե.

Լուռ է մթնոլորտը: Մահը կը սա-  
ւառնի գիշատիչ տնդղի մը պէս այս տա-  
րածութիւններուն վրայ, ուր ժամանա-  
կին կը դտնուէին Հայկական չէն գիւղեր,  
վանքեր: Այս արահետներուն վրայ կայծ  
հանած են Հայ ասպետներու երիվարնե-  
րուն սմբակները: Ե՛ս միայն դիտեմ այս  
լուսթեան զաղտնիքը, ես՝ որ տեսայ ամ-  
բոխներուն վայրագութիւնը, ես՝ որ տե-  
սայ բազմութիւնները՝ անապատի քմա-  
հանոյքին յանձնուած: Անոնք բոլորն ալ  
անցած են Մահուան Կամուրջէն եւ, օր  
մը, ինծի պէս պիտի վերադառնան վրէ-  
ժի Չահը մէկ ձեռքին եւ Հատուցման սու-  
րը՝ միւս ձեռքին:

Զապէլ կը քալէ կողքիս: Երբ կը  
չարչարուէի Եփրատի ափին, ամէն գի-  
շեր կ'ոգեկոչէի իր անունը, դիտելու Հա-  
մար զէմքին երազը եւ աչքերուն աշխար-  
հը: Տեսակ մը իշխանուէի էր անմատ-  
չելի ու մերամոզմտ: Հիմա, որ կ'ապ-  
րիմ կողքին, անոր էութիւնը աւելի կը  
խուսափի ինձմէ: Բայց գիտեմ, որ ու-  
զած վայրկեանիս, կրնամ այլափոխել  
գիւղը: Հրացանը նետած ուսին, փամփըլ-  
տակալը ամրապնդած մէջքին, ան ունի

մեր լեռներուն առնական վեհութիւնը:  
Եւ եթէ չըլլային իր երկար մազերը,  
պիտի կարծէի, թէ անցեալէն վերածնող  
ասպետ մըն է:

— Զապէ՛լ, — կ'ըսեմ, — Զապէ՛լ,  
քո՛յրս, սիրունի՛ս, որքա՛ն սիրեցի քեզ:  
Գեղեցիկ գէմքը կը դարձնէ ինծի ու  
կը ժպտի:

— Միւրեցիբ, որովհետեւ Հեռու էի  
քեզմէ: Իսկ Հիմա՞, Միքայէլ:

— Մէքը միշտ անցեալ մըն է: Վաղը  
կըկին պիտի ըսեմ նոյն բանը, եւ յա-  
ջորդ օրերը, յաջորդ ամիսները, յաջորդ  
տարիները: Ըսել է որ այսօր ալ կը սի-  
րեմ քեզ, վա՛ղն ալ պիտի սիրեմ, մին-  
չեւ որ միասին մեռնինք ու մեր սէրը,  
նոր աստղ մը դարձած, պլպլայ յաւի-  
տենականութեան երկնակամարին վրայ:

— Դուն որ ամէն բան գիտես, ըսէ  
ինծի, ի՞նչ է Մահը:

— Մահը արուեստագէտ մըն է, որ  
կը յաւերժացնէ գեղեցիկ ու դիւրարեկ  
բաները:

Գլուխը կը դնէ ուսիս, ու կը Համ-  
բուրեմ իր առատ մազերը:

Կը քալենք ամայութեան մէջ ցերեկ-  
ներ ու գիշերներ:

— Գէտք է զգոյշ ըլլանք, — կ'ըսէ

Չապէլ, — քաղաքներու ու բնակուած դիւղերու շուրջ, կարելի է աննշմար անցնել: Հիմա կը գտնուինք զինուորական դասերի մէջ: Բնակուած վայրեր գրեթէ չկան այս կողմերը: Թուրք բանակին նահանջովը, թուրք դիւղերը պարպուեցան ու բնակութիւնը անցաւ Երզրումի կիրճին արեւմտակողմը: Իսկ ռուս բանակներուն նահանջովը, Հայերը քաշուեցան Արաքսի ափերուն:

Կը քաշենք լեռներու կողին, այժի ճամբաներէն, մեր աջին ունենալով անտառներու հովանին: Երբեմն, ձորի մը բացուածքին կը տեսնուի անսահման դաշտավայր մը:

— Արարատեան դաշտն է մեր դիմացը, — կը բացատրէ Չապէլ, — Հոն տեղի պիտի ունենայ ճակատադրական բախումը Հայերու եւ թուրքերու միջեւ: Եթէ աւելի վարերը բլլայինք, ճամբաներու վրայ պիտի տեսնէինք թուրք զորամասեր, որոնք կը կեդրոնանան հոս. սալլեր, ձիաւորներ, պինամթերք: Եւ այս տասնեակ Հազարաւոր զինուորները, որոնք պարտուեցան դանազան ճակատներու վրայ, պիտի ջանան դոնէ ճգնելով Հայութեան անկազմակերպ ուժերը: Եւ քաղաքները իրենց ոխը, եւ քաղաքները ընել Հայութեան վերջին ապաստանը:

— Ուրեմն միայն Հրաչք մը կրնայ փրկել մեր մնացորդացը: Ուժերը անհասար են:

— Այո՛, ռազմական գետնի վրայ շատ վտանգաւոր է մեր կացութիւնը: Ճիշդ է, որ թուրքերը մեր դէմ լեցուած են սրով եւ ատելութեամբ, բայց իւրաքանչիւր Հայ պիտի կուսի տասը հոգիի պէս: Որովհետեւ այս կռիւը պիտի ըլլայ ճակատադրական. կենաց կամ մահու կռիւ է: Եթէ Հայերը տեղի տան, պիտի ջնջուի իրենց վերջին կուռանը, պիտի քանդուի իրենց վերջին օճախը, եւ իրենք պիտի զրկուին գոյութեան իրաւունքէ:

— Մանուկ մը իսկ կըսելով տուեալները պիտի արձակէր անխաւաքական վճիռը, թէ՛ Հայերը արդէն պարտուած են դալիք ճակատամարտին:

— Պէտք չկայ այդքան անոգոք վճիռներ արձակելու: Ըստ անձանց շնորհիւ թուարանական խնդիրներու: Ինչ, որ երկարաշափ եւ ու Եւրոպա արած մարդ, պէտք է ինձմէ յաւ դիտնոս, որ պատերազմներու մէջ մէկը հաւասար չէ մէկի, ո՛չ ալ Հազարը՝ հազարի: Կայ բանակներու զիւրքը, կորովը, իտէպը եւ ժամանակը:

— Ըսել կ'ուզես, թէ Հայ ջիւր ու ցան բեկորները պիտի կարենան կանգնեցնել այս արիւնարբու հորդաները եւ տէր կանգնել իրենց ճակատադրին:

— Ես շատ բաներու տեղեակ եմ եւ կրնամ բնել, որ Հայերու կացութիւնը յուսահատական չէ: Ճիշդ է, որ ռուսական ճակատը փլեցաւ խաւաքարտէ բերդի մը պէս, թէ՛ Հայերը մնացին միմեկի դերազանց ուժերու դէմ ու նահանջեցին: Չկրցան պաշտպանել ո՛չ Երզնիան, ո՛չ ալ Էրզրումը: Տարօնի ճակատն ալ փլած ըլլալու է: Կարող անպայման կը գտնուի Հիմա թուրքերու ձեռքը: Բայց պէտք է դիտնոս, որ թուրքերն ալ անակնկալի եկան: Իրենք ալ պէտք եղած զօրքը չունէին այս ճակատին վրայ: Չկրցան օգտագործել առիթը եւ կորսնցուցին թանկագին ժամանակ:

Չարժացած կը նայիմ Չապէլի աչքերուն: Ուրիշ՞ արդեօք տեղեակ է այս ռազմագիտական վերիվայրումներուն:

Կը հասկնայ միտքս ու կը պատասխանէ.

— Մի՛ մոռնար, սիրելիս, որ կիկը եղած եմ Հայ լրտեսի մը, եւ Հարսը՝ Հռչակաւոր գաւառան Սիմոնին: Ճիշդ է, որ զիս հեռու կը պահէին իրենց գաղտնի իրաւացութիւններէն: Պէտք է բնել, որ Արշակ իւրազ Հայաստեաց էր, քան իր Հայրը եւ կը ջանար հաճելի ըլլալ ինձի: Կարելիս կ'ընէի զինքը չէզոքացնելու համար եւ շատ բաներ իմացայ իրմէ: Սիմոնի զիւրք-ցիւրեկ կը ըլլէր, Հայերը լրտեսելու համար: Արշակ հօրը քաղած տեղեկութիւնները գրի կ'առնէր ու կը տանէր Էրզրում, զինուորական Երկրորդ Գրասենեակի պետին: Հարկաւ այդ գրասենեակները երբեք չկրցայ ձեռք անցնել:

— Բայց կը գուշակէիր անոնց պարունակութիւնը:

— Արշակին գէժը դարձած էր կոտորածի հայելին: Չային շեշտէն իսկ կը հասկնայի մերիներուն կացութիւնը, որ ընդհանրապէս փայլուն չէր եւ երթալով կը վատթարանար: Այնքա՞ն կը տառապէի իմ անկարողութեան համար: Ինչի՞ կը ծառայէր իմ գոյութիւնս, իմ երիտասարդութիւնս, երբ մաղի չափ չէի կրնար օգտակար ըլլալ ազգիս: Օր մը, երբ Արշակ, իր սենեակը քաշուած, կը շարադրէր իր գաղտնի տեղեկութիւնները, ներս խուժեցի ու գրած թուղթը առնելով բզիկ-բզիկ ըրի: Արշակ զայրացած սուրբ ելաւ ու խոյացաւ վրաս:

— Ի՞նչ կ'ընես, ի՞նչ կ'ընես, — ըսաւ: Կ'ուզես որ վաղն իսկ երկուքս ալ կախազա՞ն բարձրանանք:

— Ո՛չ, — պատասխանեցի, — կատարան չենք բարձրանար, — ու ծոցէս հանցի ատրճանակը, որ հօրս տունէն բերած էի, — եթէ շարունակես այս վատ արարքներդ, ձեռքէս չես ազատիր: Եկած եմ քեզ սպաննել ու յետոյ մեռնիլ: Արշակի ղէժը գունատուեցաւ յանկարծ: Կը նմանէր մէկու մը, որ կանգնած է լաթի մը վրայ ու տակը կայ անյտտակ անդունդ մը:

— Թուրք կառավարութեան ձեռքէն թերեւս կարենաս պատիլ, — զայրացայ աւելի, — բայց երբեք իմ ձեռքէս: Թուրքը կրնաս խաբել, Չապէլը խաբել անկարելի է:

— Ի՞նչպէս կ'ուզես որ փրկուիմ այս կացութենէն, դիտես որ օժիքս հօրս ձեռքերուն մէջ է:

— Կը շարունակես գործդ, կը գրես տեղեկութիւններդ, բայց կ'ալլափոխես ճշմարտութիւնը:

— Եթէ այլափոխեմ ճշմարտութիւնը՝ դիս շարժարանքներու տակ կը սպաննեն:

— Այնպէս թէ այսպէս, ինքզինքդ պէտք է մտած սեպես: Եթէ ըսածներս ընես, թերեւս կեանքդ փրկես: Կը վկայեմ մերիներուն առջեւ, թէ դուն մեծ ծառայութիւններ ըրիր Հայերուն:

Չպատասխանեց, ու սկսաւ երթելու կէտնակին մէջ: Յետոյ գարձաւ իմ կողմս:

— Ի՞նչ պէտք է ընել, — հարցուց: — Շատ պարզ է բնկիւթդ: Տեղեկութիւններդ գրէ ուղածիդ պէս, միայն ցոյց տուր, որ Հայերը կարծուածին չափ տկար չեն: Մեծցո՛ւր անոնց ուժերուն թիւը, հասկցո՛ւր, որ տակաւին ուսումնական մէկ մասը կը մնայ իր դիրքերուն վրայ ու կը կռուի Հայերու կողքին, պաշտպանելու համար Կոփկաօր:

Արշակ մերժեց նախ, յետոյ կամայականաց տեղի տուաւ, ու խոստացաւ պէտք եղածը ընել: Կարգացի առաջին գրութիւնը ու գոհ մնացի:

— Սակայն կրնար շղթկել քեզի ցոյց տուած գրութիւնը, շարադրել ուրիշ մը:

— Մի՛ մոռնար, որ Արշակ վախճանին մէկն էր: Եւ աւելի կը սարսափէր Հայերու վրէժէն, քան թուրքերու առեանէն: Աւրիշ փաստ մը, որ Արշակ կատարեց իր խոստումը, այն է՝ որ թուրքերը ատենուան մը համար կեցուցին իրենց յատկապէս զայրաց ու սկսան ուժեր հաւաքել: Հասկցած էին, որ իրենց համար որեւէ ճարտարութիւն, այս ճակատի վրայ, կրնար ծանր անդրադարձներ ունենալ իրենց ապագայ սահմաններուն վրայ:

— Սակայն չե՞ս կարծիր, որ թուրքերուն այս զգուշութիւնը կրնայ աւելի վտանգաւոր ըլլալ մեզի՞ Հայերու համար: Անոնք աւելի զօրաւոր ու աւելի կազմակերպուած ուժերով պիտի շարունակեն իրենց արշաւանքը:

— Մեզի համար ժամանակը մեծադոյն բանակն է: Կը կարծես որ այդքան դիւրին է թուրքերուն համար այս ուսին ճակատները պարզելով գինուոր ու դինամիթերը ուղարկել դէպի Արեւելեան ճակատը: Անոնց ալ կարելիութիւնները սահմանափակ են: Մեզի համար աւելի կարեւոր է տասը-քսան հազար դինուոր հաւաքել մեր երկիրը պաշտպանելու համար եւ դէմ դնել թուրքին, քան անոր վաթսուն հազարնոց, կամ հարիւր հազարնոց բանակով մը արշաւելը:

Ո՛րքան ինչացի է սիրած ազնիկը: Կ'առնեմ ձեռքերը ձեռքերուս մէջ: Կը նայինք իրարու աչքերուն, կը յուզուինք, բայց շուտ կը զուպենք մեր արցունքնե-  
րը:

— Պէտք է շտապենք, — կ'ըսէ Ջա-  
պէլ, — անգնինք մերիններուն կողմը: Կը  
զանուինք երկու բանակները բաժնող  
միջոցին մէջ, ազցանին երկու ակառան-  
բուն միջեւ:

Բարձունքները, ուրկէ կը քալենք,  
կը հասնին իրենց վախճանին: Դաշտա-  
վայրը շատ հեռու բլլալու չէ: Բլուրնե-  
բու շարք մը, եւ պիտի գտնուինք բաց  
տափաստաններու վրայ: Ձենք գիտեր  
մէք ենք եւ ի՛նչ կայ մեր շուրջը: Իրրեւ  
ուղեցոյց ունինք արեւը եւ իբրեւ նպա-  
տակակէտ՝ արեւեղքը:

Ահաւոր լուսթիւն մը կը տիրէ բը-  
նոթեան վրայ, եւ սակայն անապատն ու  
ամալուսթիւնը շեն մեզ շրջապատողները:  
Պատարազմի հսկայ մեքենան, որ տակա-  
ւին երէկ կը դուռար այս երկինքին տակ,  
լաժ է ժամանակի մը համար: Բայց  
շուտով պիտի արթննայ անկուշտ մոլո-  
խը՝ վերջին ակործակով լափելու հա-  
մար մեր աղբին բեկորները: Աղաղուն եւ  
ուժասպառ կմախք մըն է, որ պիտի  
կանգնի, կասեցնելու համար հնձող ու  
ճգնող մեքենային յառաջխաղացքը:

Անտառը լաւ պտտուպարան մըն է մե-  
զի պէս փախտականներուն համար:  
Դիւրին է անհետանալ անոր մութ ու կա-  
նաչ սաւանին տակը: Նոյն ատեն վտան-  
գաւոր, որովհետեւ իւրաքանչիւր թու-  
փին ետեւը, իւրաքանչիւր փոսին մէջ,  
լարուած թակարդ մը կրնայ մեզի ոպա-  
սել:

Թակարդ... ձեռքով նշան կ'ընեմ  
Ջապէլին, որ կանգ առնէ: Ջայներ կը  
լուսին կէտէ մը, որ դժուար է կեդրոնա-  
ցընել: Խուճ մը մարդիկ կը խօսին  
բարձրաձայն: Թուրքեր բլլալու են: Հը-  
բացանները կ'ընկնենք մեր ուսերէն ու  
լուծած մեր ափերուն մէջ՝ կը յառաջա-  
նանք զզուշուրթեամբ: Ջայները կրթալով  
կը յստականան: Հիմա գիտեմ, թէ ուր-  
կէ՛ կու գան անոնք:

Որտ թուփեր կը պաշտպանեն մեր  
ներկայութիւնը: Ահա՛ դեռակ մը, որ կը  
հոսի զառիթափն ի վար: Ջուրերը արա-  
զահոս են ու վճիտ: Խոսակցութեան ձայ-  
ները կու գան այդ գետակին ափերէն:  
Ծառերու բունին մէջէն կը տեսնեմ տա-  
նեակ մը թուրք զինուորներ: Ո՞ճանք  
կանդեամ՝ կը հսկեն, միւսները կը լը-  
ւացունին կամ ջուր կը խմեն:

— Անապարեցէ՛ք, — կ'ըսէ կանգ-  
նողներէն մէկը, որ տասնապետը բլլա-  
լու է խուճրին — մեզի ըտեկցաւ, որ այժ  
մը նետեք դաշտավայրին կողմը ու վե-  
րադառնանք: Այս անտառին մէջ հայ  
չեքէ՛նք կը վիտան:

— Է՛հ, Օսման, — կ'ըսէ լուաց-  
ողներէն մէկը, — գուն ալ միշտ կը  
չափազանցես: Չեքէ՛նք անուր կայ,  
իրենք չկան: Այս սրբա՞ն կը վախճա  
էրմէնի կետուրներէն:

— Էրմէնի մերմէնի չկայ: Զինուորը  
գինուոր է: Տեսա՛ր ինչպէ՞ս կոուկցան  
էրդու՛մի առջեւ: Ծիշչէ է, որ տեղի ար-  
ւին ու քաշուեցան, բայց պիտե՛ս ինչ էր  
կացութիւնը, անոնք հինգ հազար էին,  
իսկ մենք յիսուն հազար: Եւ գիտե՛ս ով  
է այս շրջանի իրենց հրամանատարը:  
Անդրանիկ փաշան...

Անդրանիկ անունը լսելուն պէս  
գինուորները կը զազրին ջուր խմելէ եւ  
աջ ու ձախ նայելու կը սկսին: Եկտոյ  
մէկիկ-մէկիկ ոտքի կ'ելլեն ու կը պատ-  
րաստուին մեկնելու:

— Օնպաչի՛, իբաւունք ունիս, —  
կ'ըսէ նոյն գինուորը, — այս փափիւր-  
ներէն պիտի չաղատուինք երբեք: Կը  
սպաննենք ու կը սպաննենք, եւ կրկին կը  
ցցուին մեր դէմը, կարծես հողէն կը Եը-  
նին:

Զինուորները գետնէն կը վերցնեն  
հրացանները, կը դնեն իրենց ուսերուն  
եւ կը հետեւին տասնապետին:

Այժմ ճամբան բաց է մեր առջեւ: Կը  
չարունակենք իջնել դառիթափը: Ծառե-  
րը կը նօսրանան եւ դաշտավայրը կը տա-  
րածուի մեր առջեւ: Անխոհեմութիւն է,  
նետուիլ բացութեան մէջ, ցերեկով, երբ  
գիտենք, թէ հազարաւոր հեռագիտակ-

ներ կը գննեն այդ վտանգաւոր տարածութիւնը: Պէտք է սպասել գիշերուան՝ հեռանալու համար անտառի հովանիէն: Կը գտնենք յարմար անկիւն մը հանդէվու համար, վերէն հասող դետակը մինչեւ մեզի կը բերէ իր վճիտ ջուրերը:

Զապէլ պայուսակէն կը հանէ ուտեստեղէն: Այնքան յոյնած ենք, որ իրարու հետ խօսելու եռանդն իսկ չունինք:

Արեւը կամաց-կամաց կը թեքի բլուրին ետեւը ու մութը կը տեղայ մեր շուրջը:

\*,

Կը քայլենք ամրոյշ գիշերը: Փուշեր կը խածնեն մեր արունքները: Գարեկ կը զարնուին մեր ոտքերուն, յաճախ կ'իյնանք փոսերու մէջ: Միայն մէկ նպասակ ունինք. հեռանալ այդ բլուրներէն, ուր թուրքերը դէրք բռնած են եւ հասնիլ տեղ մը, ուր կարենանք պաշտպանիլ գալիք փոթորիկէն:

Անսահման է Արարատեան դաշտը, եւ մենք երկու մը շրջաններու պէս կը յառաջանանք, մրցելով ժամանակին եւ միջոցին հետ:

Եւ վայրկեանները կը համբոյն մեր քնիւկերը, ժամերը դիրար կը հրմշտկեն ու մէկ կողմ կը ննանն մեր վրայէն գիշերուան մութ, բայց պատասխարող սաւանը: Դիմացը՝ հորիզոնը կը ճերմկի անդալաբար: Կ'արագացնենք մեր քայլերը տեղ մը հասնելու համար, ուր ըլլան ծառեր, բլուրներ, հայեր:

Ու մայրսեան երկինքին մէջ կը բարձրանայ արեւը: Ու կը տեսնեմ առասպելական հսկաները մեր հայրենիքին: Կը տեսնեմ Մասիսի զոյգ գագաթները, այնպէս՝ ինչպէս որ երեւակայած էի: Անմահն է տեսարանը, աստուածային: Հոս, այս շէտերուն հովանիին տակ, կը դանուէր եղեմք, երկրաւոր դրախտը: Եւ զարմանալի չէ, որ քաջ Արմէններուն պէտքը, անցնելով լեռներ ու դաշտեր, իր ժողովուրդին հետ, բնակութիւն ուզած է հաստատել հոս, այս հիանալի, գեղեցիկ

ու միանգամայն վիթխարի ու սարսուղ-դեցիկ բնութեան մէջ:

Արեւը կը բարձրանայ մըջիւնի առազութեամբ ու մենք ալ՝ մարդկային քայլերով կ'ընթանանք հակառակ ուղղութեամբ: Տարօրինակ լուսթիւն մը կը տիրէ մեր շուրջը: Թուշուններն իսկ կը վարնան երդելէ ու կը թեւածեն շատ բարձրերը, նախդալով մօտալուտ երկրաշարժ մը: Տեղ-տեղ, գիւղերու փլատակներ կը խանդարեն դաշտավայրին միօրինակ հարթութիւնը: Հողը խոպան, տուները՝ աւերակ:

Ու կամաց-կամաց մթնշաղը կ'իջնէ երկինքէն:

Ատենէ մը ի վեր, թեթեւ հովին, որ կը շոյէ մեր դէմքերը, կը խառնուին արտաբուրումներու ախփներ: Նոյն հոտն էր, որ կը շրջապատէր դիւ, երբ մեռելներուն հետ կը պարէի Համբարձման վանքին փլատակներուն մէջ: Որքան կը յառաջանանք դէպի արեւելք, այնքան կը բազմանան դարչահոտութեան ախփները: Կարծես՝ նեխութեան հիւլէններու սրուակները մէկիկ-մէկիկ կը փլուզին անտեսանելի մատնետու ճնշումին տակ, իրենց պարունակութիւնը տարածելու համար բնութեան արդանդին մէջ:

Զապէլ կը քայլէ կողքին, ոււնդերը լայն բացած: Դէմքին վրայ կ'արտացոլայ ո՛չ թէ զոլուանք, այլ տեսակ մը տըխուր արգահատանք: Մասները կը պրկուին թեւի վրայ, շնչառութիւնը կը ծանրանայ: Ես սակայն վարժուած եմ մարդոց ու բնութեան բոլոր տարօրինակութիւններուն:

Մութը կոխած է արդէն, եւ մենք տակաւին կը շարունակենք քայլել:

Եւ յանկարծ բարձունքի մը ետեւէն, դաշտին ամրոյշ տարածութեան վրայ կը պլպլան լոյսեր: Կը նետուինք փոսի մը մէջ ու կը սպասենք: Մեր շուրջը ո՛չ աղմուկ կայ սակայն, եւ ո՛չ ալ շարժում: Զգուշութեամբ դուրս կ'ելլենք փոսէն: Լոյսերը միշտ նոյն տեղն են, հարիւրներով, հազարներով:

— Ռուսական բանակի կեդրոնատեղին ըլլալու է, — կ'ըսէ Զապէլ ական-



ընս, — զորով պէտք է ըլլանք. խաւարին մէջ անկարելի է զանազանել բարեկամն ու թշնամին:

Բաւական կը յառաջանանք, ու աստղագործ երկինքին տակ կը տեսնենք վըրաններու շարքեր, որոնք կ'երկարին հորիզոնէ հորիզոն:

Եւ ճիշդ այդ պահուն կը պատահի տարօրինակ բան մը. լոյսերը կը մարին մէկիկ-մէկիկ, հողիներու պէս, որ կը բաժնուին տկարացած մարմիններէն: Ու կը մնայ մէկ հատիկ լոյս, որ ինծի կը յիշեցնէ Լուսաւորչի առասպելական կանթեղը:

— Զայգի՛լ, — կ'ըսեմ, — զուն հոս սպառնէ: Եթէ ինծի բան մը պատահի, հետադի՛ր:

Կը սողոսկիմ զդուշութեամբ զէպի վրաններու շարքը, դէպի միակ լոյսը: Ո՛չ մէկ ձայն, ո՛չ մէկ շշուշ, ո՛չ մէկ պահակ: Ո՛ր ես, այդ հազարաւոր լոյսերը, այդ հազարաւոր դիմուորները, որոնց համար լարուած ըլլալու են այս տաղաւարները:

Սողալու պէտք չկայ այլևս: Ոտքի կը կանգնիմ ու կը քայլեմ: Առաջին դիմուոր կը զարնուի առջեւ, փոքրիկ վրանի մը մուտքին առջեւ: Քանի մը քայլ անդին պառկած են երկու ուրիշ դիմուորներ, եւ աստղերէն իջնող ազօտ նշոյլին տակ կը նշմարեմ անշարժ մարմիններ՝ դատպատ կամ խուճ-խուճ:

Մարած լամբերը կը մխան տակաւին: Ահա խոշոր վրան մը, որուն մէջ կը պլպլայ տակաւին միակ կենդանի լոյսը: Երիտասարդ դիմուոր մը երկնցած է մուտքին առջեւ: Աչքերը կը փայլին մութին մէջ, ազամանդներու պէս արտացոլացնելով մեռնող լամբին լոյսը: Զեռքս կը դնեմ ճակտին: Տակաւին մարմինը կը պահէ որոշ ջերմութիւն մը: Հողին նոր աւանդած ըլլալու է: Կը փակեմ աչքերը: Լամբը կախուած է վրանին կեդրոնական կայմին: Սրուակին մէջ քարիւղ չկայ այլևս. պատրոյսը սկսած է անխանայ:

(Շար.)

Վրանին մէջ, երկաթէ շարժական մասնակալի մը վրայ, երկնցած է սպայ մը: Զօրավարի աստիճան ունի: Մուրը կը հանգչի իր կողքին: Աջ ձեռքը ինկած է մասնակալէն վար ու կը պառկի հողին վրայ: Ատրճանակ մը կը դնուի մատներուն մէջ: Կը նայիմ շուրջս: Սեղանի մը վրայ բացուած է քարտէս մը ոռուական տառերով: Կարմիր դիմ մը, ծուռ ու մուռ, քարտէսը կը բաժնէ երկուքի: Կրկին կը ձօտենամ զօրավարին: Կուրծքին վրայ շահնաշաններ հակած են մէկ կողմ, և ճիշդ արտին վրայ բացուած է պղտիկ, կլոր փոս մը: Հրամանատար սպան անմաստպան եղած է: Ինչո՞ւ արդեօք:

Դրան առջեւ պառկած դիմուորին ձեռքին մէջ կը նշմարեմ ճերմակ բան մը: Թերթ մը թուղթ է, ուրիշներ ալ իրենց ձեռքերուն մէջ ունին նոյն թուղթը, որուն մէջ երեսին վրայ տպուած են ոռուերէն քանի մը նախադասութիւն: Կ'առնեմ թերթերէն մէկը: Վրանին լոյսը կը մարի յոնկարծ ու կը դանուիմ թանձր խաւարի մը մէջ: Եւրջս՝ լուծիւն ու դիակներ: Բացի զօրավարին կուրծքի ծակէն, ո՛չ մէկ վէրք կայ դիմուորներու մարմինն վրայ: Կարծես հիւսիսէն փշոզ թունաւոր քամի մը անցած է այս բանակին վրայէն ու շնահեղձ բրած է զայն:

Վրաններու կազմած շրջանակին մէջ տեղը, կը բարձրանան բուրդեր՝ հաստ կտաւով ծածկուած: Բանակին պահեստի զէնքերն ու դիմաձիգներն է: Թշնամին պէտք չէ ախրանայ անոնց: Պէտք է ժամ առաջ հասնիլ հայկական դիմերուն, որ պէտքի այս զէնքերը անցնին մերկաներուն ձեռքը:

Զայգի՛լ չէ շարժած իր տեղէն: Յոգնած ենք, սոված ու շնչատապառ, սահայն ժամանակը չէ հանգչելու: Մեր ազգին դարաւոր երազը կրնայ շուտով իրականանալ, եթէ շտկարանոնք մեր առաքելութեան մէջ:

Ե. Զ.

## Ց Ո Ւ Պ Ը

Խաւարանիստ հին փողոց...

Մարդ մը կ'անցնի  
Լուռ աչեքուն լռ'ւո անուրջ  
Եւ շրթներուն մա'ւթ մրմունջ:

Քաղաքին մէջ մթաստուեք  
Անաւարտ երգի  
Հողմացրիւ փշրանքներ...

...Ու հին, անե՛լ որոնում...

\* \*

Խարխափող ցուպ  
Ու յայտնու կոյր գգուանք:

Ցուպ մը ծարաւ  
Ու արբեցում՝ շշուկներու սարսուռով:


Ցուպ մը անյաւշ  
Այլ խենթ տենչանք խորհուրդներու անծանօք:

Հին ափի մը մէջ մաշած՝  
Ցուպ մը երկչոտ,  
Որ արբեցայ կը փորձէ  
Անծանօթով...

\* \*

Ցուպ մը կ'անցնի  
Կասկածներու հեռուներէն միշտ գգոյշ.  
Հին վիհ մը կայ,  
Ցուպը միշտ գայն կոյրէն հեռու կը պահէ:

ՆԱԶԱՐԷԹ ՊԷՐՊԷՐԵԱՆ



# ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ



## ԱՐԹԻՒՐ ԱԳԱՄՈՎ

Օտար լիզուներով արտասյուսուց ծաղումով Հայ դրոշմերուն մէջ, Թերևս չկայ ուրիշ անուն ճշ, որ անդունդի ախ ստուգութեամբ, անկողով ու գորութեամբ ապրած ըլլայ իր ժամանակը, որքան ազդեցաւ ճիշդ իրականութեան զիչ նաեօթ արտակարգ այս սաղանդը՝ Արթիւր Ագամով: Պիտի յանգնելինք շանկ նայիսկ, որ Ագամով իր հողեկան և իմացական պնդումներով կանխեց իր ժամանակը և ստիպեց Յրանայի ինչպէս և ճիշտ սղգերու յառաջագաւ դրոշմերը ընթանան ի՛ր բացած ճանապարհներին, առաջնորդուն իր շուշյած լոյսերով կամ ժիւրտին իր ձեւակերպած վարկաններուն խորքը:

Իր մանկութիւնը, երիտասարդութիւնը, փառաւոր վաստակով հարջասացած հասունութեան շրջանը մինչև՝ Ագամով ազդեցաւ անձկութեան մեարուն վիճակի ճշ մէջ, անձկալի անցուղարձներու կապեց իր միտքն ու հոգին, ահաա, զգաց, հաստատեց անկեթիթը, հազարակցութեան պակասը և զբամնուած ըլլալու եղերական իրողութիւնը և, ի վերջոյ, եղերականօրին վերջ գրաւ իր կիսնգրն, Մարտ 15-ին:

Արթիւր Ագամով ծնած է 23 Օգոստոս 1905-ին, Հարուսյին Ռուսաստանի Գիւլիստանի զաղաքին մէջ: 1914-ի սկիզբները, իր նեղեղուն հետ, կը փոխադրուի Եւրոպա: Ռուսիը կը ստանայ նախ ժընեւ, ապա կը յանախէ Գերմանիոյ Մայնո զաղաքի Փրանսերին լիսն և զարքազոյն կրթութեան կը տերանայ Փարիզի մէջ:

Ագամով կանուխէն կը նետուի գրական ասպարեզ: Բան տարեկանին կը գրէ վերացական բանաստեղծութիւններ: Իր ստաշին գործը, շեւստովանութիւնք, կը գրէ համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքին, իսկ գերմանացիներու պարտութենէն ետք, իր անունին շուրջ

կը սկսի լաշն հնարարքութիւն մը ծաւալել, երբ Բօժէ Պլան կը բեմադրէ իր «հնդկաստակութիւն» անուն թատերգութիւնը:

Արթիւր Աղամովի գլխաւոր գործերն են.— «Փիճկ-Փռնկ», «Փառ-  
լօ Փաղի», «Ղ-ի գարունը», «Բոլորը բալորին դէմ», «ՕՓ Լիմիթը», «Փրոֆեսոր Թաւան» եւ «Մեղսորդներու Բարձրագոյն Գրգռումը»:

Աղամովի կենսագրիչներէն, իր մշակած գրականութեան մեկնարաններէն մեզի ծանօթ գրեթէ բոլոր գէժերը կը յիշեն զԵրբեքուհարս Հետ իր սերտ կապը, մտերմութիւնը՝ Փօլ էլիարի, Ժորժ Պաթայի, Անթոնէն Արթուրի Հետ, եւ կենցաղը ըմբռնելու, ապրելու, մեկնարանելու Հանդիսութիւն մը կը գտնեն իր եւ տարականոն ուրիշ գէժերու միջեւ, ինչպէս Տասթայիզիկին, Քաֆքան, Քիէրզէկարան ու Հարտէկէրը:

Արթիւր Աղամովի անունը կապուած է յետպատերազմեան շրջանին գոյապաշտ շարժումին գուշակեղանային հրապարակ եկած ապսիւրսի թատրոնին: Բոլոր քննադատներուն հաստատումով՝ ապսիւրսի թատրոնը սկսող, մեւաւորող, կարեւորող շրջանակներէն մեկը վաւերական անդամ է Աղամովի, աստիճանակիցը Սաճուէլ Պէքէթի, էօժէն Իոնեքոյի եւ Ժան Փրեմէի: Իր մանուան աւիթով, «միկարօ» դրականի թատերական քննադատ Ժորժ Լըմարշան պիտի լղարանէր արձանագրելու, թէ «յիսուական քաւականներուն, շնորհիւ Աղամովին էր, որ Պարսիկ քաւարաններու շուտեղ բացուեցան այսպիսիք սեմաւորութիւններու սաշու, որոնք կոչուեցան Պէկէք, Իոնեքօ, Վօքիլ, Թարաիտօյ, Օտիպէքքի եւայլն»:

Մեր ժամանակներու մեծահռչակ միւս թատերագիրը, Իոնեքօ, դարձեալ Աղամովի մանուան աւիթով՝ պիտի հաստատէր.

«Աղամովի գործը գրականութենէն ամբիւն անցնող գործ մըն է»:

Աղամովի մանուան աւիթով, մենք վերստին բացիք ապսիւրսի թատրոնին մասնագէտներէն Մարթին Էսլինի «Ապսիւրսի քաւարանը» անուն շքա հարկերէ աւելի էջ հաշուող գործը եւ դարձեալ հիացումով կարողանք հայազգի թատերագիրին նուիրուած մասնագիտական խոր վերլուծումը: Էսլին, իր կարգին եւ հետեւեալ կարգով առանձնացուցած է շարժումին շքա մեն գէժերը, — Սաճուէլ Պէքէթ, Արթիւր Աղամով, էօժէն Իոնեքօ եւ Ժան Փրեմէ եւ ապա ապսիւրսի հարցը քննարկած է ինքն իր մէջ եւ սակաւաթիւ ուրիշ էջեր նուիրած է զպրօցին հետեւող այլ կարեւոր գէժերու: Արողջական եւ վերին աստիճանի հետաքրքրական ուսումնասիրութիւններ են Մարթին Էսլինի էջերը, որոնք մ'չ միայն լոյս կը սփռեն ցարդ կատարուած ուսումնասիրուն վրայ, այլեւ կը հաստատեն ապսիւրսի կարեւորութիւններն ու լինելութիւնը:

Իրենց ներկայացուցած մեն շահեկանութեան համար, «Բագին» խմբագրութիւնը որոշած է յաջորդարար ներկայացնել Էսլինի առանձնացուցած վերլուծեալ շքա գէժերը, առանձին նոյն մարզին մէջ անուն հանած երկու ուրիշ թատերագիրներ, աշխատակցութեամբ ու՛յս զարկին սակ մեւաւորող երիտասարդ խմբակի անդամներէն Հինգիլ — Յակոբ Փափազեան (Արթիւր Աղամով), Եղարթ Պէրպէրեան (Էօժէն Իոնեքօ), էյո Մարաճեան (Ժան Փրեմէ), Քեար Ճինգալեան (Սաճուէլ Պէքէթ) եւ Թարութեան Պէրպէրեան (Էտուրք Ալպի, Ֆիլմանտօ Արապալ):

Սկսելէ առաջ Մարթին Էսլինի ուսումնասիրութեան, ընթացողին ուշադրութեան կը յանձնենք Փրանսական թերթերէն ու Հանգչսներէն քաղուած հետազոյ վկայութիւնները:

### Վ Կ Ա Յ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ը

Ոչ ոք այնքան պէտք ունէր կրօնքի, որքան ինքը: Կրօնքներէն եւ ո՛չ մէկը սակայն, զորս ընտրելու պէտքը զգաց ժամանակ առ ժամանակ եւ կարճատեւի մը համար, չկրցան շեցնել այն պարսպը, որ կար իր ներսը: Աշխարհի մէջ կարտուած մանուկ մըն էր ան:

Տարիներէ ի վեր շէի տեսած Աղամուղը, տարիներ շարունակ խոստացած էի ինքզինքիս երթալ եւ «յաջորդ շարաքն» իսկ տեսնել զինք: Աւա՛ղ, երբեք չկրցայ յարգել խոստումս եւ ինքզիննս յանցաւոր կը զգամ: Իր գործը անկալիքն ու բացարձակ փնտառութի մը արտայայտութիւնն է: Աղամուղի գործը գրականութենէն անդին անցնող գործ մըն է:

«Էջ Ֆիկարօ Լիթէրէր» ԷՕԺԵՆ ԻՈՆՆՍՎՈ  
Թիւ 1244, 1970



1950 Նոյեմբեր 14-ին «Սփիւտիօ սէ Եան Գ'ելիզաբէ մէջ՝ Ժան Վիլար կը ներկայացնէր Ազատութի «Ներխուժում» անուն թատերախաղը: Այդ թուականներուն էր, երբ շնորհիւ Ազատութի «Պիտիկ Քատրոնիներու դուռները բացուեցան անտարտաճակներուն առջեւ, որոնք կոչուեցան Սամուէլ Պէթէթ, Էօժէն Իսնեսքօ, Վօթթէ, Ժան Թարտիէօյ, Օտիպէրթի Էսայն:

Ինչ որ Ազատութի բերաւ մ'յն ազատագրութիւնն էր, որուն կը սպասէինք, էական բան մը: Պէտք էրաւ, որ Օտիպէրթի մենի, որ անգրագատնանք թատերի լիզուի յեղաշրջման կարեւորութեան, որուն ճիշակ վարպետն էր Ազատութի: Հիմա որ Ազատութի մեռած է, կարելի է այլեւ անգրագատնալ, որ Ֆրանսայի մէջ առաջինը ի՛նք էրաւ, որ արտայայտեց մարդուն «այլասեւրումը» ընկերութեան կողմէ:

«Էջ Ֆիկարօ Լիթէրէր» ԺԱԳ ԼԸՄԱՐՇԱՆ  
Թիւ 1244, 1970



Վարդեմ անդրադառնալ Արթիւր Ազամուղի «Պոստօվանութիւն» գիրքին, որովհետեւ վստահ եմ, որ պիտի խօսուի այս մասին, պիտի խօսուի հակասական կերպով ու հակահաստատութիւններով: Իր մասին եւ իր վրայ պիտի ըլլան անհարկի յարձակումներ, որոնք պիտի դիմաւորուին շմանց կողմէ անմիտ լռութեամբ մը: Ուրիշներու համար անբաժանելի պիտի մնայ անհիկա: Իսկ երբորդ խումբի մը համար տակաւին՝ գրական ըմբռումին մերժումը պիտի համարուի «Պոստօվանութիւն»ը:

...Ահաւասիկ անեզձուածը: Ահաւասիկ միակ ու հազուագիւտ անեզձուածը, որ Արթիւր Ազամուղի «Պոստօվանութիւն» հատորը հրատարակ կը նետէ եւ իս շեմ կրնար մտնալ այդ տեսարան երեւոյթները: Արթիւր Ազամուղն է, որ առաջինը եղաւ հրատարակելու գայն:

Տասթայնիվսիկէն, Քափաշէն, Քիւրթէկարտէն, եւ Հայտէկէրէն անլի տարբեր տեսանկիւնի մը վրայ, անոնց բայրէն վեր, բայրէն հետաւ այդ կիճը, ներս կ'իճը Քրիստոսէ առաջ, երկու հազար տարիով Քրիստոսէ առաջ, ա՛յն կիճը, գոր կը կոչենք երանգութիւն:

«Էջ Նուզէլ Օպէրօթէօր» ԱՆԹՈՆԵՆ ԱՐԹՕ  
Թիւ 245, 1969

Այն՝ ինչ որ կը սպասեմ գրականութենէն, ամէն բանէ առաջ եւ սկիզբէն ի վեր՝ ինծի յուզում պատճառելու անոր թաքուն ուժը չէ՞ միթէ: Բայց եթէ վերջերս Արթուր Ազամովի «Մարդն ու մանուկը» անուն գրքին բնութեւնը մտածելու շատ աւելի ուժգնօրէն յուզուեցայ, քան ուրիշ բազմաթիւ վէպերու եւ պատմուածքներու ընթերցումով, պատճառը այն չէ՞ արդեօք, որ Ազամովի գիրքը աւելի՛ պայծառ ու աւելի՛ է, ինչպէս կեանքը՝ ի՛նքը, և նուազ «գրական», քան իմ կարդացած միւս բոլոր գործերը:

Առանց գոյզն կտակածի, Ազամովի գիրքը կը պատկանի գրականութեան: Գրական աստիճաններուն ամէնէն բարձրին եւ ամէնէն նուազ անմեղ տեսակին:

Արթուր Ազամովի կեանքը, այնպէս՝ ինչպէս կը պատկերացնեն զայն «Յիշատակները» եւ «Օրագիրը», անսահման երազ մը ըլլալով հանդերձ, աւելի մութ է եւ սեւ, քան ճասթայեմակի կամ Բաֆլըյի ամէնէն մութ երգանքները:

Պէտք չէ մոռնալ, որ Արթուր Ազամով հայկական ծագումով սուսուհայտակ անձ մըն է և սնած՝ ճերմակ ոտակերու անսովոր մթնոլորտին մէջ...

«Ըն Նուվէլ Օպերվաթօր»  
Թիւ 190, 1966

ԱՆՏՐԷ ՓԻԷՐ՝ ՏԸ ՄԱՆՏԻԱՐԲ

Այն քատրանը, որ Ալան կարտիեր եղաւ 1950-ական թուականներում, հոգեբանական ախտի մը առաջացուցած մտտեզուրեմէն չա՞նքն արդեօք իր ուժը, ուժ մը, որ ցարգ ուրիշ ոչ մէկ քատերական ներշնչում կրցած էր օգտագործել: Անկասկած ձոյս հետեւած էր այն ֆաւորում, բայց բեմին վըրայ տակաւին նոր էր անիկա, եւ կարգ մը պարագաներու զայրակողութիւն կը ծանարուէր ներքին տագնապներն ու անկուրքիւնները դրսևորելը: Պէ՛էքը, Ազամովը, Վօքիէն, ժընէն ի՛նքն իսկ մինչ այդ անտեսուած փորձասուրբեան մը ասեմաններում մէջ էր, որ գտան իրենց քատերական կանխատեսումները:

Վերջին հաշուով, անձի գիտակցութեան ճախիկն սահմանուան է, որ կը ջնջուի: Մեր մտէրն ու գաղափարները օտիշ ոչինչ են, եթէ ոչ ընդհանուրի գոյակցութեան մասին կազմուած տեսակէտ մը, որուն ընդմէջէն իւրաքանչիւրս կը տարբերինք իրարմէ:

Ազամովի գործին մէջ ամէն անգ է այդ տարբերութիւնը, որ ժամանակի ընթացքին չնախատեսուած լիարժեք մը, ըլլա՛յ իր քատերական երկերում, ըլլա՛յ «Յոստովանութիւններուն», ըլլա՛յ ֆազաֆական յանձնառութեանց մէջ:

Եթէ խեմքը, ջղագարը, ոմրագործը բեմին վրայ կը պարտագրեն իրենք գիրենք, բեմին, որ ընկերութեան նախասիրած վայրերէն մին է, ասիկա անոր համար է, որ մեմք հոն հակառակ կողմէն կը կարդանք նոր գրանաւորումներ, նոր բարձր, նոր ու տակաւին չբանձնուած վերաբերումներ: Այս ձեւով է հաւանաբար, որ պիտի տարվինք Ազամով կարգալ...

«Էա Գէնդէն Իթերէր»  
Թիւ 77, 1969

ՓԱՆ ՏԻԻՎԻՆԻՕ

Իրականութենէն աւելի ճշգրիտ, աւելի իրաւ բլլալու համար՝ միայն մէկ ձեւ կայ, մէկ միջոց, — բանաստեղծ բլլալը: Հերոսական կեանքի դրբ-  
ւազի մը բանաստեղծութեան միջեւ կը տարածուի իրապաշտ կոչուած գրա-  
կանութեան անաղաղը:

«Ծրեւակայական» կոչուած հեղինակներու երկու հատորներ կան, ու-  
րոնք կարծես հրապարակ ելած են իմ այս տեսակէտս պաշտպանելու համար  
միայն: Կը խոստովանիմ, որ մէկ կողմէ «Հաւիթը» եւ միւս կողմէ «Պարսիկ  
ու մեծ գարծաղաթիւնը» անուն հատորներէն ի վեր, Ֆելիսիէն Մարտի  
պուրվարային դասն եւ շար թատրոնը աւելի հսկելի կը թուի գրան հասա-  
րականութեան», բայց որ զիս չի խանդավառեր: Միւս կողմէ, Արթիւր Աղա-  
մովի ընկերային խորք ունեցող ավան կարտ թատրոնը մտային նշանաւոր  
խաղ մը կը թուի ինծի պարզապէս:

Բայց ահաւասիկ որ Աղամով հիւանդանոցի մահճակայի մը մէջէն իր  
կեանքին «ամփոփումը» կը գրէ՝ կարճ, կտրուկ, չոր ու սարսուղազեցիկ  
պարբերութիւններով, որոնք զգայացունց երկի մը կը վերածեն «Մայրն ու  
մանուկը» խորագրով իր գիրքը:

«Էլը Նուվէլ Օպերվաթէօր»  
Թիւ 195, 1968

ՔԼԱՏ ԲՈՒԱ

Ինչ որ Աղամով կը փնտռէր՝ տակաւ առ տակաւ եւ բեկոր առ բեկոր  
քառուկ վեր կ'ելլէր ու կը կազմէր քաղաքաւոր այնպիսի մը: Քանի մը բարե-  
կամեմբար աչքին՝ Աղամով ճշմարտապէս կը ցուցնէր իր անձը, կ'ըլլար ան-  
հնարին արարած մը յանկարծ, վիրաւորող, վիրաւորուած, չարարուած,  
բայց տեսանելի լոյսի մը մէջ, որ դարձնէ չէր գար: Ֆեմական անծանօթ-  
ծելի լոյս մը, այնպէս՝ ինչպէս կը տեսնուի «Լա փարոսի»-ի վերջին արա-  
լին մէջ: Լեզուակա՛ն լոյս մը նաեւ, տեղով փնտռուած լոյս մը, որուն մա-  
սին կասկածելի չէ դադրած երբեք, այնպէս՝ ինչպէս պատշաճ է մեծ սիրոյ  
մը, որ վերտուած ըլլար գարմացումով, կասկածանքով եւ սքանչացումով:  
Այսպէս էր այն ատեն, այնպէ՛ս գտայ եւ զինք, մեր վերջին հանդիպման,  
«Մահուան ահաւոր ցաւը» գործէն քանի մը ամիս առաջ:

«Լա նուվէլ րբփիւ Փրանսէզ»  
Թիւ 209, 1970

ՀԱՆՐԻ ԹՈՍԱ

Արթիւր Աղամով «Մայրն ու մանուկը» հատորը կրնայ պժգալի թուիլ  
եւ սրտայոյզ միաժամանակ: Իր մօտ եւս մարդը շատ սերտօրէն կապուած  
կը թուի մահուակին: «Չեմ ուզեր մեծնալ» կ'ըսէր ան, երբ տակաւին տղտիկ  
էր, բայց իր պարագային այս փափաքը աւելի հիւանդապէս պատճառներ ու-  
նէր, քան կարօտի զգացումին յուզած պատճառները: Հատորը, իր երկու  
երրորդով, բաղկացած է հատուկօր յիշատակներէ, իսկ վերջին մասը երեք  
տարուայ հիւանդութեան եւ հիւանդանոցային կեանքի օրագրութիւն մըն է:

Կարեւորը, այս գործին մէջ, աղքատութեան եւ թշուառութեան մասին  
արուած պատկերն է, երբեմն քողարկուած շահանութեամբ, բայց գրեթէ  
միշտ ահաւոր պարզամտութեամբ: Որովհետեւ, Արթիւր Աղամով զիտցած է  
այդ գիրքը օժտել տեսակ մը յստակատեսութեամբ եւ իրաւութեամբ: Սիրտ  
մաշեցնող գիրք մըն է անիկա:

«Էլը Ֆիկարօ լիթերէր»  
Թիւ 1156, 1969

ԲՈՊԵՐ ՔԱՆԹԵՐ

**ԱՐԹԻՒՐ ԱԴԱՄՈՎ**

**ԲՈՒԺԵԼԻՆ ԵՒ ԱՆԲՈՒԺԵԼԻՆ**

ԳՐԵՑ՝

**ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ**

**ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ**

Մարթին Էսլին ծնած է Պուտս-  
փէշտ, բայց ուսումը ստացած է Աւրս-  
տըքիա: Վիեննայի համալսարանին մէջ  
հետեւած է ֆիլիսոփայութեան եւ անգ-  
լերէն լեզուին, միաժամանակ յաճա-  
խելով Ռեմարքի քառերակամ աշխար-  
հասնչակ ակադեմիան, ուրիշ վկայ-  
ւած է իրրիւ քառերագետ:

Մարթին Էսլին 1838ին ձգած է Ա-  
ւրստըքիան եւ մինչեւ 1846 քուակամը  
աշխատակցած է Պի. Պի. Սի.-ին, իր-  
րիւ քառերակամ խմբագիր, մեկնարան  
եւ խումակ: 1863ին եղաւ քառերակամ  
աատիստագորդուճմերու գլխաւոր պա-  
տասխանատու, պաշտօն մը, զոր կը  
պահէ մինչեւ օրս:

Էսլին հրատարակած է Յամուէլ  
Պէէէթի մասին գրուած առանձին հո-  
տար մը եւ կ'անոնաւորաբար կ'աշխա-  
տակցի շարք մը օրաքերքերու եւ պար-  
բերակամներու, ինչպէս *ճիւղանժըր*,  
*Քրատերգութիւններ եւ զերտասաններ*,  
*Եւրեւ Երթ Քայմը* եւ այլն:

Պրէյթի մասին գրուած Մարթին  
Էսլինի առաջին գիրքը, իրրիւ փայլաւ  
զօրծ՝ մեծապէս գնահատուած է քննա-  
դատութեան կողմէ, իսկ *ճիւղանժըր*  
հրատարակութեան լոյս ընծայած քա-  
տերակամ շարք մը քերքերուն իր  
գրած յտադարանները կը վայելն մի-  
ջազգային համարում:

*ԱՐԹԻՒՐ ԱԴԱՄՈՎ, ապսիւրտ Թատ-  
րոնի ամենաուճեղ դէմքերէն մէկը, այ-  
ժըմ կը մերժէ Թատերական այդ սեռին  
պատկանող իր բոլոր դործերը: Այն շար-  
ժապիթները, որ այս Թատերագիրը մը-  
ղեցին դէպի ապսիւրտը եւ թէ անոնք,  
որոնք ապա հեռացուցին զինք անկէ, կը  
ներկայացնեն մասնաւոր շահեկանութիւն  
մը: Ազամով, որ ո՛չ միայն Թատերագիր  
մըն է, այլեւ նշանաւոր մտածող մը՝ կը  
հայթայթէ մեզի մասնաւոր պարագայ  
մը, ի մասին մարդկային որոնումներու,*

*որոնք կը մղեն ենթական արտայայտե-  
լու այն անիմաստ եւ վայրագ աշխար-  
հը, որուն տեսական նկատառումները ա-  
ռաջնորդեցին Ազամովը տալու նախ աս-  
սիւրտ-ի պեղագիտական ըմբռում մը,  
յետոյ, աստիճանաբար, վերադառնալու  
իրականութեան խարխիսին վրայ բարձ-  
րացած Թատրոնին, եւ, վերջապէս, ներ-  
կայացնելու ընկերային վիճակներ, ա-  
ռաջադրելով ընկերային յստակ ձգտու-  
մներ:*  
*Արդարեւ, այս Թատերագիրը, որ*



բառանական թուականներու վերջաւորութեան կը մերժէր թատրոնի բնագաւառը պարտքը, ա՛յն աստիճան, որ քարտէսի մը վրայ քաղաքի մը անունին զործածութիւնը գանձ խտելիօրէն սխալ կը նշուէր, կըրտու 1960ին դրեւ պատմական թատերադրութիւններ, ամբողջն զըրուած տեղի եւ ժամանակի մէջ, ինչպէս, օրինակ, «1871-ի Փարիզի Կոմունան»:

Արթուր Աղամով ծնած է 1908-ին, Կիսլովոյցը, Կովկասի մէջ: Զաւակն էր քարիւղի հորերու սեփականատէր հարուստ հայու մը: Իր ծննդավայրը կը ձգէ շորս տարեկանին: Մտողը կրնար հոգալ ծախսերը, եւ, ինչպէս ուսուցիչներէն ընտանիքներու բոլոր զաւակները, ի՛նք եւս եկած էր Փրանսա, իրողութիւն մը, որ յստակ կ'ընծայէ Փրանսական ոճին մէջ իր ձեռք ձգած վարպետութեան համբաւը: Եօթը տարեկանին կը կարգայ Պալլաքի «Եօժէնի Կրանտէ»-ն: Համաշխարհային Առաջին Պատերազմին պայթումին՝ Աղամովի ընտանիքը կը դաժնուէր Ծրէօտէնշիֆատ: Միայն վէճորթամպերկի թաղաւորին մասնաւոր միջամտութեան շնորհիւ է, որ անոր ընտանիքը կը խուսափի անբաղձակ քաղաքացիներու մտայլ նակատարէն, եւ կը ստանայ մասնաւոր արտոնութիւն մը՝ մեկնելու Զուիցերիա:

Աղամով իր նախնական կրթութիւնը կը ստանայ Զուիցերիա եւ աւելի ուշ՝ Գերմանիոյ Մէնց քաղաքին մէջ: 1924-ին, երբ սասնըվեց տարեկան էր, կը մեկնի Փարիզ եւ կը ժողովէ գերիւրագաւառներու շրջանակէն ներս: Կը զրէ գերիւրագաւառ բանաստեղծութիւններ, որոնք կը հրատարակուին «Տիգրանիսիս»-է: Առաջինը կը բարեկամանայ Փոլ Էլիւարի հետ եւ կը վարէ Փարիզի գրական ըմբոստ երիտասարդութեան յատուկ կեանք մը:

Աստիճանաբար կը դադրի գրելէ, ա՛նուազն կը դադրի գրածները հրատարակելէ: Աւելի ուշ ինք անձամբ կը ներկայանայ հողեկան իր ցաւազին տագնապները, զորս կը մէկտեղէ «Երեսուցի»:

նութիւն» խորագրեալ պոետիկ հատորի մը մէջ: Տասթայեվսկեան այս գլուխը-զործոցին առաջին գլուխը, թուարկուած «Փարիզ 1938», կը բացուի բնականական անձկութեան փայլուն հաստատումով մը, որ կը կողմէ խարխալը յոյսագաւառ իր գրականութեան եւ ապիւրտի թատրոնին:

«Ի՞նչ կայ: Անճեմն առաջ գիտեմ, թէ կամ: Բայց ո՞վ եմ ես: Միակ բանը, որ գիտեմ իմ մտիս, այն է՝ թէ կը տառապիմ: Եւ եթէ կը տառապիմ, ատիկա անո՛ր եամար է, որ իմ խորունկ էտիքանս մէջ կրնատում մը կայ, կայ բաժանում մը:

«Բաժնուած եմ, սակայն չեմ գիտեր, թէ ինչէն: Չեմ կրնար անուր տալ անոր: Բայց բաժնուած եմ»:

Մանոթագրութեան մը մէջ Աղամով կ'աւելցնէ. «Նոյսայէս այդ Աստուած կը կոչուէր: Այսօր անու՛մ չունի այլեւս»:

Առանձնութեան խորունկ զգացում մըն էր իրը, զգացում մը, որ ժամանակը կը ճնշէ իր վրայ զեր հեղուկային հակալ դանդաղումով, իր ամբողջ մտք ուժով», կըրտարկանութեան խորունկ զգացում մը, — ասոնք են իր հողեկան հիւանդութեան քանի մը արտանայանները՝

«Տեղի ունեցող ամէն մէկ երեսը-այնպիսի՛ տպաւորութիւն մը կը գործէ վրաս, որ կարծես գերագոյն եւ անմահալի էակներէն մէկը եւ ըլլայի:

«Երբեմն կեանքի այս վիթխարի արագութիւնը այնքան եղբրակամորէն գեղեցիկ կը թուի ինձի, որ կը մխրճէ գիտ յափշտակութեան մէջ: Բայց շատ յաճախ կը թուի նաև երէշային կենդանի մը անկիւտ, որ կը թափանցէ մէջս, կը գէ կ'անցնի զիս, եւ այն ասեմ կը տեսնեմ, որ ամէն տեղ է այդ կենդանին իմ մէջս է և ինձմէ գուրս... Եւ իր մագիլները սուկալիորէն կը մխրճէ միտերուս եւ վայրկեանէ վայրկեան աւելի ուժգնորէն կը պատէ զիս... Անկէ տարտագրուելու իմ միակ ճամբաս գրելն է, տեղեակ պահելու համար ուրիշները, որպէսզի ճայն անգոհամէին մէջ առանձին չզգամ իրենք

գիրնճԳ, գանճ՛ շախով մը կարնման ա-  
զատուիլ անկէ՛»:

Երազներու եւ աղօթքի մէջ է, որ Ազատով ինքզինք ազատագրուած կը զգայ այդ յաճախանքէն — երազներու, որոնք Հնգրին մեծ եւ լուս շար-  
ժումներն են զիշերուան մէջ» . աղօթքի մէջ, որ «կենտական պահանջն է մար-  
դուն, միտնուած ժամանակին ծոցը, ա-  
պատան դանալու միայն իր ներքին նու-  
թեան խորերը, որ կրնայ ազատել զինք, որովհետեւ աղօթքը անմէն դուրս երկա-  
րածութիւնն է զէպի նութեան ամբողջու-  
թիւնը»: Սակայն աղօթել որո՞ւ: «Ան-  
տուժոյ անունը այլեւս մարդուն բերանը չի դար: Այս բառը, որ երկարօրէն դոր-  
ծածուած է, այլևս ոչինչ կը նշանակէ... Աստուած բառին զործածութիւնը դան-  
դաղութենէն աւելի բան մը կը նշանա-  
կէ, մերժում մըն է մտքի կարողութեան, տեսակ մը կարճի կապել է, սարսափելի պղպղութիւն...»: Այսպէս՝ հաւատքի տակնապը նաեւ լեզուի տազնապ է . քա-  
տերը մեր ծերացած բառարաններուն մէջ մահամերձ մարդոց կը նմանին: Ոմանք կրնան ապրիլ, ուրիշներ՝ անբուժելի են»:

«Նստատվանութիւն» հատորին երկ-  
րորդ գլուխին մէջ, թուագրուած ՎՓա-  
րիդ 1939» (հրատարակուած անգլիերէնով «Անասիման կարմիր» խորագրին տակ), Ազատով բիրտ անկեղծութեամբ մը կը նկարագրէ իր հիւանդութիւնը, կը նկա-  
րագրէ ամենահասարակ պրոնիկներէն նուաստանալու իր փափաքը, ինչպէս նաեւ «ճիղիքական հեշտանքին միտող սրբաբը ամբողջական զարմնելու» իր անկարողութիւնը: Կատարելապէս գի-  
տակից էր իր ջղազարութեան (neurosis) բնոյթին, ծանօթ էր նոյնպէս արդի հո-  
գեանութեան եւ նոյնիսկ Փրանսերէնի վերածած էր Եուլիէրի երկերէն մէկը: Ա-  
զատով զիտակից էր ջղազարութեան ար-  
ժէֆին, որ «կը շնորհէ իր հերոսին յըս-  
տակ պայծառատեսութիւն մը, անընդու-  
նելի՛ այսպէս կրչուած բնականոն մար-  
դուն»: Եւ որ այսպէս, մարդուն կու տայ մասպաղակեր մը, որ «կ'արտօնէ իրեն իր

մասնայատուկ հիւանդութեան ընդմէ-  
ջէն նուանելու ընդհանուր մեծ օրէնքնե-  
րը, որով կը բացատրուին աշխարհի բարձրագոյն հասկացողութիւնները, եւ որովհետեւ մասնայատուկը միշտ խոր-  
հրդանշական արտայայտութիւնը կը հանդիսանայ տիեզերականին, կը հետե-  
ւի ուրեմն, որ տիեզերականը կը խոր-  
հրդանշուի ծայրայեղ մասնայատու-  
կով: Հետեւաբար, ջղազարութիւնը, որ կը շափազանցէ անձի մը մտապատկերին մասնակցութիւնը, աւելի կատարեալ ձե-  
ւով կը բացատրէ իր տիեզերական իմաս-  
տը:

Տարէ ետք վայրագօրէն մանրամա-  
նրած նկարագրութիւն մը, որ ինքնին արտանշան է մատչիլովի, ինքնատոր-  
նայման բրտութեան իր ջղազարութեան, իր հայածախտին, ծիսակատարութիւն-  
ներուն եւ մեքենակառութիւններուն՝ Ա-  
զատով կը վերագրուան մե'ր ժամանակ-  
ներու արտանշաններու փնտրուողին, գլուխի մը մէջ, որ խորագրուած է «Նստգրութեան ժամանակը»: Ան կը բա-  
ցատրէ խաղալութիւնը անոր՝ որ անուն չունի, անանուանիլիս, եւ կը շէշէ, թէ բանաստեղծին պաշտօնը ո՛չ միայն իւ-  
րաքանչիւր առարկայ իր անունով կրչել է, այլև՝ «այստնարեկի... այլասե-  
րած զաղափարները, անանկացած վերա-  
ցականութիւնները, — կողորուտած աշ-  
խարհներ, որոնք կը մնան սեփականու-  
թիւնը սրբազան հին մեռելներու»: Լեզ-  
ւին այլասերումը մեր ժամանակին ար-  
տայայտութիւնն է, արտայայտութիւնը նոյն այդ լեզուին խորագոյն հիւանդու-  
թեան:

Ինչ որ կորսուած է՝ սրբութեան պղպղումն է. «ճեռած է հին աշխարհի տաասպելներու եւ ծիսակատարութիւն-  
ներու անսահմանելի իմաստութիւնը»:

Աշխարհի մէջ իմաստի չբացումը կապուած կը մնայ լեզուի այլասերման, եւ այդ երկուքը, յաջորդաբար, կապ-  
ւած են հաւատքի կորուստին, որբազան ծիսակատարութիւններու եւ առասպել-  
ներու անհրեւութացումին: Այսուհան-  
դերձ, այս այլասերումը եւ յուսարեկու-

մը զէպի վերանորոգում տանող անհրա-  
 ժեշտ քայլեր են: Վերելու ախուր եւ ի-  
 մասով պարպուած լեզուն, զոր այսօր-  
 էայ մեղկացած մարդկութիւնը կը մըս-  
 լի, պիտի իր ամբողջ սարսափով, իր  
 անասման անհեթեթեամբ դարձեալ  
 արձագանգէ մենակեաց մարդու մը սըը-  
 արն մէջ, որ արթուն է եւ թերեւս յան-  
 կարծօրէն դիտակցի, թէ չի հասկնար եւ  
 սկսի հասկնալ: Հետեւաբար միակ զոր-  
 ծը որ կը մնայ՝ քանդելն է այդ բոլոր  
 մեռած մորթիքը, մինչև որ մարդը ինք-  
 դինք գտնէ մեծ մերկութեան ժամուն  
 մէջ:

Այս բիրտ ինքնավերլուծման մէջ՝  
 Ալամով կ'ամփոփէ Կապիւլտի թատրոնի  
 փխտոյթայութիւնը, իր առաջին թա-  
 անդութիւնը գրել սկսելէ շատ առաջ:

«Խոստովանութիւն» գործին էջե-  
 րուն մէջ, մենք կրնանք դեռ հետեւիլ ի-  
 րեն, մինչև 1940 թուականը, ճիշդ այն  
 օրերուն, երբ պատերազմը կը մղուէր  
 Փարիզի մէջ, Մայիս եւ Յունիս ամիս-  
 ներուն: Յուլիոսին՝ Քասիս կը գտնուի,  
 Օդաստոսին՝ Մարտիս, այսպէ՛ս՝ 1940 Դեկ-  
 տեմբերէն մինչև 1941 Նոյեմբեր՝ կ'ար-  
 զեւրպակուի օտարահպատակներուն սահ-  
 մանուած Աճէլէսի ճամբարը: Ամիսները  
 կ'անցնին՝ վատութեան եւ ընդարձա-  
 ցումի մթնոլորտի մը մէջ: 1941ի վեր-  
 շուարութեան կը վերադառնայ Մար-  
 տիս, այսպէ՛ս՝ 1942 Դեկտեմբերին կ'անց-  
 նի Փարիզ: «Խոստովանութիւն» գրքոյ-  
 կին վերջին գլուխը եւ յառաջաբանը թը-  
 ւագրուած են 1943:

Ընթեռնելով այս ապշեցուցիչ գիր-  
 քը, սկանառես կ'ըլլանք մտքի մը, որ  
 իր փրկութիւնը կը յուսայ գտնել ինք-  
 նավերլուծման եւ իր կացութեան ան-  
 գուծ ճանաչողութեան մէջ: Շատ կարճ  
 տեւած «Եւր ժամ» գրական Հանդէսին  
 մէջ, օրուն կարճ շրջան մը խմբագիր ալ  
 եղաւ պատերազմի վախճանին, հրատա-  
 րակութեան տուած իր գրութիւններով՝  
 Ալամով կը վերադառնայ իր Հին թեմա-  
 ներուն, բայց արդէն բաժանուած Հոգե-  
 կան փրկակով մը, մտածողի մը գիրքով,  
 երբ պատմական բախտորոշ ժամանակի

մը մէջ, արդէն կանչուած էր ձեւաորե-  
 լու նոր աշխատանք մը՝ նոր զարաշըջա-  
 նի մը նո՛ր սկիզբին համար:

Այդ նոր յայտագիրը կը յատկանշու-  
 ւի երազներու եւ դիւրին լուծումներու  
 ամբողջական բացակայութեամբ: Ձմեռք  
 կ'ամբաստանուինք յոռետեսութեամբ,  
 իբրեւ թէ յոռետեսութիւնը ըլլար զանա-  
 զան երեւոյթներէն միակ ընտրելին, իբ-  
 րեւ թէ մարդը ի վիճակի ըլլար ընտրու-  
 թիւն մը կատարել լաւատեսութեան եւ  
 յոռետեսութեան միջեւ: Նման յայտա-  
 գիր մը անխուսափելիօրէն պիտի ըլլայ  
 քանդիչ, մերժելով գոյութիւն ունեցող  
 բոլոր տոկմաները:

Ան կ'ընդգծէ, թէ արուեստագէտին  
 պարտականութիւնն է խուսափել «չը-  
 նական, հոգեբանական, դիտական թէ  
 ընկերային» երեւոյթներէն մէկն ու մէ-  
 կը ընտրելու վտանգէն. այլ իւրաքան-  
 չիւրին միջոցաւ ան պէ՛տք է ցրտցնէ  
 ամբողջականութիւն մը, որուն մէջ կը  
 մխրճուի ինք: Եւ դարձեալ կատարելու-  
 թեան այս փնտրտուքը, երեւոյթներու  
 ահարկու ալլազանութեան ընդերքներէն  
 վերբերելի իրականութեան որոնումը  
 սրբազան որոնում մըն է. Ձմեռ ժամա-  
 նակներու տաղանդը վլխուորաբար կը օ-  
 նական տաղանդ մըն է, կեանքի եւ մահ-  
 ւան հարց է: Սակայն Աստուծոյ գա-  
 ղափարը մեռած է: Կը գտնուինք շրջա-  
 նի մը նախասկիզբը, երբ գերագոյնին  
 ըմբռնումը բացարձակապէս անսնմա-  
 կան է, ու ճիշդ այդ պատճառով սկա-  
 նառես կ'ըլլանք թաօիզմի եւ պուտիզ-  
 մի դաւանանքներուն վերայայտնու-  
 թեան: Այս ողբերգական խոչընդոտին  
 առջեւ կը գտնէ ինքզինք արդի մարդը.  
 «Ո՛ր կէտէն որ սկսի, ո՛ր ճամբուն որ  
 հետեւի, արդի մարդը կը յանդի նոյն  
 եզրակացութեան, թէ՛ կեանքի երեւոյթ-  
 ներու ետին պահուած կը մնայ գողտ-  
 տիք մը, Հոգիին համար յաւիտենո-  
 րէն անհասանելի, որ ենթական կը  
 դնէ երկմտանքի մէջ. նոյն այդ մար-  
 դը գիտէ, թէ անլուծելի է այդ  
 դազանիքը, սակայն չի դադրեցներ իր  
 անյոյս որոնումները: Ալամով կը մատ-

նանչէ, թէ ապստիտի փրկութիւնը թիւնը խորքին մէջ բոլորովին այս չէ, որովհետեւ կտայած կը մնայ տակաւին ա՛յն համոզումին, թէ աշխարհ ունի նշանակութիւն մը, թէ եւ ասիկա մարդուն հասողութիւնն է վեր է: Այն դիտակցութիւնը, թէ իմաստ մը կայ այս բոլորին մէջ եւ նաեւ ա՛յն դիտակցութիւնը, թէ այդ իմաստը երբեք պիտի չզստնուի՝ ինքնին ոյրերդական է: Որեւէ համոզում, որ աշխարհը ամբողջովին անհեթեթ կը համարէ՝ պէտք պիտի ունենայ պակաս-ցրնելու այս ողբերգական տարրը:

Ընկերային եւ քաղաքական գետնի վրայ, Աղամով լուծումը կը դռնէ Համայնավարութեան մէջ, ըսյց Համայնավար վարդապետութեան իր բերած նըպաստը շատ անհատական ձեւ մըն է: Համայնավարութեան մէջ Աղամով չի դռնէր բնականցական սուրբ գիծ մը: Համայնավար դադափարարանութիւնը գիշարաբար շեշտը կը դնէ մարդկային սարբին վրայ և այս անպատանջով հարցական կը դառնայ Համայնավարութիւնը Աղամովի համար, որովհետեւ զամէն ինչ, որ կը սահմանափակուի մարդկային տարրով մը, ուրիշ բանի չի յանդիւր, եթէ ոչ ենթա-մարդկայինն»: Եթէ այս է իրողութիւնը, ուրեմն ինչո՞ւ յարիչ Համայնավարութեան:

«Եթէ կը յարիմք Համայնավարութեան, ասիկա պարզապէս անոր համար է, որ օր մը, երբ անոր բարձրագոյն նպատակին իրագործումը շատ մտաբուի — յաղթանակը՝ բոլոր հակասութիւններուն վրայ, որոնք կ'արգիլեն ապրանքներու փոխանակութիւնը մարդոց միջեւ — անխուսափելիօրէն պիտի հանդիպի իրականութեան մեծ ճշմարտութեան, որ կը յաւակնէր անտեսած ըլլալ: Երբ ճիւրջակամ արգիլները յաղթահարուած են այլեւս, երբ մարդը պիտի չկրնայ այլեւս խաբել ինքզինք իր ապերազանքութեան բնույթին վերագրուող պատճառներով, այն առեւ կրնամ պիտի գայ անի յիմարտական մտաւարկութիւն մը, որ պի-

տի մերկացնէ բոլոր խաչընդոտները, որոնք իր երազին իրականացման արգիւք կը հանդիսանային: Բայց անորակաւորէն միտակամ այս յայտը պէտք չէ մղէ մեզ մտածելու, թէ կատարեալ ըլլալու չափանիշը մեր արարեցնելուն մէջ կը կայանայ»:

Այս է Աղամովի դիրքը 1946ին: Անկէ ի վեր, իբրեւ արդիւնք Տը Կոլի իշխանութեան եւ 1958 Մայիսի դէպքերուն, կը յարի ծայրայեղ ձախիւն: Ասկայն, 1960ին, երբ կը հարցուի իրեն, թէ փոխած է արդեօք իր կեցուածքը 1948-էն ի վեր, Աղամով կը հաստատէ, թէ իր կեցուածքը չէ փոխուած եւ հաստատում կը մնայ ա՛յն հաստատումներուն, զորս կատարած էր 14 տարիներ առաջ:

Համայնարհային Երկրորդ Պատերազմի աւարտին՝ կը սկսէ գրել թատերգութիւններ: Այն առեւ կը կարգար Սթրինպէրի, որմէ կ'ազդուի եւ կը գրէ «Երուզ խաղ մը»: Աղամով անտեսանաբար կ'ըմբռնէ թատրոնի էութիւնը, կը գրտէ «առօրեայ սովորական անցողաբանները, մասնաւորաբար փողոցին մէջ պատահած տեսարաններ: Ինչ որ ուշադրութիւնս կը գրուէր՝ անցորդներու շարքն էր մանաւանդ, անոնց առանձնութիւնը, խօսքերուն այլադանութիւնն ու տարբրիականութիւնը: Հաճոյք կը գզայի անոնց հատուկտոր խօսքերէն, որոնց միացումը ամբողջութիւն մը պիտի կազմէր եւ որ պիտի ըլլար ապահովութիւն մը. խորհրդանշական իրականութեան հալուոյն»: Օր մը ակնատես կ'ըլլայ ողբերգական իրականութեամբ յայտնուող կայծակնային պատկերի մը, զոր կ'ուզէր արտայայտել: Երբեք մտաբանական մը ժողովրդական երգ մը երգելով կ'անգնէր երկու գեղեցիկ աղջիկներու մօտէն: «Ծոցեցեցէ աչքերս: Սքանչելի էր անտարանը»: Այս պատկերը իրեն կու տայ դադափարը «կարելի բրտութեամբ եւ առարկայակալութեամբ բեմին վրայ ցոյց տայնու մարդուն առանձնութիւնը եւ հարողակցութեան բացակայութիւնը»:

(Շար. 1)

Մ. է.



### ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ

### «ՍԱՅԱԹ - ՆՈՎԱ»Ն

Ըսեմք ի յարմարումն, որ Նևոսյայ տղերքը նպատակ չունին ներկայացնելու Պարոյր Սեւակի Վնայաթ-Նովայա խորագրեալ մենագրութիւնը, անոնք կրնան շատ շատ մտանել այդ գործը, որ էր տարողութեամբ ու ոճով, նորութիւններով ու թափով թուական մը պիտի կազմէ այս տաղանդաւոր բանաստեղծին մտաւորական կեանքին մէջ, ինչպէս Վնայաթ-Նովայայն (1969) ուղիղ տասը տարի առաջ բանաստեղծական ասպարէզին մէջ թուական մը կազմեց Կոմիտասը ջնարական ներսի վերածած իր Վեյլիտի զանգակատուներ:

Ճիշտ 500 էջերէ կը բաղկանայ Վնայաթ-Նովայան, որ, բառին իսկական ստուգումով կը յայտնաբերէ պիտանական մը: Պիտի ըսէինք տեմիլապէս, որ ոչ թէ սայաթնովայագիտութիւնը բան մը կ'աւելցնէր Պ. Սեւակի վարկին վրայ, այլ Պ. Սեւակի դիտութիւնն է, որ նշանակի նպատակ մը կը բերէ սայաթնովայագիտութեան:

Գործը կը բաղկանայ երեք մասերէ, — Սայաթ-Նովայի կենսագրութիւնը, ստեղծագործութիւնը եւ այս երկուքին կապուած ծանօթագրութեանց ընդարձակ բաժին մը: Երեքն ալ եզակի իրենց տեսակին մէջ, օտուած նորութեամբ, թարմութեամբ, արամբարանութեամբ:

Անվերջականն (1952) առջին, երեսուն-քառասուն մտաւորականներ զբաղեցան Սայաթ-Նովայով, երեսուն-քառասուն գիրք ու հարիւրաւոր յօդուածներ գրուեցան անոր մասին եւ կը կարծուէր, թէ կարգ մը վարկածներ լուծուած են ազգէն, համարեալ թէ սպասած նիւթ է Սայաթ-Նովան եւ միայն ստեղծան-յորեղիանական առիթներու կարելի է վերադառնալ անոր: Բայց Պ. Սեւակի գիրքը կը ներքէ այդ շարքերը, երևան հանելով չկուսուած էջմարտութիւններու պատկառելի պուճար մը: Մեր զիտեականներու փաստերուն վրաստանած ընդունած էինք, օրինակ, որ Սայաթ-Նովա ծնած է 1712-ին, եւ 1982-ին ազգովին ստեղծեց հանճարեղ Նոքարին ծննդեան 250-ամեակը, բայց ահաւասիկ Պ. Սեւակ Սայաթ-Նովայի փաստակէն մէջ զոչ ծանկապէրենք ու... թեւապարհերը վերծանելով, 15 նոր ու ըստ ամենայնի համոզիչ փաստերով կը հաստատէ, թէ Սայաթ-Նովան ծնած է ոչ թէ 1712-ին, այլ տասը տարի ետք, 1722-ին:

Սայաթ-Նովայի ծնունդը, մանկութիւնը, երիտասարդութիւնը, երթնակները, պաշ-

ածները եւ անկէ սիրուած զառապանքի անօթ եւ անյուսութեան թոյն արքայազուտար և արքայաջուր էակը այս հասորին մէջ գրուած են հարիւրէ աւելի էջեր՝ մէկը միւսէն չեւ սաղբերական ու շահեկան:

Երկրորդ մասը, որ կը գրուէ շուրջ երկու հարիւր յիսուն էջ, նուերուած է Սայաթ-Նովայի սանգոյարծութեան, ծւ. բնական է, այս բաժինն է, որ կը հանգրսանայ զործին ծանրութեան կեդրոնը: Պ. Սեւակ լայն յուսարձակի մը տակ առած է տարբեր շուր ու զիր ունեցող աշուղին ժառանգութիւնը, կարելի է ըսել համաշխարհային գրականութեան յոյսին տակ, Սայաթ-Նովային ոգւին ընդգծելով շարք մը բացարձակ առաւելութիւններ:

Այս բաժինն մէջ Պ. Սեւակի հիւրաբան արժեյաւորներն ու վերլուծումները, հսկայակիրենց անկարգ նկարագրին, աօրինոց են, ունին անհատական գրում, մ'ը ունին, բան ունին ըսելիք ընթերցողին, կը լեցնեն միտքը, կը զուարթացնեն հոգին: Հծոտաբարկան են մանաւանդ Սեւակի ընդհանրացումները, երբ բազմապատկան կէտներու կը զարնէ սանգոյարծական արարքին մէջ դեր ունեցող մկաններն ու շիշերը, ուղեղին գործը եւ հոգիին մասնակցութիւնը, հոնտորն ու բանաստեղծը, ճարտասանն ու արուեստագէտը, գործն ու ստեղծարարութիւնը, սիրերգութեանն ու մայմներգութիւնը, ունեցածը տալու բխումը եւ ճատարական պատուէրով՝ պահանջուածը թիւնու ստիպումը:

Եստուանկելով նոյն ընթացքը, բանաստեղծ-գիտնականը կը շահայ ընդհանուրն ու մասնաորը գանազանել, ընդգծել պաշտօն կատարողին եւ պաշտամունք մատուցանողին տարբերութիւնը, տարբերութիւնները տակաւին լուսարարին ու պատարագիչին, աշուղին ու բանաստեղծին, արհեստասորին ու արուեստագէտին, միշտ հանելով առաւելութեան բաժին մը զՂուչակի փոսից արքայական պալատ բարձրացած՝ ու իր գանձերով արքաները շուր մէջ մզող բանաստեղծին, որ եղաւ ժամանակ լցնող շունը, տարածութիւն լցնող ող, եւ այդպիսին մտում է մինչև ելմա՝ 200 տարի յետոյ էլ, ա'ն՝ որուն բանաստեղծութիւնները կարգալով զեւ այսօր իսկ զլեւ հասկանում՝ Յա՛ է յստում, քէ՛ իմէդ. Յա՛ է սիրում. քէ՛ դու. Յա՛ է այրում, քէ՛ մեկէ. տակաւին ա'ն՝ որուն զօջ քէ լիրիկան է փիլիսոփայական, այլ ճրա փիլիսոփայութիւնն է լիրիկականը:

Նման հաստատումներու կողքին, ընթերցողը դարձեայ մեծ հանդիման կը կարգայ Սեւակի պորթին այն հաստատումները, որ փորձուած է Սայաթ-Նովայի նախորդներուն ու յետնորդներուն միջև արեւնակցական կապ մը ճշդել, ճշդել անոր մեծ նախահայրը (Նարեկացի), բանաստեղծ, երամիշտ, երգիչ ու եռապատու հոգեւոր հայրը (Եսարայի), արժանաւոր միւս նախորդները (Քուչակ, Յովնաթան) և ապա յաջորդները. — զՄԻ 100 տարի, անց պիտի զար մի հանճարեղ պատանի՝ Պեարոս Դուրեան անուամբ... Նրանից աւելի քան հարիւր տարի յետոյ պիտի դար մի երկրորդ հանճարեղ պատանի, այս անգամ Միտոց Միծաբենց մականուամբ, որի եթէ հայրը չէ Սայաթ-Նովան, ապա կը զաւայրն էք, անկէ ետք Վարուժանը՝ Սայաթ-Նովայի այս երրորդ մեծ թուրջ եւ թուանեանը՝ Սայաթ-Նովայի թուանաթուրջ եւ թէ՛ յարիւնից, որոնք կ'իմասական նոյն պայմաններէ ծնունդ առած են, կու գան նոյն արիւնէն, ունին խառնուածքային հասարակաց պիտիք, բայց մեծ են իրենց տարբերիչ յատկանիշներով, ապրելու, զգալու, սիրելու, այրելու, առապելու եւ ստարգայտելու քրենց բացարձակ կանանկերով:

Պ. Սեւակի փորձանշալ, տարրադառելու, բիրեղացնելու ուժը երեւան կու գայ մանաւանդ հոս, երբ յստակ յնորումներով կը զատորոշէ մէկուն կամ միւսին ընթացը: Ռաւական է յիշել սրբնակ մը, Սայաթ-Նովայի ճաղերուն եւ Քուչակի Հայերէններուն իր կազմած տեսակարար կէտը, զայն Հայերէններէ, որտեղ կայ եզրուութիւն, բայց ոչ լիմնութիւն, կայ յարեանաւ կեանք, բայց ոչ լայն ու ծաւալուն կենսակայեցողութիւն, մինչև իսկ իրարութիւն, թայց ոչ խորայնութիւն:

Ու տակաւին՝

«Այս իմաստով՝ Սայաթ-Նովան սիրահարուած չէ ալ սիրոյ: Քուչակը պակի ահրե

է, մինչդեռ Մայաթ-Նովան՝ ընթացքի: Քուշակի սէրը մեծ մասամբ պարագայական-տարբա-  
յին է, ախրն Մայաթ-Նովայինը՝ վնասակար-նակատարակամ: Առ էթէ տանիւս է Քուշակը,  
այլա՛ պատճառից, իսկ Մայաթ-Նովան՝ հետեւամնիցք:

Այս նրբութիւնը, ու բազմական եղբերու հանդէպ մասնաւոր նախադասութիւններ առ-  
նցող մտքի մը բուսականին հարուստ տուեալներով՝ վերլուծման ենթարկուած են Մայաթ-  
Նովայի դասընթացները, տեսնելու անոր կերպը, լսելու կերպը, բոյրեր որսալու կերպը,  
ու սիրելու, ու այրելու, ու տառապելու. այրելով ու տառապելով հրաշագործելու անոր բո-  
լոր հզանակները:

Մտքի աշխատանքները, — հետազոտութիւն, ուսումնասիրութիւն, վերլուծում, —  
մասնաւորներու մարզն է եւ մտքի աշխատանքները կարգաւոր կերպը զարմեալ կը մնայ մաս-  
նաւորներու կերպը, այսուհանդերձ, համարձակութիւն կորսիլ է ըսել: Թէ Պ. Սեւակի «Մայ-  
այաթ-Նովան» այդ սահմաններուն մէջ շահամասնակցութիւնը որո՞ն է, իրողութիւնները վերլու-  
սելն ստուգող եւ բազմաթիւ դադանքներ լոյսին հանող Բարձրաշունչ մտտեան մը, որուն  
յայտնութեանն է՛արք միայն կը պահանջ, թէ ինչպիսի գոն մը շունչներ երէկ եւ ինչպիսի գոն-  
մի մը անք ենք այսօր:

Երեքըզուեան եսմեծար բանաստեղծին վաստակը Հայաստանի մէջ մինչեւ օրս  
չտեսնուած ամբողջութեամբ մը արժեւորող այս գործը զի՛նն է լայնատարած ու երկարատեւ  
աշխատանքի մը, որուն կառուցման ատեն, իր հմտութեան ստրկութիւնը՝ Պ. Սեւակի զի՛մած է  
երեսունի շաբաթներէն, թուած է երկու հարիւր յիսունէ աւելի օգտագործուած գրական-  
նութեան խորագիրներ, առաւել՝ արագ ակնարկով կամ իրենց մտածումներուն հետ յիշած է  
հայ եւ համաշխարհային բազմաթիւ բանաստեղծներու, գրագէտներու, քննադատներու առ-  
նեւներ, բայց, — զարմանալի է հաստատել, — ոչ մէկ տեղ, ոչ մէկ տեղով յիշատակած  
է Մայաթ-Նովայի արուեստին ու խորհուրդին մէջ անհարկեցիկ թափանցումներ կատարած  
երկու դէմքեր, — Յակոբ Օշականն ու Եզ. Տաննապետեանը:

Հայաստանի գործածած այժմուս ակնոցով հերթիկոտներ չեն համարուիր Օշականն  
ու Տաննապետեանը եւ ոչ ալ Մայաթ-Նովայի վաստակին եւ Մայաթ-Նովայի մասին կուտակ-  
ուած գրականութեան քաջհմուտ Պ. Սեւակին կրթային անձանցով ըլլալ գնահատելիք ամուս-  
նքի (1944-46) տասնըվեց թիւերուն փոռուած Օշականի մենագրութիւնը, կամ «Նայիրի» ամ-  
սաղրին (1942) մէջ ստորագրած Տաննապետեանի վերլուծումը:

Հակառակ այս զանցումին, մեզի կը թուի սակայն, — մեզքը մէ՛ր վրէ՛ն, էթէ սիւս  
կը թուի, — մեզի՛ կը թուի, թէ Պ. Սեւակ տեսած է թէ՛ մէկուն եւ թէ՛ միւսին էջերը, եւ  
օգտագործած իր գրականութեանին հետ կը քալէ, երբ Մայաթ-Նովայի առաջին յորհումներուն ակնադ-  
կելով կը հաստատէ, թէ ան զտակալին արհեստաւոր է եւ ոչ արածեստացէտ, պայմանականօ-  
րէն ասած՝ աշուղ է եւ ոչ բանաստեղծ, կամ երբ Տաննապետեանին պէ՛տ կը կատարէ հե-  
տեւեալ զամբարիշտ զուգակիւթը, թէ՛

«Մայաթ-Նովայի հետ կատարուած է մտաւորապէս նոյնը, ինչ իր սեծ նայաւոր՝  
Նարեկացու հետք, հետայն»:

Իսկ շատ մտէն կը յիշեցնէ Օշականը, երբ Մայաթ-Նովան կը տեղաւորէ մամանակին  
մէջ եւ կը բարձրացնէ մամանակէն վեր. «Մայաթ-Նովան չէր լինի Մայաթ-Նովա, եթէ լինէր  
ժամանակից զուրք. քայց Մայաթ-Նովան չէր էլ լինի Մայաթ-Նովա, եթէ չլինէր ժամանակից  
լիք՝ ժամանակի կարգախօսային շարիքից, պարագայական պարտադրանքից եւ շուկայական  
պահանջից»:

Օշականն ու Տաննապետեանը անտես ընկելու այս թիրացումը մասնաշեղու. հարկէն  
անկախ, Պ. Սեւակէն եւ միւսներէն քանի մը քաղուածքներ մէկտեղելով՝ կը ներկայացնենք  
հոս, ո՛րն վտարահոսութեամբ, ոչ խորհրդածութեան եւ վայելիքի գեղեցիկ արժէք մը կ'ընծայենք  
ընթերցողին:

# ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ

## Ս Տ Ե Ղ Ծ Ա Գ Ո Ր Ծ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Այդ դարում, դարի մահաւանդ առաջին կիսում (որ համապատասխանում է Սայաթ-Նովայի ստեղծագործական կեանքին) բանաստեղծութեան լատկանիչներից գործում էր միայն մէկը՝ յանգաւոր չափածոն: Իսկ պոեզիայի տեսակարար շարժառիթը, որ ներշնչանք է կոչուում, ոչ միայն մոռացւել է, այլև ի սպառ մոռանուել էր՝ Փրանսիացի Պուլյոյի և անգլիացի Պոպի որից սկսած: Բանաստեղծելիս աշխատեցնում էին Ալանները, մինչդեռ պէտք է աշխատէին զորով: Գործում էր ուղեղը, մինչդեռ հոգու մասնակցութիւնն էր հարկաւոր: Այդչնչման տեղը դրաւել էին դատողութիւնն ու սրամտութիւնը, պատկերաւորութեան տեղը բռնել էր պճնազարդ արհեստականութիւնը, տաղանդի տեղը՝ ստացական դիտելիքը: Ինչքան ուղէք՝ խրատ ու բարոյ, խորհուրդ ու բարոյախօսութիւն: Որքան սրտներդ տայ՝ չափածոյ չտեղորութիւն ու յանգաւոր հրապարակախօսութիւն, ցամաք ու երկարաբան նկարագրութիւններ, լուսադոյն դէպքում՝ սերորէական երազկոտութիւն ու սաղմոսային բաղանջութիւն, բայց ո՛չ ճշմարիտ արուեստի յանձնարանք, բայց ո՛չ հոգու խռովք ու ոգու թեւաբախում:

Արդար ու խելացի, փայլուն ու հանճարեղ, սրամիտ ու խայթիչ, քանդիչ ու նորաշինող հազար մտքեր, խօսքեր: Բայց եթէ վերակենդանանաւոր Դանիմարքայի Համլէթ կոչուած արքայազնը եւ, անդիւր իմանալով իր արարչի ձեռնածնը, սրանց հետ համեմատէր չափածոյ արտադրանքը, որ երեւան էր եկել դրանցից մէկուէկս-երկու դար յետոյ, — Համլէթն անկասկած կը կրկնէր իր հռչակաւոր խօսքը. «Բառե՛ր, բառե՛ր, բառե՛ր...»:

Եւ սա մի մտայնութիւն էր, որ տիրական էր թէ՛ անգլիացի Պոպի, թէ՛ գերմանացի Կլոպշտոկի, թէ՛ Փրանսիացի Վոլթէրի համար: Աւելին: Նոյնիսկ մեծն Շիլլէրը եւ հանճարեղ Կէօթէն (որ պիտի ապրէր ու ստեղծագործէր նաև յաջորդ դարի առաջին երեք տասնամեակներում) իրենց անմիջական նախորդներից ու ժամանակակիցներից մի գլխով բարձրացած՝ այսուհանդերձ, իբրև բանաստեղծներ, չյաղթահարեցին դարի ընդհանուր հրամայականը:

Եւ որքան հաւաստի է այս երեւոյթը, նոյնքան եւ առաւել հետաքրքրական է: Անհատի եւ անհատականութեան դարում անհատներն ամբողջովին նուիրուած էին հանրայինին, հանրայինով էին զրադուած այնպէս եւ այնչափ, որ սողանցք իսկ չէր մնում անհատական համար, առանց որի չէ եղել ու չի կարող լինել ճշմարիտ ու մնայուն պոեզիա:

Դարն էր այդպիսին: Հարիւրամեակների ընթացքում կաշկանդուած մարդկային միտքը՝ այլևս ազատուած կապ ու կապանքից, արդէն թօթափած հաւաստիք ու սնտոխք՝ դրաւել էր մարդու հոգեւոր կեանքի նոյնիսկ այն բնագաւառը, որ իրենք չէր: Կործանել էր պէտք ու կառուցել: Եւ այդ էլ անուձ էին՝ նաև չափածոյով: Հսկտոր էր պէտք եւ ոչ թէ բանաստեղծ: Ժարտասան էր պէտք եւ ոչ թէ արուեստագէտ: Գործ էր պէտք եւ գործել էր հարկաւոր: Եւ գործում էին. աւելի գործում, քան ստեղծագործում:



\*\*\*

Նա այս է դարձանային՝ մինչ անհատականութեան զարգացման եւ անհատի ազատագրութեան դարաշրջանում եւրոպական բովանդակ պոեզիան չի տալիս անհատական քնարերգութեան քիչ թէ շատ ակնառու որեւէ արտադրանք (յամենայն դէպս մինչեւ 50-ական թուականների վերջը, որ վերջն է նաեւ Սայաթ-Նովայի բանաստեղծական գործունէութեան) — այստեղ՝ Անդրկովկասում, ուր չկար «անհատ ու անհատականութիւն» հասկացողութիւնն անգամ, ուր «Ես»-ը սոսկ դերանուն լինելուց այն կողմ չէր անցնում եւ չէր էլ կարող անցնել, — հենց այստեղ է ստեղծւում մի այնպիսի զուտ անհատական պոեզիա, որին անծանօթ էր մնալու բովանդակ Եւրոպան՝ քանի դեռ չէին եկել Շելլին ու Հայնէն:

Ի՞նչ պատճառաբանութեամբ:

Ի՞նչ պատճառաբանութիւն էլ գտնուի, ի՞նչ բացատրութիւն էլ տրուի՝ յամենայնդէպս իրողութիւնը մնում է իրողութիւն եւ միշտ էլ աւելին արժէ, քան ամէն բացատրութիւն ու պատճառաբանութիւն:

Այդ իրողութեան անունն է Սայաթ-Նովա:

\*\*\*

Դժուար է մեռելներին խօսեցնելը: Անհնարին է մանաւանդ, եթէ նըրանց խօսքն ալիւս խորթ ու անհարազատ է մեզ՝ նոր ժամանակներու օղբ ընչածններիս: Իսկ Սայաթ-Նովային խօսեցնելը հեշտ է նոյնքան, որքան... քառասունըդուսիշ միացնելը:

Ու երբ խօսում է նա՝ մենք լուռ ենք: Մենք ձուլւում ենք նրան, միանում ու լրանում: Ու չես հասկանում՝ նա՞ է խօսում, թէ՞ ինքը՝ նա՞ է սիրում, թէ՞ դու. նա՞ է այլու, թէ՞ մենք:

Նա սիրոյ հաւատարմութեան երգիչն է, մի հաւատարմութիւն, որի միւս երեսը մերժուածութիւնն է, կամ անյուսուցիչ սիրոյ: Բայց կեանքում ոչ մի անգամ չմերժուած եւ սիրոյ անյուսուցիչ մասին լուկ վերացաբար դատող յաջողակն էլ համակում է նրա սիրոյ տուայտանքով, որովհետեւ Սայաթ-Նովան այն բանաստեղծներից է, ովքեր չեն հարցնում մե՞ր տրամադրութիւնը՝ մեզ ստիպելով վարակուել իրենց տրամադրութեամբ:

Բանաստեղծներ կան, որոնք մեզ առթում են եթէ ոչ ցրտելով, այսպէս զոնչ ընդարձակուելու: Սայաթ-Նովան ա՛յն բանաստեղծն է, որի հետ մենք ամփոփուում ենք, որովհետեւ նա դրսևորում է մեր իսկ ներսի պատկերները, ոչ միայն անջինջ ու արիւնոգը, այլեւ արդէն խունացածն ու սպիտակածը՝ ստիպելով հեռազգու մեր սպիտակ վէրքանման նոցքը, վերալսել մե՞ր իսկ անցած ցուերի ետադարձ արձագանդը մե՞ր իսկ աւերակների մէջ, որ վիրալինում են նրա՝ օգնութեամբ:

Ահա այս հաղուազիւտ շնորհն է Սայաթ-Նովային դարձնում մի բանաստեղծ, որ քննադատի կարիք չունի, ա՛յն քննադատի, որ ընթերցողին՝ ինչպէս ընդունուած է կարծել՝ օգնում է ճանաչելու գրողի «այո՞ն ու չէ՞ն»-ն: Բաւական է կարգալ Սայաթ-Նովային եւ նա ինքն է իր Խաղը վերանում արա բաղադրիչներին՝ սրտի եւ ոսկորի, մտի եւ արեան, հողու եւ երակի, յոյզի եւ ջղի՝ բնաւ չստիպելով. այն վայրկենապէս հասնելով այն կախարհութեանը, երբ բառը դառնում է խոսքած ապրում, խօսքը անթերւած կեանք...

\*\*\*

Անցնենք եւ իսկոյն էլ փոքր-ինչ կանգ առնենք, որպէսզի կրկնենք այն, ինչ ասուել է շատ վաղուց եւ չի հաստատուել մինչեւ հիմա: Այն, որ Սայաթ-Նովան է ոչ միայն մեծ Միբերդուն, այլեւ մեծ Խրատատուն: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որովհետեւ ամէն մի բանաստեղծ, լինելով կեանքի սիրահար, ոչ այնքան պախարակող է, որքան խրատող, ոչ այնքան բացասող է, որքան հաստատող, ոչ այնքան քանդիչ է, որքան ստեղծիչ:

Պոհարատական այսօրինակ բանաստեղծութիւններն ընդունուած է կոչել փիլիսոփայական լիրիկա: Ու եթէ այս անհեթեթ տերմինը՝ մատչելիութեան հարկադրանքով՝ մէկ անգամ էլ պիտի հրովմուի, ապա անհրաժեշտ է անմիջապէս նշել, որ Սայաթ-Նովայի ոչ թէ լիրիկան է փիլիսոփայական, այլ նրա փիլիսոփայութիւնն է լիրիկական, որ բնաւ նոյնը չէ:

Մենք արդէն գիտենք, որ նա չի բաւականանում իր ապրումը արտայայտելով կամ իր ներաշխարհը բացելով միայն: Միտածանակ նա ինքն էլ խորաշփում է իր իշուածքները, ըստ որում այդ շփումը կատարում է ոչ թէ մտքի պաղ պարանով, այլ իր տաք երակների շարակցութեամբ, որի շնորհիւ էլ նրա խօսքը միայն սրտազրաւ չէ, այլեւ խոսվիչ, միայն ցուցադրական չէ, այլեւ թելադրական: Այս տաքութեան շնորհիւ էլ նրա մտքի պտուղը երբեք խակ չէ, ուրեմն եւ թթու, այլ միշտ հասուն է, ուրեմն եւ ճաշակելի, եւ մենք այսօր էլ վայելում ենք դրա հեռահաս արդասօրէքը:

Ու չմոռանանք նաեւ, որ (արուեստի դարաւոր պատմութեան վկայութեամբ) ամէնից շուտ եւ ամէնից շատ փոփոխուած են հենց դրանք: Այս է պատճառը, որ անցեալի ոչ միայն մեծանուն, այլեւ իսկապէս էլ մեծ արուեստագէտների այսպէս կոչուած փիլիսոփայական քարերգութիւնն այսօր մեծ մասամբ ժպիտ է առաջացնում, յաճախ նաեւ ծիծաղ, մինչդեռ միեւնոյն հեղինակների ապրումների եւ զգացումների արտացոլանքից այսօր էլ չի կանուսում ենք մենք՝ ընկալելով նրանց եթէ ոչ հոգեբանութիւնը լրիւ, ապա գոնէ հոգեբանութիւնը ամբողջովին:

\*\*\*

Եկեղեցական ու կրօնական անհաւատութիւնից համարեա՛ թէ ազատ էր ոչ միայն Սայաթ-Նովայի նախորդը՝ Նաղաշ Յովնաթանը, այլեւ այս վերջինիս նախնախորդն էլ՝ ա՛յն յիբաի հեթանոսը, որին Նահապետ Քուչակ են կոչում: Եւ հոգիս ու մարմինը Սայաթ-Նովայի համար ոչ այնքան աստուածաբանական խնդիր էր, որքան (թող ներուի ասելու) կենսաբանական՝ այս բառի ոչ նեղ-գիտական իմաստով, այլ լայնարձակ-նախնական առումով: Դա խնդիրն էր անցողիկ եւ մնայունի, դեանատարածի եւ թո՛ւրիքայինի, հպանցիկութեան եւ յաւերժութեան, առօրեայի եւ ստեղծագործման, արհեստի եւ արուեստի փոխարարութեան, որ չի՛ հնանում եւ չի՛ հնանալու, մինչդեռ հնացել ու հնանալու են ամէ՛ն տեսակ կրօնների եւ ամէ՛ն կարգի գաղափարաբանութիւնների խորհրդանիշներն ու Ֆորմիւլները:

Ու եթէ այս բարձունքից նայուի խնդրոյ առարկային, ապա ոչ միայն հարկ չի լինելու հակուրութիւն խաղալ՝ անտեսելու Սայաթ-Նովային յաճախած հոգիս, այլեւ պէտք չէ լինելու այդ ամենախաղի հոգիս թուղթի ու թանաքով պարտութեան մասնակցու, ի՛նչ է թէ Սայաթ-Նովան համարուի իր բոլոր կապակցութիւնները կրօնից կտրած:

Մենք, ի դժբախտութիւն Սայաթ-Նովայի եւ մեր, շուտով բանաստեղծին կը տեսնենք նաեւ կրօնաւորի սեւերում ու կը լսենք իր կարծիքը կրօնաւորութեան մասին: Բայց ի՞ր կարծիքը եւ ոչ թէ նրա լեզուի փաթաթած մե՛ր կարծիքը, որ հենց այն է, ինչ կ'ոչւում է արջի ծառայութիւն...:

Ու եթէ այս բարձունքից նայուի Սայաթ-Նովայի ստեղծագործութեանը, ապա անկարելի է չտեսնել, որ հոգաւ հարցը բնաւ էլ պատահական կամ անցողիկ այցելութիւն չէ Սայաթ-Նովայի Դավթարին եւ ոչ էլ վերջում ներս կկած մի հիւր: Հոգիւն Սայաթ-Նովայի մշտական յաճախորդն է դեռ «է՛ն դիւնն ու աղալէն», շտտելու համար՝ տանտէրը: Այդ հոգիւն չի թառած Սայաթ-Նովայի խողերի դրժի շուտանցքին: Նա բնագիր է ու միտմամանակ մեկնուածիւն: Եւ այս էլ հիանալի է, բայց ոչ պախարակելի: Եւ դա Սայաթ-Նովայի արգասք մեծութիւնն է եւ ոչ թէ մեծ մեղքը: Որովհետեւ ամէն մի մեծ արուեստագէտ մարմնաւորումն է հոգու, կամ ոգու, մեայունի կամ յաւերժողի, մշտականի կամ անմահութեան: Ու եթէ կայ մի տեղ, ուր սայաթնովայականութիւնը բարձր է քուչականութիւնից եւ համապատասխանաբար էլ քաղերը հարուստ են Հայերէններից, ապա հենց այն տե՛ղն է, ուր բնակւում է այդ հոգիւն, որ հաղուադէպ է հանդրաւում Հայերէնների մէջ, այն Հայերէնների, որտեղ կայ եզիլութիւն, բայց ոչ լիմիլութիւն, կայ լայնածաւալ կեանք, բայց ոչ լայն ու ծաւալուն կեանսայեցողութիւն, եւ մինչեւ իսկ խորութիւն, բայց ոչ խորաշփոթիւն:

••

Տրտում ու յուսահատական են Սայաթ-Նովայի այն խողերը, որոնցով փակւում է նրա Դավթարը: Ինչ-որ խեղճութիւն եւ, ինչպէս տեսաք, նոր-ինկ նուաստացում կայ նրանց մէջ: Դժուար չէ հասկնալ այն խեղճագամիչ հողիվիճակը, որոնց ծնունդն են այդ խողերը: Եւ այդ հողիվիճակը հեռազուարու համար ամէնից առաջ պիտի ասուի, որ արքունիքը բանաստեղծին պատճեց ահուկի շարութեամբ: Այդ պատժը յղանալու համար էլ պէտք էր իւրատեսակ հանճարեղութիւն, որ միշտ ունենում են ամէն տեսակ արքաները:

Ինչքան՞րդ դատեցէք՝ մէկ անգամ էլ բարձրաձայն տեղով «Սայաթ-Նովա՛ն»:

Հեշտ է ասել «Սայաթ-Նովա»: Բայց «Սայաթ-Նովա» նշանակում էր մի հանճարեղութիւն, որ արարչագործում էր երեք լեզուով, որ իր արարչագործութեան մէջ փչում էր նաեւ երաժշտական կենդանի շունչ, հաղցնում իր ձայնի, ինչպէս նաեւ իր նուազի անկրկնելի տարազը, որի հանճարեղ բլնորոշումն էլ ինքն է ասուել. «Վո՛ւշ մեռիլ դուզէ, վո՛ւշ կըտրիլ»:

«Սայաթ-Նովա՛ն» Այսինքն՝ Հինասուրց գմբէթաշատ մի քաղաք, որ բազմացնում է արեգակի շողերը՝ իր գմբէթների այրացողանքով: Այսինքն՝ մի բառեղէն ճարտարապետութիւն՝ իր ամբոցներով ու վանքերով, իր դըղեակներով ու աղօթասեղաններով, վարդաքանդակների մի այնպիսի դարձանազան ճոխութեամբ ու անկրկնելիութեամբ, որ օւնի մէկ էլ իր ազգային շինարուեստը:

«Սայաթ-Նովա՛ն» Այսինքն՝ մի ինքնատիպ նուաճող, որ գրուել է մի ողջ աշխարհ, ու մենք էլ ահաւասիկ երկու հարիւրամեակ քայլում ենք այդ աշխարհի միջով՝ իր իսկ սուղնորդութեամբ. մենք՝ դժայրած մեր տեսաճող, իսկ ինք՝ ընտելացած:

«Սայաթ-Նովա» : Այսինքն՝ մի հազուադիւս արարած, որի դժբախտութիւնը մեզ համար մեծ երջանկութիւն դարձաւ, սրովհետեւ իր դժբախտ սէրն ու ճակատադէրը վերածեց հոյակապ բանաստեղծութեան, որին հազորդուելը հոգեղէն երջանկութիւն է :

Այլ կերպ առած՝ շտիրաթափուած մի սիրահար, որ գաղութացուել է սիրուց, բայց մեզ էլ գաղութացրել է այդ սիրով . գաղութացման ա՛յն միակ ու եղակի ձեւը, որի դէմ չեն ապտամբում եւ որ աղատադրուել չեն ուզում :

~\*~

Վերստին Շէյքսպիրինն է խօսքը, որպէսզի ասի, թէ «մատնիչի շոյշաւած հարստութիւնը՝ փոխելով ու փոփոխելով իր տեղը, դարձեալ մնում է աշխարհում» :

Այսպիսի մի շոյշաւածութիւն է նաեւ Սայաթ-Նովան, որի ցրած ու շաղ տուած հարստութիւնն էլ ոչ միայն շարունակում է մնալ աշխարհում, այլեւ ստիւի է մի նոր շահ ու շահոյթ՝ ձեռքերով ու ջանքերով բոլոր նրանց, ովքեր ծնուել են տալու համար եւ ոչ թէ ծախելու, նուիրելու համար եւ ոչ թէ վաճառելու : Այսինքն՝ ովքեր ձերքն ունեն ձրութեան եւ ոչ թէ ջիղը առեւտրի : Այսինքն՝ ովքեր ժառանգորդն են ոգու, բայց ոչ տառի . ովքեր տէրն են ընդաւուրի, բայց ոչ շուկայի : Այսինքն՝ ովքեր հեծեալն են սայաթ-նովայական նժոյգի, բայց ոչ հետեւակը նրա . ովքեր չեն ընդօրինակում, այլ շարունակում են օրինակ տալ . . .

~\*~

Իրական բանաստեղծը չի կարող չբարձրանալ իր ժամանակից՝ թէկուզ եւ այն պարզ պատճառաբանութեամբ, որ պարտաւոր է աչքել այդ ժամանակից շատ աւելի :

Ժամանակավրէպ լինելը ժամանակաւոր լինել է : Բայց ժամանակակից լինելը հաւասար չէ ժամանակին կից լինելուն : Հարկաւոր է կրել իր մէջ ժամանակը, սակայն կրել նրա կշիռը եւ ոչ թէ քեւը, պահել նրա արժէքը եւ ոչ թէ գինը, ունենալ սրա հարստութիւնը եւ ոչ թէ ապրանքը, լինել նրա սնունդը եւ ոչ թէ եւրոպացիներէ տասն պարտադիր ասորիսիստը, — այլ կերպ առած՝ դրսեւորել ժամանակի ոչ թէ արտայայտութիւնները, որոնք չեն կարող անցողիկ լինել, այլ նրա Անբնայայտութիւնները, որոնք չեն կարող մնայուն չլինել :

Սայաթ-Նովան չէր լինի Սայաթ-Նովա, եթէ լինէր ժամանակից դուրս : Բայց Սայաթ-Նովան չէր էլ լինի Սայաթ-Նովա, եթէ չլինէր ժամանակից վեր՝ ժամանակի կարգախօսային շարիքից, պարագայական պարտադրանքից եւ շուկայական պահանջից :

Ձլինել ժամանակից դուրս, բայց լինել ժամանակից վեր, — ահա երկրորդ գաղտնիքը Սայաթ-Նովայի մնայնութեան ու թարմութեան եւ այն երկրորդ դասը, որի ուսուցումը պարտադիր է մնում այսօր էլ . . .

Գրականութեան դարաւոր պատմութիւնը գրադատութեան առջեւ վըկայում է, որ ժամանակն իր ընտրութիւնը կատարում է երբեմն անուղղակի, բայց միշտ էլ քաց քուէարկութեամբ : Եւ նրան է ստիւի քուէն, ով եղել է իր ժամանակի արդար գաւակը եւ իւրովսանն գերծ է մնացել նոյն այդ ժամանակի մեղքերից :

Այլ պատկերով ասած՝ ժամանակը մի դեռ է, որի մէջ շարունակ կարող են միայն մեռածները: Բայց այդ դեռում յողորմորէն մի ձեռքը կապուած է նոյն այդ ժամանակի ձեռքերով: Լոգով ժամանակի մէջ եւ շխնորհուի ժամանակի մէջ, — ահա մեծութեան կարելիութիւնը, որ արուած է հազուադիւրս երջանիկներին:

Եւ այդ հազուադիւրսներից մէկն է Սայաթ-Նովան...

\*

Բանաստեղծը տիեզերական տարածութիւններից ընկած երկնաքար չէ, այլ երկրի ընդերքից ելած հանքաքար: Անձրեւ չէ նա, այլ ընդերքից բխած հանքային ջուր, որին մեր նախնիք զերմուկ էին ասում: Ուստի եւ նա ունի քիմիական այն բաղադրութիւնը, որ կազմում է տուեալ ազդի կամ ժողովրդի էանիթերի համազուտարը:

Ուրեմն բանաստեղծութիւնն էլ գրելի ինչ-որ շարան չէ, այլ արեան շրջանառութիւն՝ բանաստեղծի սրտից դէպի գլուխն ու վերջապրութիւնները, արեան նոյն բաղադրութեամբ ու տեսակով, արեան ճնշումի նոյն բարձրութեամբ ու ցածրութեամբ, որ յատուկ է նրա ազգին ու ժողովրդին: Սայաթ-Նովան չունի գուտ ազգային բանաստեղծութիւնների շարքեր: Եղած հատուկէնտն էլ գրել է միայն ազրբէջաներէն:

Սայաթ-Նովան պատկանում է երե՛ք ժողովրդի, հաւասարապէս սիրւած է երե՛ք ազգից եւ զարգարում է երե՛ք երկիր:

Նա ժողովուրդների բարեկամութեան սոսկական երգիչ չէ, այլ արդ բարեկամութեան ծնունդն է եւ այդ բարեկամութեան մարմնացումը: Քարտէզ բարեկամութիւնը:

Բայց, այս ամէնով հանդերձ, Սայաթ-Նովան ազգային է Գողթան երգիչների շարք, որովհետեւ (մէկ անգամ էլ կրկնենք) երկնաքար չէ նա, այլ հանքաքար, եւ տեղատարափ չէ նա, այլ հանքային ջուր:

Սայաթ-Նովան սոսկական բանաստեղծ չէ, այլ սանձազերծային բանաստեղծ:

Իր թիկունքով նա դարձած է դէպի այն բաղադրաբան սնցեալը, որի մէջ են մխուած իր արմատները:

Իսկ իր դէմքով՝ արտութեան մէջ էլ մշտապէս պայծառ իր դէմքով, նա նայում է մեզ: Ուստի եւ նա աւելի նոր ժամանակինն է, քան հնինը: Նորինն է՝ իր լեզուով, որ պիտի ծնունդ տար Հայոց նոր գրական լեզուին: Նորինն է՝ իր մասածոգութեամբ, որի մէջ ոչինչ չկայ միջնադարեան: Նորինն է՝ իր մեծ սրտով, որ ունի ժամանակակից սրտի: Իր անասիկ հոգով, որ ունի արդիական խորութիւններ...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒՍԿ

### 3. ՕՇԱԿԱՆ

#### ԵՐԲ ՀԻՆԵՐԸ ԿԸ ԿԱՐԴԱՆՔ

Մայրք-Նովայի տաղարանը աւելի քան իրաւ վկայութիւն մըն է այդ օրերէն: Սուրիա, Կովկաս, հաւանաբար հեռու արեւելքը (թերեւս Իրան, հեփիաթը կը թելագրէ Հնդկաստան, քանի որ ժԸ. դարերու կէտերուն մերիմները եռն պալատներու մշակոյթ մը կը վարեն), թափառումներ. բայց մանաւանդ իրաւ արժունիք մը, այն գլխաւոր երկիրներն են, ուր անոր *բամանջան* ոչ միայն իբր ձայն, այլեւ իբր խօսք, խորունկ բանաստեղծութիւն, հրաշքը պատգուց, իրաւ հրաշքը արուեստագէտին, դիտելով քանի մը ամենախոր ապրումներ, որոնց մեծնադրոշմ արձանագրութիւնը հասած է մեզի իր երգերուն մագաղաթովը: Երեւակայե՞լ որ անկա այդ պալատին մէջ սրտեր է այրած, տագնապներ ստեղծած, լացած ու լացուցած:

— Ձեմ կրնար տրուած կտորներով ընդարձակել և ուրաշին ցոլացումները պալատական բարբերէ՛լ ընդունիլ իբր հարազատ ապրումներ: Ինչ որ ակնբայն է ու անհերքելի, ատկա *կերպարանքն է, խորհրդանշային բարձրութիւնը սա ու ան անունէն վեր, ինքնաստեւն պատկերը* սիրականի, իր բառովը *Գողալին*, որ հայերէն տաղերուն բոլորին ալ ոչ միայն ներշնչողն է, այլեւ անոնց միջին կենդանութիւնը: Սա բացարձակութիւնը, մէկ ու միակ զգացումի սրտագարկէն բացուած ֆերթուածներու մէջ, անշուշտ որ պիտի կազմէր գերագոյն վտանգ մը, ինքզինքը կրկնելու, անուազն միօրինակ դառնալու: Հնգիւ թէ անկշիռ փշրանքներ տեղէ, պայմաններէ, որոնք չեն գրաւեր մեր ուշադրութիւնը: Բայց արտօնուած ենք մտածելու մեր օրերու ալ մեծ սիրերգակներուն. ո՞վ կայ իբր սիրահար Պ. Գորեանի տաղարանին ետին, բացի այդ տրժգոյն տղայէն: Տաղանդը, չըսելու համար հանճարը, կը միջամտէ, որպէսզի այդ զգացումէն թափուին մէկդի տեղական շատ մասնաւորեալ թեփերն ու փրփուրները ու մընայ *մտաստեալ խորհուրդը*, որ մեր վայելէն, տառա-

պանվելն բխած, բայց *անկէ անդինը*, որով եւ մեզմէ աւելի *մտայունը*, *դիմացկունը* կը դառնայ մեր անցաւոր մարմինին անոնց «ի յաւիտեանութիւն փոխակերպուած» վկայութիւնը: Տարրացուցէ՛ք Գոգարը, այսինքն վերակազմեցէ՛ք Քազուհի մը, արեւելեան հեշտախտաւոր պարիկ մը, իշխանուհի մը, նրբենի կին մը, անուշիկ ու պարզ գեղջկուհի մը, որոնք բոլորն ալ վերածելի են Սայաթ-Նովայի երգերով մեզի թելագրուած կերպարանկերուն, զու՛ր ուրիշ բան պիտի ըրած չըլլա՛ք, եթէ ոչ խորհուրդէ մը առնել իր հրապոյրին պատմունանը, շղարշը, լոին նուագը ու գայն գրած ձեւերու մէջ, որոնցմէ ըլլար ինկած իրենց անասելի ֆաղցրութիւնը: Իրենց խենթեցնող ձգողութիւնը:

— Պալատական երգիչ — ըսի՞, թէ ի՛նչ խորունկ սպրուններ կը մնան բիրեղակերպ այս տարազի ետին — անիկա ընդունարանն է Կովկասին, է նոյն ատեն հեռու արեւելքին աշխարհիկ ու սրբազան երաժշտութեանց կենդանի նուագարանը. է աւելի՛ իր ալ ժողովուրդին անիմանալի ֆաղցրութեամբ աղբերացումներուն աւազանը: Թարգմանեցէ՛ք իր գրածները: Դու՛ք պիտի գտնէ՛ք արեւելքին մեծագոյն բանաստեղծներէն մէկը, մեծագոյն զգացման մը արտայայտիչը իբրեւ: Ունինք այդ պալատէն իր վտարումին տրաման, որ մեր երեւակայութեան մէջ կրնայ առնել անշրջագծելի տազնապանքի մը, ողբերգութեան մը կշիռը: Չեմ տար ընթացք այդ հաւանականութիւններուն: «Դու էն գլխէն իմաստուն իս»-ը մեծ էրթուած մըն է, իր հիմնանիւթէն դուրս իրողութեան մը վրայ բայց, շատ խորունկ տարողութեամբ մը:

Այդ մէկ հատիկ էրթուածը, հայերէն իր տաղերէն կը դնէ կարելի մեղադրանքը լարի, նիւթի, խորքի ազգատութեան, որով երբեմն կը փարձուինք արծեգրեկ մեր բանաստեղծը: Անշուշտ որ *կինը* աշխարհը չէ «ամբողջ» մեզմէ շատերուն համար: Կան անշուշտ ուրիշ զգացումներ մարդը մահուան մղելու չափ գորաւոր. — հայրենիքը՝ կըրօնէք, ֆաջութիւնը, ազնուութիւնը: Բայց այս ամէնը անժանօթ չեն հայ բանաստեղծութեան: Սայաթ-Նովան «Դու էն գլխէն իմաստուն իս»-ին մէջ հայեամներու, Ֆիրտուսիներու, Մաարիներու գիծէն իբաւ բանաստեղծ մըն է:

— Ըսեր եմ տեղ մը, որ Չրաֆեան մը, Մեծարինց մը, *իրբեւ ձեւ* անմտածելի իրողութիւններ են 1870ին: Դուրեա՞ն մը: Նոյնքան անմտածելի: Բայց ահա տարօրինակը, Դուրեան, Սայաթ-Նովա, Քուչակ, Արովեան մար-

դեր են, որոնք ժամանակէ մը գերծ են ծնած: Գետինը, ուր կը կենաւ *անխառն ու անժամանակ* ստեղծումին գետինն է սակայն, որ նոյնքան իրական է, որքան դպրոցով, հանգանակով, նախապատրաստութեամբ պայմանաւոր շարժումներուն ասպարէզը: Անոնք, որ կուլային աշուղին ձայնին շղարշին մէջ իրենց հոգիին միսերը համբարուած զգալով, անշուշտ մեր օրերու ռեալիզմ, պատկերամոյ, քոնիչիներով խենթեցնող *էսթէթիկները* չէին, այլ պարզ մարդեր, նոյնիսկ ասարօշներու «սակեման» շուքին ընդմէջէն: Արտայայտութեան հարց մը մտէ՛լ չանցուցին «գոգայները», երբ խմբին աշուղին երաժշտութիւնը: Ու չտառապեցան ձեւին տառապանքով այն խեղճ ու պատարադամորդիները, որոնք ճամբին, ժամերուն, պալատներուն հրապարակին կեցած երկիւղած, հանրածանօթ «նոթար»-ին անկեալ մտքնին յիշեցնող հրդեհումին դիմաց, ու հազորդ եղան ասրումներուն ամէնէն խռովիչներուն: Բա՞ռը: Տա՞ղը: Զա՞փը: — Որքան թերի է այս ամէնում կշիռը այդ խռովիչին կերպարանքը թելադրելու, նուաճելու արարքներուն համար:

— Երկու դար մեզ կը բաժնեն այս տաղին («Մի խօսք ունիմ») ծնունդէն: Այսինքն վրաց մայրաքաղաքին մէջ իր քառանկան ուսին պատող բանաստեղծին ասրումները չեն կրնար վերակազմուիլ, իրենց մերձաւոր հարազատութեան մէջ նոյնիսկ: Բայց արուեստի գործի մը նախադիրը չէ կապուած այդ պայմանականութեան: Պիտի ըլլայ այդ գործը այդ ժամանակը անշուշտ (չի կրնար չըլլալ), բայց պիտի ըլլայ մտնաւանդ անկէ աւելին: Հակառակ կառուցման մեծ նուազումներուն, ու հակառակ արտայայտութեան ծանր տկարութեանց, ու մտնաւանդ հակառակ իր բնական պատմութեանէն — ձայնէն — դաւաճանութեան ըլլալուն, «Մի խօսք ունիմ»-ը մեզ կը յուզէ: Կը յուզէ, վասնզի տասնրկն տողէն ութը, այսինքն կէտը վեր են մեղէն, ինչ որ կը թելադրէ իրաւ, անկախ ստեղծումը:

Յ. ՕՇԱԿԱՆ



## ՍԱՅԱՔ - ՆՈՎԱ

Այժմ տեղն է կրկնելու այս բաժանումին սկիզբը առաջագրուած հար-  
ցը.— Աշո՛ւղ է Սայաթ-Նովան, թէ արդիական բանաստեղծ:

Պատասխանը տանք ընդհանրութիւններով, քանի որ արուած գործին  
վերլուծութեամբ անոր արուեստին յատկութիւնները լայնօրէն երեւան պի-  
տի գան:

Նախ՝ աշո՛ւղ է, Սայաթ-Նովան:

Աշո՛ւղ է ժողովրդական տարրերովն ու պարզութիւնովը իր լեզուին,  
որ տեղ-տեղ կը խուսափի կանոնական լուրջ մշակման մը հողածութենէն:

Աշո՛ւղ է պարզութիւնովը իր ոճին, որ չի սիրել արայայտութեան  
ոլորուն կերպերն ու սեթեւեթները եւ իմաստը կը տարածէ մէկ անգամէն:

Աշո՛ւղ է ան ներշնչումի բացառիկ զգայարանքով մը, որ դիտէ լայն  
ապրումներ գրկել մէ՛կ անգամէն ու իր զսպանակին միակ ժողովովը դուրս  
հորովել զանոնք մէկ անգամէն: Այս յատկութեամբ է որ անոր տողերուն խոր-  
քը ժողովուրդի նախնական ճաշակին համար իսկ կը ստանայ դէթ տպւեւոր-  
կան հազարգականութիւն մը:

Աշո՛ւղ է ան արագ գործունէութեամբը ժիր երեւակայութեան մը, որ  
իրարու ետեւէ կը թոցնէ զոյները, պատկերներն ու այլարանութիւնները՝  
առանց հոգալու անոնց առընչական պատշաճութիւնը նկարագրական համա-  
դիր միութիւններ կազմելու համար:

Աշո՛ւղ է իր տաղերուն յօրինուածական պարզութեամբը. ու նաեւ՝  
տարազին արտաքին պայմանագրականութիւններովը, որոնք տուեալ շրջա-  
նին աշուղական արուեստին յատկանշական նախասիրութիւնները եղան:

Եւ վերջապէս ի՛նքն է, որ ինքզինքը մեզի կը ներկայացնէ ճետլիսի  
Նախար Սայաթ-Նովան:

Բայց ժողովուրդին առջեւ համեստութեան եւ խոնարհութեան զրգըլ-  
կակը վրան նետող այս երգիչը թող թոյլ տայ մեզի պատկառու դիտողու-  
թեամբ մը ըսելու իրեն:

— Սայաթ-Նովա՛, քու գրչեակիդ պատուածքներէն անպարտկելի  
մեծութեան մը արգար յանձնապատասխանութիւնը կը տեսնեմ:

Սայաթ-Նովա մէկն է մեր արդի բանաստեղծութեան մեծագոյն դէմ-  
քերէն:

Եւ ամէնէն առաջ՝ անիկա անհատական ապրումներու երգիչ է: Ան մե-  
զի կ'երգէ ի՛ր սէրը, անոր տաղերուն խորքը մեզի չի կրնար տրուել զրա-  
ցումին դիւրահաղորդ մակերեսայնութեամբը, ապրումին ընդհանրականու-  
թեամբը: Որովհետեւ՝ ժողովուրդի պարզասէր ճաշակին առաջ անհատական  
ապրումը ազատ է իր զգացական առանձնայատուկ երանգաւորումներով:

գուրկ է պահանջուած արագ հաղորդականութենէն՝ իր մասնաւոր աւելնու-  
թիւններով: Սայաթ-Նովայի տաղերը ընդհանրապէս լեցուն են ապրումով,  
յորդ են ներշնչումով:

Ու այդ ապրումը յաճախ մեղի տրուած է յուպական լինելութեամբ մը,  
ներշնչական ամբողջութեամբ մը, որ ապաւորական կոտորուածներ չի կրեր:  
Սայաթ-Նովայի երեւակայութիւնը շատ անգամ կ'անցնի նախնական  
պատկերներու նեղ շրջագիծէն՝ աւելի լայն տարազներ փոփոխու համար:

Կը հետեւի, թէ անոր տաղերուն յորինուածքը եւս չի կրնար ունենալ  
ժողովրդական երգերու տարազին նախնականութիւնն ու արտայայտական  
բացորոշ անյօդութիւնները: Այդ տաղերուն վրայ անհկատ շ'անցնիք Քիֆիֆ  
ճաշակի մը գէթ արագ խնամքը:

Եթէ սասոց վրայ աւելցնենք շնորհն ու յատկութիւնները, դոր բանաս-  
տեղական հողուպիւս զգայարանք մը կը հազորդէ անոր լեզուին ու սճին՝  
«նախիկ Նոքար» աշուղին քով կը կանգնի բանաստեղծներուն ամէնէն «աղ-  
նրական»ներէն մէկը:



Արդ, թէեւ բանաստեղծ Սայաթ-Նովայի արուեստին մէջ աշուղական  
խառնուածքը լայն չափով ենթակայ մնացած ըլլայ բանաստեղծի զգայարան-  
քին, թէեւ այդ զգայարանքին հակակիւնէն ամէնէն աւելի փախչելու տրա-  
մադիր անոր տաղերուն մէջ իսկ ներշնչումին արագ ու անակնկալ յայտնու-  
թիւնները տաղին ամբողջ ընթացքին հետ կապուած պահեն մեր զղայնու-  
թիւնը, փախցնելով անոր առջեւէն իմաստին արտաքին անյօդութիւնները,  
այսուհանդերձ անոր տաղերուն միութիւնը թոյլ պիտի ըլլար առանց իր յօ-  
րինումի եղանակին, որ ոչ միայն անոնց կը բերէ երաժշտական զղայնու-  
թեան մը թանկագին նպատուր, այլեւ կ'ապահովէ անոնց հոսանում միու-  
թիւնը՝ օգակելով մասերն ու բաժանումները, շարժական յարաբերութիւն  
ստեղծելու անոնց մէջ եւ յառաջ բերելով հոսանք մը, որ տաղը կը մղէ ա-  
նումի եւ թաւալումի:

Ահաւասիկ յորինումի սճը՝ իր թեքները, ընդհանուր ձեւին մէջ, եթէ  
թեքնիք պիտի կոչենք քերթուածի տարադաւորման եղանակ մը, որ, իր ամ-  
բողջ համակարգ դրութեամբ, իր ձեւաւորումը դտած ըլլալ կը թուի ներ-  
շնչումին մէջ իսկ:

Կը դժուարանամ ըսել, թէ ան ո՛րքան օգտուած կրնայ ըլլալ պարս-  
կական բանաստեղծութեան եւ առհասարակ արեւելեան երգերու յորինու-  
ածական կերպերէն, բայց ապահովաբար իրմ'ով կը սկսի տուեալ կատարելա-  
դործուած ձեւը. արուեստագէտի ճարտար զգայարանքի մը շքեղ ստեղծա-  
յործութիւնն է ան, որ իրմ'ով մտաւ բանաստեղծական թեքնիքին մէջ եւ ե-  
ղաւ նախապատիւ տարազը հետապայ աշուղական տաղերուն. եղաւ, իր ընդ-  
հանուր ձեւին մէջ, օրինակելի տարազ մը արեւելակայ (կ'ըսեն նաեւ վրա-  
ցի) արդի բանաստեղծներու համար:

Բայց Սայաթ-Նովայի թեքնիքը, իր քանի մը տաղերով, մեզի կ'ըն-  
ծայէ երաժշտականութեան նոր կերպ մը եւս, որ տաղը կ'օժտէ երգաձայն  
արտասանութեամբ մը: Ասիկա մեր շափական դրուածքներուն մէջ շատ ա-  
ւելի կանուխէն տեսնուող անհրապոյր հնչախաղը չէ, որ անկարգ կամ ա-  
նարուեստ բաշխումով մը տաղերուն մէջ բերուած հնչումներու գրեթէ բո-  
նադրոս յարաբերութենէն յառաջ կու գայ. անիկա քերթուածին տողերուն

մէջ արուեստին ճաշակովը կարգաւորուած յանգերու ձայնական շղթայաւորումէն կը ծնի: Եւ այս պարագային բանաստեղծը պարտաւոր կ'ըլլայ յարդիւն տաղաշարութեան դէմ նախնական պայմանները՝ հասածներու բաժանումը, սրբազանի անոնց վերջաւորութեան բերուած յանգերը նոյնամանակ հեռաւորութիւններու վրայ բանաւոր յարաբերութեամբ մը օգակուն իրարու: Այսպիսով տողերուն վրայ զետեղուած կ'ըլլայ յանգային ստեղծաշար մը, որուն յառաջ բերած ձայնական առնչութիւնները — տողին արտասանութեամբ — տաղին կու տան նուազային ռիթմ մը:

\* \*

Սոյաթ-Նովայի գլխաւորանքը այլազան մարդեր չի գրկեր: Եթէ երբեմն անիկա աւելի բարոյական կենցաղի մը ցանկութիւններէն տարուած ըլլալ կը թուի, ասիկա կեանքի վայելքէն ու փառքէն լայնօրէն հովանաւորուած, բայց սիրոյ զետեղին վրայ յուսահատած հոգիի մը կրած հակադրեցութիւնն է: Ու այս պարագային իր զգայնութիւնը, որքան ալ տանելի եւ երբեմն քաղցրօրէն հաղորդական («Բեզարիլ իմ» — տաղ՝ ԼԴ), ընդհանրապէս մեղի չի բերեր իր կեդրոնական ճիգին ինքնեկ խանդավառութիւնը: Այս մայր լարին վրայ ճշտաւ շարժողը ետ'րն է միշտ, որուն սիրոյն՝ այս հայ քրիստոնէական պատրաստ է, շատերու անունով, իր քրիստոնէութիւնն իսկ ուրանալու:

«Շատ մտքք քու էշխմէն կու դառնայ Եզիդ»:

Պէտք կ'ա՛ր սակայն այս բաց յայտարարութեան, երբ անոր արուեստի զգայարանքը հարին դիմաց աււապէս պահեց սեւեռեալ ներշնչութի մը զերայոյց վիճակը՝ իրրեւ հաւատաւոր քուրմի մը վերացեալ հոգին մեծ կուրքին դիմաց:

Ուղաղ ու պազ հոգիներու սխալ դատումովը յափազանցութիւն շտեմնուի այս հանդիտութեան մէջ: Սոյաթ-Նովայի համար ետքը եղաւ զերադոյն արժէք մը, մարմին հազած էութիւն մը, որ անդիմադրելի ուժը ունի հոգիները այլափոխելու եւ որ անոր զգայարանքը պահեց իր տեսական նուաճումին տակ: Ասիկա հոգեկան այն կացութիւնն է, որ իրմէ առաջ Նարեկացիինը եղաւ քրիստոնէութեան բացարձակ աստուածութեան հանդէպ: Ու մենք կը տեսնենք որ ցեղին երկու մեծ բանաստեղծները քով քովի բերող այս ամբարիշտ զուգակշիռը արդար է նաեւ այլ հանդիտութեամբ:

Զգայարանական այս դրութիւնը անխուսափելիօրէն յառաջ պիտի բերէր ստեղծագործական միութիւն: Եւ արդէն այս երկու բանաստեղծներուն երկերը մեզի արուած չե՛ն մեծ ներշնչութի մը ամբողջական տարազին տակ: Մի՛ նայիք տաղերու առանձին բաժանումներուն. անոնք ռիթմական միութիւններն են յարածուի զգայնութեան մը շաւարաող զանաւորումին, շարունակուող ու շարունակելի մասերը անհուն ու անծիր քերթուածի մը: Ձէ՞ք զգար տաղէ տաղ, օգակումը հոգիներէ ներս կատարուող անվերջ պատարադի մը արիւնտա դրուազներուն:

ԵԿ. ՏԱԽԱՊԵՏԵԱՆ

L. ՄԿՐՏՁԵԱՆ

Ընթացիկ Բանավէներ  
Ազգային Հարցերի Շուրջ

Դ.

Մոսկովեան պատմագիտական ամսագրի էջերում ազգային հարցերի շուրջ ծաւալուած բանավէներն թէեւ հայաստանեան ազդադէտները անմիջական մասնակցութիւն չունեցան, այդ գործը թողնելով կենտրոնական գիտական եւ ուսումնական շրջաններում արդէն այս կամ այն չափով յայտնի հայազգի անձանց, այնուամենայնիւ, Հայաստանում եւս եղան համապատասխան արձագանդներ: Ու այդ ասպարէզում առաջնութիւնը պատկանում է արդէն վաստակաւոր Արտո Եղիազարեանին, որը մի շարք նպատակաւոյց յօդուածներով հայաստանեան ընթերցողներին տեղեակ պահեց բանավէների ընթացքին ու արտայայտուած տեսակէտների մասին: Առաջին անգամը չէ, որ նա հայաստանեան մամուլէ կիցում հանդէս էր գալիս ազգային հարցերի վերաբերեալ, ուստի եւ բանավէների առթիւ լոյս տեսած յօդուածները անբուպասելի ու պատահական չէին:

Քանի որ Արտո Եղիազարեանի անունը ոչինչ չի ասում Սփիւռքի մանաւանդ այսօրուայ ընթերցողին, արժէ

զէթ մի քանի հարեւանցի խոսքերով ներկայացնել նրա կեանքի ճանապարհը, մերօրեայ ազդագիտական յօդուածների մասին խօսելուց առաջ: Խորհրդային Հայաստանը մինչեւ հիմա լուսադրութեան դործի ղեկավարներ շատ է ունեցել, բայց նրանցից բոսայիօրէն ո՛չ մէկեւ անունը այնքան սերտօրէն չի կապուած այդ ասպարէզի հետ եւ այնքան խորհրդանշական չէ, որքան Արտո Եղիազարեանի ցայտուն անունը: Եղիազարեանը լուսեցի է, ծնունդ է 1899 թւին, սովորել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում, 1919 թուին ընկնել կոմունիստական շարժման ոլորտը, այնուհետեւ դարձել է և ուսանել մի շարք վարչերում ու վերջապէս 1928 թուին վերազարժել Հայաստան, նշանակուել Երեւանի Համալսարանի ուսումնական մասի արտակրտոր, իսկ մէկ տարի անց՝ Առքանազ Մուսեանի յանկարծակի մահից ամիսներ յետոյ, որի տեղակալն էր եղել մասնակից, նա դարձաւ Լուսաւորութեան Ժողովրդական կոմիտար: 1931-32 թուերին Եղիազարեանը վերստին գտնուում էր Մոսկուայում, իսկ Հայաստան վերադառնալուց յետոյ երկրորդ անգամ

զարձաւ ժողովո՞մ՝ մինչեւ հանրայայտ ջարդերի սկիզբը: Եղիազարեանի կեանքի ու գործունէութեան համար յոտկանշահանք, ի հարկէ, ոչ թէ առհասարակ եւ այն էլ երկու անգամ լուստողովո՞մ եղած լինելն է: այլ ժամանակին խորհրդահայ խելահաս երիտասարդութեան եւ լուսաւորութեան ասպարէզի աշխատողների շարքերում բացառիկ համակրանք ու հեղինակութիւն վայելելը եւ դա մի այնպիսի՝ խառն ու պղտոր ժամանակ, երբ մարդկայնական ճանապարհից շեղուելն ու սայթաքելը այնքան հեշտ էր ու առաւել եւս պարտադիր: Այդ ամէնից կարելի է եզրակացնել, որ իր Գայլիւծ անվերապահ համակրանքի համար՝ Եղիազարեանը, ըստ երեւոյթին, պարտական էր ներքին որոշակի գործունական ու անձնական արժանիքների: Եւ այդքան անխառն վաստակ ունեցող մի մարդ գրեթէ քսան տարի զրկուեց իր հայրենիքում ապրելու եւ գործելու ուսարկան հնարաւորութիւնից՝ ստայինեան տիրապետութեան ժամանակ: Աքսորից վերադառնալուց յետոյ, Արաօ Եղիազարեանը այնպանքի անցաւ գիտական հաստատութիւններում եւ տնտեսագիտութեան գծով նրան շնորհուեց մի բաւական համեստ գիտական աստիճան: Բայց Եղիազարեանի վերջին տասնըհինգամեակի գործունէութեան համար առաւել ընտրուող ազգային տեսական ու ընթացիկ հարցերի վերաբերեալ նրա գրութեան քաղմութիւն յօդուածներն ու ելոյթներն են: Հայաստանում սովորաբար շատերն են յօդուածներ ու գրքոյկներ գրում ազգային հարցերի ու քաղաքականութեան այլեւայլ կողմերի մասին, բայց նրանցից ջշերն են իսկապէս հետեւողականորէն ու լրջօրէն զբաղուած ազգագիտութեամբ, իսկ այդ ջշերի մէջ էլ անպայման առաջին տեղն է բռնում հենց Արաօ Եղիազարեանը: Ինչի՞ մէջ է կայանում նրա գործունէութիւնը:

Արաօ Եղիազարեանի ազգագիտական մտքերի հանգամանայից ուսումնասիրութեամբ ու բնութագրմամբ հետագայում անպայման կը զբաղուեն ուրիշներ:

ըլ: Բայց այսօր իսկ, առանց վերապահութեան, կարելի է ընդդծել մի շարք ինքնին հաւատար կէտեր:

Առաջին. Եղիազարեանը հետեւողականօրէն իսկապէս կենդանի հետաքրքրութիւն է ցոյց տալիս ազգային հարցերի նկատմամբ եւ այդ ուղղութեամբ էլ բոլորից յոճախ հանդէս զալիս հայտատանեան մամուլում: Նա, ի տարբերութիւն շատ ուրիշների, իր մտքերը շարադրում է միանգամայն ինքնուրոյնօրէն, իր սեփական լեզուով ու ոճով, առանց լիովին զանազան պարտադիր մէջբերումների գերի գտնելու:

Երկրորդ. Եղիազարեանը ուշիւուշով հետեւում է համախորհրդային ազգագիտական զբաղանդութեանը եւ հարկ եղած դէպքում հրապարակաբար հանդէս զալիս նոյնիսկ քննադատական խօսքով, առանց աւելորդ վերապահումների:

Յարորդ. Եղիազարեանի ազգային բարեունմները առհասարակ երբեք նիւհիլիստական չեն: Նա եւս, որպէս կոմունիստ, յենում է մարքս-լենինեան դրոյթների վրայ, բայց սովորաբար բնութանում է համեմատաբար առաջաւորներին ու սղծամիտներին, այլ ոչ թէ մեծապետական խաւարմոլութեանը սնունդ հայթայթող մանկաւիկների շարքերում:

Չորրորդ. Եղիազարեանի ելովէտր անպայմանօրէն միջազգայնութիւնն է, նա անկեղծօրէն հաւատում է այդ գաղափարին ու իրականութեանը, ուստի եւ այնքան բուռն է լինում նրա մրդովմունքը, երբ որոշ կեղծ ազգագէտներ ջանում են միջազգայնութեան անունով անմիջական ազգամահութեան քարոզ ու կացութիւն պարտադրել: Սրանք սոսկ առաջին իսկ հայեացից նկատուող ցայտուն առանձնատկութիւններն են:

Արդ, Արաօ Եղիազարեանը Հայաստանում տարիներից ի վեր գտնուում է ազգագիտական մտքի կենտրոնում: Զհաշուած նախորդ տարիների նրա յօդուածները, այստեղ տեղին է գէթ յիշատակել 1963-64 թուերին Երեւանի «Լեւոն Գիւնեան Եղիազարեանի անուան» հիմնադրամիջոցով շարժուած քաղաքացիական պայքարի մասին:

ւած «մաքերի փոխանակութիւնը» Եղիազարեանի մի յօդուածի կապակցութեամբ, որը վերաբերում էր մոսկովեան հեղինակ ժուկովի տեսութեանը սոցիալիստական ազգերի յատկանիշների մարման» մասին: «Վնայրտսի խտորիի» ամսագրի 1966 թուին բացած բանավէճին Եղիազարեանը անմիջապէս շտանակացեց, այսինքն նրա «ուորազրութեամբ այնտեղ ոչինչ չհրապարակուեց, բայց շատ հեղինակներ քանիցս յիշատակեցին նրա ոտուներէն ազգագրական գրքովը եւ վկայակոչեցին նրա որոշ գրոյթներ: Եղիազարեանն ինքը բանավէճի առթիւ հանդէս եկաւ հաստատեան մամուլում: Այսպէս, «Պատմա-Ֆամասիական Հանդէս»ի 1968 թուի առաջին համարում իր «Բանավէճ «ազգ» հասկացութեան մասին» ընդարձակ (եօթ մանրատու էջ) յօդուածում, Եղիազարեանը տարակայօրէն ամփոփեց բանավէճի ընթացքում գրանից առաջ արտայայտուած այլեւայլ տեսակէտները, միաժամանակ շատ զէպքում զլացնել տարով եւ իր որոշակի վերաբերմունքը: Յօդուածը վերջանում էր հետեւեալ պարբերութեամբ.

«Ազգ» հասկացութեան շուրջը ծաւալուած այս բանավէճը պատահականութեան արդիւնք չէր, այլ՝ կեանքի պտահեց: Մեր դարաշրջանը անխուտափելիօրէն առաջադրում է ազգերի, այդ քում եւ սոցիալիստական ազգերի հետազոյ գարգացման ուղիների եւ կոնկրետ հեռանկարների հարցը: Իսկ դրա լուծման համար պէտք է յստակ պատկերացում ունենալ «ազգ» հասկացութեան էութեան մասին, այդ քում եւ սոցիալիստական ազգերի էութեան մասին»:

Բանավէճի առթիւ Եղիազարեանի գրած այդ յօդուածը եզակի չէ: Շատ շանցած՝ «Սոցիալական մանկավարժ» ամսագրի 1968 թուի ապրիլեան համարում (էջ՝ 15-21) նա յատուկ քննութեան նիւթ դարձրեց «Ազգային ինքնագիտակցութիւն» նիւթը, առաջին հերթին գաղտնանցի հեղինակ Ահեղ Աղաեւի համապատասխան յօդուածի կապակցութեամբ: Նոյն թուի Յուլիսի 12-ին Եղիա-

զարեանը «Վրական քերթում» որոշ թէեւ ոչ բիւրեղացած մտքեր յայտնեց «Սոցիալիստական ինտերնացիոնալիզմի եւ Ոսցիոնալ շովինիզմի մնացուկների մասին», ի միջի այլոց նշելով, թէ՛

«Մեր օրերում սոցիալիստական երկրների փոխարարերութիւններում առկայ դժուարութիւնների պատճառները պէտք է որոնել սուրեկալի բնայր կրող հանգամանքներում, ինչպիսիք են՝ տուեալ սոցիալիստական երկրի եւ ժողովրդի առանձնայատկութիւնների անտեսումը, առանձին կոմունիստական կուսակցութիւնների կողմից սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբումների ոչ միշտ բնկալումն ու կիրառումը եւ այլն»:

Այդ յօդուածում հեղինակը անդրադառնում էր եւ մոսկովեան բանավէճի մասնակիցներ Ջոնուսովի ու Մամերեանի որոշ գրոյթների, ինչպէս եւ քննադատում էր Պ. Գ. Մեմեճեովի ապագա զանայցման տեսութիւնը:

«Իրարեր հասարակական գիտութիւնների» ամսագրում (1968 թ., № 9) Եղիազարեանը յատուկ դրախօտութեան նիւթ դարձրեց կրանոգարում («Հիւսիսային Կովկաս») 1966 թուին տպուած Մ. Մ. Յարութիւնեանի «Ազգը եւ նրա հոգեկան կերտումը» վերնագրով աուսերէն գիրքը, այդ առիթով նոյնպէս հասակցութիւն բացելով մոսկովեան բանավէճի մասին: Գրքի մասին Եղիազարեանը գրում էր.

«Ուզակի ասեմք, որ խորհրդային գրականութեան մէջ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄՆ է երեւան եկել այդպիսի ծանրակշիւ աշխատութիւն, որը համակոյզմիօրէն եւ խորապէս գիտականօրէն հետազօտում է այնքան բարդ մի խնդիր, որպիսին է ազգի հոգեկան կերտումը»:

Մի այլ տեղ Եղիազարեանը ընդգրծում է գրքի հեղինակի մի կարեւոր գրոյթ.

«Եւ մի այնպայայ, — գրում է նա, — ազգային գացման մէջ, Յշում է հնդիմակը, պահպանում է որոշակի յարդակական կապ, ինչ որ չի կարելի հաշիւ շտոնել «մանաւանդ մեր ժամանակ,

երբ խորհրդային ժողովուրդների ազգային զգացումը արտասովոր կերպով անել է»:

*Մի շարք հաստատական ու քննական գիտողութիւններից յետոյ, Եղիազարեանը եղբակացնում էր:*

«Ամբողջութեամբ վերցրած, մեր հայրենակցի՝ Արսւնդարում հրապարակուած մենագրութիւնը որոշակի ներգրում է ազգերի մարքս-լենինեան տեսարանին մէջ, մասնաւորապէս մի այնպիսի՝ բարդ ու «նուրբ» խնդրի մշակման ապարէզում. որպիսին է ազգի հոգեկամ կերտուածքը»:

*Այստեղ գիտակցարար սահմանափակուեցինք միայն Արտո Եղիազարեանի յօդուածներով, առանց բոտ էութեան քննութեան նիւթ դարձնելու. նրանց մէջ ձեւակերպուած դրոյթները, քանի որ դա արդէն բորբոքի ուրիշ տեսակի աշխատանք կը հանդիսանար: Այսպէս մարտեցինք, որովհետեւ Հայաստանում միայն նա ուղղակիօրէն անդրադարձաւ մոսկովեան բանավէճին, ընդամին շարադրելով նաեւ իր սեփական տեսակէտները: Եւ քանի որ այս յօդուածը հիմնականում վերաբերում է մոսկովեան բանավէճի ծաղման հարցին, նրա ընթացքին ու յարուցած արձագանքներին, բնականաբար պէտք է որ տուեալ դէպքում շեւտը դրուէր յատկապէս հայաստանեան համապատասխան արձագանքի վրայ:*

*Սակայն իրականում միայն յիշեալ բանավէճի առթիւ չէ, որ Հայաստանում կամ առհասարակ հայ հեղինակների կողմից յօդուածներ ու գրքեր են գրուած աղբային հարցերի վերաբերեալ: Ինչպէս արդէն մի անգամ յիշուեց, այդ մասին շատերն են գրուած: Բանն այն է, որ խորհրդային պայմաններում աղբի մասին գրելը անպայման գիտական, գրական, իմացական կամ հանրային բարձր հետաքրքրութեան արտայայտութիւն չէ, այլ առաւելապէս կուսակցական քաղաքականութեան, «ազիտացիայի ու պրոպագանդայի» գործ: Ամէն տեսակ «գրութեան» ու «նահանջներ» պայմանա-*

*ւորուած են ռազմավարական այլեւայլ նկատառումներով, այն չափով, ի հարկէ, որքան որ դա կախում ունի կուսակցական վերհասակի կամ շրջանի կարողութիւններից: Այդ ձեւով էլ որոշուում է լոյս տեսնող յօդուածների ու գրքերի մեծ մասի բովանդակութիւնը: Ահաւասիկ հայաստանեան ու արտասահայաստանեան հայ հեղինակների՝ Հայերէն կամ ռուսերէն տպուած ու տպուելիք գրքերի մի քանի վերնադերք, որոնցից կարելի է կոսահել, թէ յատկապէս ինչ ուղղութեամբ է թույլատրուած խօսել «ազգային հարցի» մասին: «Մեծ Հովիտները եւ ազգային հարցի լուծումը Անդրկովկասում», «Ենտերմացիան լիզմը ՍՄԿԿ ազգային քաղաքականութեան հիմնէն է», «Վ. Ի. Լենինը և ՍՄԿԿ-ում ազգային հարցը լուծելու տեսական ձեւերի մասին», «Լենինը եւ ազգային հարցի լուծումը և ՍՄԿԿ-ում», «Ազգերի ծաղկումն ու մերձեցումը կոմունիզմի կոտուցման ընթացքում»:*

*Շատ են այդ ընդթի բրտիւրներն ու մանաւանդ յօդուածները, որոնք բոտ էութեան ոչնչով չեն արտայայտուած վերնախաւի աղբային քաղաքականութեան հանրայայտ ու իրական կողմերը եւ նոյն ժամանակ էլ ոչնչով չեն նպաստուած իրական ազգաշխտութեան արդիւնաւէտ զարգացմանը:*

*Այդպէս լինելով Հանդերձ, պէտք է թեթեւակի արձանագրել մի երեւոյթ: Հայաստանեան պարբերականների շարքում ամէնից շատ «Լենինեան ուղիով» ամոագիրն է գետեղում նիւթեր աղբային հարցերի վերաբերեալ: Այդ հանդէսը Հայաստանի կոմկուսակցութեան կենտրոնի «Տեսական – քաղաքական ամսագիր»ն է, այսինքն տեսականօրէն նրա դիրքի ու վերաբերմունքի պաշտօնական արտայայտութիւնը: Ուստի եւ աղբային հարցերի շուրջ հրատարակուող նիւթերն էլ լիովին կրում են կոմունիստական դադափարախօսութեան կնիքը, նրա երկմաստութեան եւ երկդիմութեան ամբողջ ծանրութիւնը, քանի որ այդ դարափարսիւնութիւնը «արէնքով» միայն փառա-*

բանել կարելի է, բայց ոչ երբեք քննել ու մանաւանդ քննադատել, ինչպիսիք էլ լինեն իրականութեան արամադրած անվիճելի փաստերը: Այդ է պատճառը, որ լրագրական մասնագիտութեան տեսակէտից ակնյայտօրէն այնքան խնամքով խմբագրուող ամսագիրը, հենց յատկապէս «տեսական» ու «քաղաքական» քնազաւառում է զրոսեւորում իր ցնցոտիապատ աղբատութիւնը, արմատական իրաւագրկութիւնը եւ ճակատադրական առաջակալութիւնը, ինչ որ ունի իր առայժմ անյաղթանարելի նախադրեաները: Ու թէեւ ամսագրում արգային Հարցերի վերաբերեալ համեմատաբար ամէնից շատ նիւթեր են երեւում, նրանց իրական բովանդակութիւնն ու կշիռը շատ աննշան է, եթէ չհաշուենք որոշ ուշադրաւ բացառութիւններ: Այսպէս թէ այնպէս, սոյն յօդուածի կապակցութեամբ արժէ նշել, որ երեւանեան այդ ամսագիրը եւս իր բաժին մասնակցութիւնն ունի Հայաստանեան ազգադիտական մտքի պահպանման բնագաւառում, մանաւանդ իր ցուցարբութ մնայուն հետաքրքրութեամբ:

Յ.

Մոսկովեան «Վոպրասի խտորի» ամսագրի մէջ 1966 թուի սկզբից բացւած եւ մի քանի տարի տեւած ու մինչեւ հիմա էլ փաստօրէն շարունակուող բանավէճը Խորհրդային Միութիւնում միակը չէ իր տեսակի մէջ, թէեւ ամէնից ուշադրաւն ու բովանդակալիցն է, երբ նկատի ենք առնում այն պարագան, որ տուեալ ամսագիրը սովորական առումով մերկապարանոց քարոզչական բեմ չէ, այլ ըստ էութեան ընդհանուր գիտական առաջադրանքներ ունեցող հանդէս, որը ջանում է խորհրդային պայմաններում շրջանառութեան մէջ դրուած գաղափարախօսական ընդհանուր տեղիներն անդամ ներկայացնել գիտական ըզգեստաւորումով: Եւ իսկապէս, բանավէճի բազմաթիւ մասնակիցները իրենց

ձեւակերպումների մէջ զրոսեւորեցին շարագրանքի արտասովոր ճկունութիւնն ու փափկանկատութիւնն միմեանց նկատմամբ: Նրանք մի պահ կարծես թէ մոռացան «Պրայնաս»-ի ու նրա այլեւայլ կրկնօրինակների դատախաղային ոճը եւ ասպարէզ մտան իսկապէս բանավիճելու արամադրութեամբ ու նպատակով, զործածելով համապատասխան կերթ ու զուսպ լեզու, ինչ որ, ինչպէս յայտնի է, այնքան էլ յատկանշական չէ խորհրդային հեղինակների համար:

Բանավէճի ընթացքում ուշադրութիւն զրահեց այն բաւական աննախընթաց երեւոյթը, որ «ազգ» հասկացութեան եւ յարակից հարցերի մասին արբւնցին ապշեցուցիչ բազմազանութեամբ ուղքի ընկնող սահմանումները եւ ընդամեն սկզբից եւեթ պարտադիր շնամարտեց անպայման վերջնական ու միակ եղբակացութեան հասնելը: Իրերի այսպիսի մի վիճակ ինքնին հասկանալի է եւ անփոխարինելի աղատ պայմաններում, բայց կոմունիստական իշխանութեան ներքոյ, որտեղ սեւէ տղքեցիկ գերագոյն իշխանաւորի յօրինած որեւէ «իմաստուն» ցնդաբանութեան երկիւղածութեամբ հետեւելը համարւում է առանձնազոյն առաքինութիւն, — սա առնուադրն մի շտեմնուած շրայութիւն է եւ առաջին հայեացքից անհասկանալի: Բայց փաստը մեր առջեւն է եւ չենք կարող անտեսել: Այդ երեւոյթի հետ սերտօրէն կապուած է եւ մի այլ պարագայ: Խորհրդային Միութիւնում երկար տասնամակնների աւանդոյթ է, որ քաղաքական ու տեսական սկզբունքային առաջնահերթ դրոյթները քննուեն ու վճռուեն բացառապէս կուսակցական վերնախաւի ներսում եւ ապա որպէս պատգամ պարտադրուեն ամբողջ երկրին, յաճախ ուղղակի անակնկալի բնոյթ կրելով: Ըստ այդ աւանդոյթի, «ազգ» հասկացութեան սահմանումն էլ պիտի բխէր մոսկովեան սեւէ ղեկավար անձից կամ, ասենք, Մուսլովի ու սուլովների նման անպատուզ գաղափարախօսներից եւ առանց այլեւայլութեան դարձուէր դասադրեա-



յին «Ճշմարտութիւն»։ Մինչդեռ այս անգամ զարգ չասկացութեան զննութեամբ զբաղուեցին Հիմնականում այսինչ կամ այնինչ գիտութեան դժով դոկտորներ, թեկնածուներ եւ այլն, պրոֆեսորներ ու «ազգային յարաբերութիւններէ ընտրուած մասնագիտացող» նորայայտ ուսուցիչներ։ Ընդդէմ էլ «վերջին խօսքը» ըստ երեւոյթին կրեւիւն է վերապահուում, այնուամենայնիւ, հարցը զննութեան առնելու ծանրութեան կենտրոնը գտնուում է գիտական հետազոտութիւններով զբաղուող անձանց միջավայրում, ենթակայ է նրանց ընդհանուր ազդեցութեանը եւ վերջին հաշուով ճորանց առակ է կամ պակաս եռանդուն ու խղճմտա վերաբերմունքով է բնութագրուում, նախապէս հանգիստանալով նաև գալիք նոյնանման լուծումների համար։

Մինչեւ Հիմա մեր կողմից արուած թուցիկ հաստատումները նշում են խորհրդային Միութիւնում ազգային հարցերի գիտական ուսումնասիրութեամբ զբաղուելու այսօրուայ փուլի դրական կողմերը, այսինչն այն, որ այժմ գիտական ու լայն հասարակայնութեան մօտակիցայտօրէն գիտակցում է ազգային հարցերի բացառիկ աշխարհութիւն դարձնելու հրատապ անհրաժեշտութիւնը, բացայայտ կուսակցա-քարոզչական նրկատարումներին միահիւսուում են եւ դուս հետազոտական ու գիտական նկատառումները, գիտութեան ասպարէզում գործող անձինք վարժուում են իրենց մշտնէրը աւելի կամ պակաս ազատութեամբ, թէեւ նոյն պրոկրուստեան սահմաններում, արտայայտելու պահանջին ու քայլ

առ քայլ օրինականացուող սովորութեանը։ Այս ամէնը, անշուշտ լաւ է եւ թերեւ էլ բազմախոտուում։ Հաւանաբար ինչ որ սահմանադիւ է հանդիսանում։

Բայց միշտ մնում է նոյն մտահոգիչ հանգամանքը՝ միակուսակցական բունատիրութեան գոյութիւնը, որը կասեցրնում է հանրային ամէն մի դրական յառաջընթաց, պարբերաբար թոյն ցանում նորածիլ առողջ տրամադրութիւնների վրայ եւ սիդիֆեան տառապանք դարձնում ստեղծագործական ամէն մի ճիշդ ու վերելք։ Այսօր խորհրդային կոմունիստական իշխանութիւնը հանդուրժում է նայինակ բանավէճեր ազգային հարցերի շուրջ, կիսովին բաց պահելով մտքի առջեւ բարձրացուած ամբարշտակներն ու ստեղծագործական հոսանքի նեղ ճանապարհը, ուղղակի բաց է բաց յուսալով, թէ այսպէս կոչուած զբուրժուական գաղափարախօսութեան դէմ յաղթութեամբ պայքարելու համար թերեւ ազգազէտ գիտնականները իրենց կողմից մի ազուուսար գտնեն, ախրող ամբողջատիրական իշխանութիւնը փրկեն ներքին կրծող էրոզիայից, այլատար ուժերի ազէտուլի բախման հաւանական վտանգից ու նրա վերջնական անակագումից։ Եւ ահա հրապարակային բեմերից ամբողջ տորին խօսուում ու գրուում է արթնացած ազգերի ու նրանց հետագայ ճակատագրի մասին՝ հարկադրաբար փոխգիշտակական լուծումներ փորձելով։ Այսինչն, ամէն օր երեւակայութեամբ թաղուող ազգերը իրականում կան եւ ըստ էութեան ստիպում են, որ բարեկամներն ու թշնամիներն իրենցով զբաղուեն։

(Շար. 4 եւ վերջ)

Լ. Մ.

Հայաստանի Կոմկուլի  
 Կենտրոնական Կոմիտեի  
 Աշխատանքային Միութեան  
 Կենտրոնական Կոմիտեի

Հայաստանի Կոմկուլի  
 Կենտրոնական Կոմիտեի  
 Աշխատանքային Միութեան  
 Կենտրոնական Կոմիտեի

ՎՋԴԱԿ՝Ի ԵՒ ՉԱՐԹՕՆՔ՝Ի ԴԱՏԸ

Այս դատին տեղանքով չէ ընթերցողը: Մեր նախորդ թիւով տուած էինք չուրը եւ նոյն ատեն հարգողան զուին զէժ դատ բանալու չափ զիւրազան զարժան գիշատիչ գայլին քնազդները արտահանող շարք մը զկայտութիւններ մեծահրու չափ գրազէտներէ:

Լիբանանի մամուլին վերոյիշեալ երկու անդամներուն զէժ բացուած այս դատը իրապէս ցնցեց արտասահմանի հայութիւնը, որ կուսակցական թէ քաղաքական իր տարակարծութիւնները մէկտէր դրած՝ մէկ մարդու պէտ նառարու հայ միութեան լուծեցնելու, առաւել եւս իր զործած ցեղասպանութիւնը մոռցնել տալու թրջաբանի այս մեծարկէն զէժ, յայտարարելով, որ ՎՄԱԿ-ի յատկերը, որիւն պարագայի, չեն կրնար ցնչել պատմութիւնը եւ հայերը, ուր որ ալ գտնուին, նոյնքէն յարամալիր չեն գոցելու իրենց տնցեալին այս արիւնատ եւ դաժան էլքը:

Տրուած ըլլալով, որ թրջական ի, ֆանտութիւններուն բողոքին հետեւեալով հայ երկու թեթեւուն զէժ բացուած դատը ուղղուած էր իր արտուներերուն ահի կանգնելու կորովը օրըստօրէ ուժեղացնող արտուող հայութեան զէժ, հայութեան մայրը հանդիսացող հայ մամուլը շտեմուած համարախութեամբ մը կուտարեց միացեալ յայտարարութիւններ, զորս մէկտեղած կը ներկայացնենք ընթերցողին, իրրեւ պերճախօս զկայտութիւններ՝ ի մասին զճոռական պահուն հասարական ուժ գտնալու մեր ընդունակութեան:

Ինչպէս նաեւ է, այս հարցին առիթով անտարբեր շմուցին նաև թրջական բանակարութեան դատն հետեւեալները ապրած լիբանանցի պետական զէժները, մամուլն ու մասուրականները, որոնք իրենց զէժ ուղղուած նկատեցին թրջական ստեղծութիւնը, լիբանանեան պրիին զէժ, ազատութեան իրենց ըմբռնումին զէժ եւ իրենց ընդգրգումը յայտնեցին բնմերէն եւ յօգուածներով, որոնք մէկ կատարուած քանի մը նմոյշներ կու տանք հետագայ էջերուն:

Դատարարութեան երկրորդ եւ զինքին նիտող տեղի ունեցաւ Յուլիս 1ին, Արդարութեան Պալատին մէջ, ուր, անհնդիրներու հոծ բազմութեան մը ներկայութեան՝ պաշտպանողական կորովի ճառ մը արտասանեց Մեթր Մոհսէն Սլիմ, որ մէկ հոռ իստք առին մեր գլխին ի նպատակ հոս զուտեղ երկու ստանալ փաստարաններէն երեքը՝ Հրաշխայ Եամլեան, Փուատ Պուլթուս եւ Պատուգի Գազի:

Վճիռին արդիւնքը, ինչպէս նաև պաշտպան փաստարաններուն ճառերը պիտի տանք յաջորդելու:

ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ՄԱՄՈՒԼԻՆ ԽՕՄԲԸ

Լիբանանայ օրաքիչքերը, ցկատելով որ Բնդհանուր Դատախազութեան կողմէ իրենց երկու անդամներուն՝ «Ազդակ»-ի եւ «Չարթօնք»-ի զէժ բացուած կրկնակ դատը խորքին մէջ կը վերաքերի բոլորին, պարտականութիւն կը ցկատեն լուսարանի իրենց պաշտօնակիցները եւ հանրային կարծի-

էր՝ էութեան եւ տարրգութեան մասին այն դատին, գոր կը նկատեն նոյն ա- տեն ուղղուած հայաստաւ բոլոր հրատարակութիւններուն եւ լիբանահայու- րեան դէմ:

1.— Ինչո՞ւ մեզի դէմ դատ կը բացուի Պէյրութի Մամուլի Վերաճննիչ Ատեանին առջեւ:—

Պէյրութի բրձական դիսպանատան կողմէ Լիբանանի Արտաքին Գոր- ծոց Նախարարութեան ուղղուած բողոքի մը եիման վրայ, այս վերջինը ըս- ղաքը փոխանցած է Տեղեկատուութեան Նախարարութեան՝ վերջ դնելու հա- մար լիբանահայ մամուլի շղթայազերծած պայքարին՝ ընդդէմ ցեղասպա- նութիւնը նախածննողներուն եւ գործադրողներուն — սլատուութեան առա- ջին ցեղասպանութիւնը, որ 1915ին մեկուկէս միլիոն հայ գոհեր խլեց: Տե- ղեկատուութեան Նախարարութիւնը, իր կարգին, վերոյիշեան բողոքը եւ Արտաքին Գործոց Նախարարութեան նամակը զրկած է Արդարութեան Նա- խարարութեան, որ ձեռնարկած է դատական այն հետապնդման, որուն եմ- քակայ ենք այսօր:

2.— Պէյրութի Վերաճննիչ Ատեանին դատաւորները պիտի վնեն այս բողոքին ընդունելութիւնը՝ ըստ էութեան եւ ըստ ձեւի: Չենք ուզեր այժ- մէն կարծիք յայտնել անոնց որոշման մասին: Բայց մեր պարտականութիւնը կը նկատենք հնչելի հոս՝ թէ «Ազգակ»-ի եւ «Զարթօն»-ի մեղադրեալ յո- ւանները կը վերաբերին ռզեկաչմանը 1915ի նահատակներուն, որոնց յիշա- տակը միշտ վառ կը մնայ, ինչ որ ալ ըլլան պայմանները, եւ այն ցեղասպա- նութեան, որուն գոհ գնաց հայ ժողովուրդը: Պարտականութիւն կը նկատենք նաեւ յայտնել, թէ մամուլը դատարար երեւ է պարագայի մէջ չեն կրնար ջնջել սլատուութիւնը, ամէնէն անաչառը դատաւորներուն, որովհետեւ պատմու- րիւնը իր խօսքը ըսած է արդէն այս մասին ու հայերը. ուր որ ալ գտնուին, երբեք տրամադիր չեն գոցելու իրենց անցեալին այս արիւնոտ եւ դաժան էջը:

3.— Լիբանահայ բերքերը կը նկատեն, թէ իրենց դէմ բացուած դա- տին ընդմէջէն, թիրախը խօսքի ազատութիւնն է, որ էական է նայնիմէն Լի- բանանի գոյութեան համար: Կը նկատեն նաեւ, որ այս դատը կը վիրաւորէ գրագրութիւնը լիբանանեան համայնքի մը, որ իր անվերապահ հաւատարմու- րեան բոլոր գրաւակառները տուած է հանդէպ լիբանանեան հայրենիքին եւ որ կը հանդիսանայ լիբանանեան ընտանիքին ամէնէն առօրէ ուժերէն մէկը: Մանաւանդ որ՝ այս համայնքը գիտակից է իր պարտականութիւններուն եւ պարտաւորութեանց, ինչպէս նաեւ զիտէ իր իրաւունքին սահմանները ու, այլ համայնքներու նման, նախանձախնդիր է աշխատելու Լիբանանի մեծու- րեան եւ յարսեակաւորութեան համար եւ որուն իրաւաւոր քայլին նպա- տակն է ծառայել Լիբանանին:

4.— Այս իրողութիւնները տրամագրելէ ետք, ամբողջական վստա- հութիւն ունենալով հանդերձ Լիբանանի դատաւորներուն վրայ, որոնք միշտ ալ ապահոված են իրաւունքին յաղթանակը. կոչ կ'ընենք լիբանանեան հան- բային կարծիքին, որպէսզի մեր կողմէն մասնակցի մեր նախապնդներուն յիշատակին, մեր անուրանալի իրաւունքներուն, մեր պատուին եւ արժանա- պատուութեան պաշտպանութեան:

ԼԻԲԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

«ԱՐԱՐԱՏ», «ԱՅԳ», «ԱԶԴԱԿ», «ԶԱՐԹՕՆ»

# Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

## «ԱԶԴԱԿ»Ի ԵՒ «ԶԱՐԹՅՔ»Ի



### ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ՄԱՍՈՒԼԻՆ ՄԻԱՑԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկահայութիւնը հաղորդ պահուած է արդէն այն դատին, որ թուրքիոյ կողմէ եւ ասպնջական Լիբանանի Տեղեկատուութեան ու Արտաքին Գործոց նախարարութեանց ճամբով բացուած է Պէյրութի մէր երկու պաշտօնակիցներուն՝ «Ազդակ» եւ «Զարթօնք» օրաթերթերուն դէմ, իբրեւ թուրքիոյ Հանրապետութեան նախագահը տնտեսարկողի:

Շեշտելով հանդերձ՝ որ բացուած դատը որեւէ հիմնաւորում չունի այս տեսակէտով, պիտի սպասենք անշուշտ Արդարութեան խօսքին: Մինչ այդ՝

1.— Հողեկան խոր զոհունակութեամբ կարգացիք լիբանանահայ մամուլին խօսքը՝ որ կը կրէ ստորագրութիւնը — վերոյիշեալ երկու օրաթերթերէն զատ — նաեւ «Արարատ» եւ «Այգ» օրաթերթերուն, որոնք ազդային միասնականութեան սրտաուշ ոգիով մը կ'իւրացնեն իրենց պաշտօնակիցներուն դէմ բացուած դատը:

2.— Մեր զոհունակութիւնը շատ աւելի կը շեշտուի ամերիկահայ պաշտօնի մէջ եւս տեսնելով հաստատումը ամբողջինդ միացեալ ճակատի մը՝ որ իր մամուլով, լիբանանահայ մամուլին նման, դիրք կը ճշդէ վերոյիշեալ դատի առընդութեամբ, միտամանակ իր վստահութիւնն ու հաւատքը յայտնելով այն մասին՝ որ Լիբանանի Արդարադատ Վերաքննիչ Ասեանը հարցը ըստ ձեւի եւ ըստ խորքի քննութեան բովէն անցընելով, պիտի վերլիչէ մարդկային առաջին ցեղասպանութեան հեղինակներու ժառանգորդներուն կողմէ բացուած դատին անհիմն բնոյթը եւ արգարութիւն պիտի ընէ Հայ ժողովուրդին, որ ո՛չ միայն անուրանալի իր նպատար ընծայած է մարդկային ընդհանուր քաղաքակրթութեան, այլև հաւատաւոր ու օրինապահ քաղաքացիներ տուած է Լիբանանի, ինչպէս այն բոլոր մեծ ու պղտիկ երկիրներուն՝ ուր հայեր բնակութիւն հաստատած են, առաւելարար Մեծ Եղեռնէն ետք կամ նախորդ դարու վախճանին պատահած թրջական անորակելի հալածանքներու հետեանքով:

3.— Թրջական այս նախաձեռնութիւնը նկատելով բացայայտ քայլ մը մամուլ ազատութեան նուիրական իրաւունքին դէմ, ինչպէս նաեւ նոյնքան բացարձակ փորձ մը՝ 1915-ի Թրջական ցեղասպանութեան առթիւ Հայ մամուլին եւ հանուր հայութեան կողմէ ցոյց տրուած նախանձախնդրութիւնը եւ հետեոյականութիւնը խափանելու:

Մենք, յանուն ամերիկահայ մեր հրատարակութեանց եւ ամերիկահայ-

յութեան՝ կը յայտնենք թէ միակամ ու վճռակամօրէն կանգնած ենք մեր երկու պաշտօնակիցներու կողքին, ի պաշտպանութիւն մամուլ ազատութեան:

Աշխարհացրիւ բոլոր հայերու սիրտը կը արօժէ միեւնոյն բազմաբով, որուն յաւերժական բնութիւնը դիտարկելու երաշխիքն է Հայկական Դատի անժամանցելիութեան: Չենք հաւատար որ թրքական իշխանութիւններու կողմէ Լիբանանի մէջ թէ այլու բացումը նման դատեր կրնար քաղաքակիրթ մարդկութեան ուշադրութիւնը վրիպեցնել պատմական անջնջելի ճշմարտութենէն, ինչպէս չուրջ երկու միլիոն հայ նահատակներու արիւնով նուիրագործուած մեր Դատէն:

Ո՛չ որ եւ ոչ մէկ ուժ կրնայ բռնական միջոցներով ու սպառնալիքներով ժխտել Հայութեան ու հայ մամուլի իրաւունքը՝ պատմականօրէն հաստատուած ու փաստական ցեղասպանութեան մը առիթով հետապնդելու համազգային մեր պահանջները՝ նիւթակտն թէ բարոյական առումով, ու արթուն պահելու նոր սերունդները՝ նոյն այդ իրաւունքներու գիտակցութեան մէջ:

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

«ԱՍՊԱՐԷՁ», «ՆՈՐ ՕՐ», «ՊԱՅՔԱՐ», «ՀԱՅՐԵՆԻՔ».  
«ԱՐՄԻՆԻԸՆ ՄԻՐԸՐ ՍՓԵՔԹԵՅԹԸՐ», «ԱՐՄԻՆԻԸՆ ՈՒԻՔԼԻ»

## «ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆԸ

Նկատի ունենալով, որ Լիբանանի քրքական դեպանութեան պահանջով «Ալլահ»-ի եւ «Ջարթօն»-ի դէմ, Բէյրութում, բացումը դատար ազդրւած է մամուլի, ընդհանրապէս, եւ մասնաւորապէս հայ մամուլի գաղտնաբեան դէմ, հայ ժողովուրդի եւ հայ ազգային-քաղաքական դատի դէմ, ուստի «Ալիք» օրաթերթը, բաւոն կերպով դատապարտելով մարդկային եւ հայ ժողովուրդի ազգային իրաւաց սոսնահարման միտող քրքական այս աքթը, գորովից է կանգնում «Ալլահ»-ին եւ «Ջարթօն»-ին, ի պաշտպանութիւն՝ մամուլի ազատութեան եւ հայ ժողովուրդի ազգային-քաղաքական դատի լուծման ի խնդիր մղուող պայքարի:

13 Յունիս 1970, Թեհրան

«ԱԼԻՔ»

## ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ՄԻԱՑԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆԸ

Ֆրանսահայ բովանդակ մամուլը, — «ՅԱՌԱՋ», «ԱՇԽԱՐՀ», «ՀԱՅՏԱՍՏԱՆ», «ՆՈՐ ՎՈՒՄ», — իրը վրդովումով տեղեկացաւ այն դատին, որ, թրքական դեպանին բողոքին վրայ, լիբանանեան դատախազութիւնը բացած է Պէյրութի երկու պաշտօնակիցներուն՝ «ԱՌՒԱԿ»-ի եւ «ՋԱՐԹՕՆ»-ի դէմ: Այս դատը, առաջին անգամ նկատելով բռնաբարում մը մա-

մուլի ազատութեան տարրական իրաւունքներուն, Ֆրանսահայ մամուլը իր վտանգութիւնը կը յայտնէ հանդէպ ասպնջական Լիբանանի արգարադատութեան, եւ սղահով կը սպասէ անոր տալիք վճիռին, որ ինչ որ ալ ըլլայ, դատապարտումն է դարուս առաջին ցեղասպանութեան, որ գործուեցաւ թրքական կառավարութեան որոշումով:

Նման Լիբանանահայ եւ ամերիկահայ մամուլին, Ֆրանսահայ մամուլը եւս խոր զոհունակութեամբ կ'ընէ հետեւեալ հաստատումները:

Հայ ժողովուրդին բոլոր խաւերը, անխտիր, միջին արեւելեան երկիրներէն մինչեւ զոյգ Ամերիկաներու տարածքին վրայ սփռուած հայութիւնը, իր հասարակաց թշնամիին հանդէպ որդեգրեց արի եւ օրինակելի կեցուածք մը, ինչ որ ցոյց կու տայ կրկին, թէ տարիներն ու տասնամեակները կրնան անցնիլ, բայց հայ ժողովուրդը չի մոռնար գործուած ոճիրին տարողութիւնն ու բնոյթը, կը յիշէ իր նահատակները, այլ մանաւանդ ունի կորովն ու վրձնակամութիւնը միասնական ճիգով եւ համազգային ձգտումով հետապնդելու իր իրաւունքները, որոնք անժամանցելի կը մնան, տարիներու եւ տասնամեակներու հողովոյթին մէջ:

Մասնաւորաբար զոհունակութիւն կը պատճառէ Ֆրանսահայութեան, որու հարազատ թարգմանն է Ֆրանսահայ մամուլը, հայ ժողովուրդին երեւան հանած առողջ գիտակցութիւնը սարքուած դաւին ի տես՝ ըմբռնելով հետապնդուած մութ ու այգանելի նպատակը: Արդարեւ, թուրք իշխանութիւնները, որոնք ներքին անդոհանքով կը դիտեն իրենց երրեմին զոհին հրաշալի զարթօնքը եւ, մանաւանդ, անոր պայքարի ջիղը՝ ի ինչիր իր իրաւունքներուն սպառնովման, արգալութեան վերահաստատման, այլ մասնաւորաբար զաշխարհի անուանարկման ու ոճիրին դատապարտման, նման դատերով կը փորձեն լռութեան մատնել արգարութեան ձայնը, հայութեան խօսքը, որուն հարազատ եւ մնայուն արտայայտիչը կը մնայ հայ մամուլը:

Այս ըմբռնումն է, որ ոտքի հանեց ո՛չ միայն Լիբանանի հայութիւնը, այլեւ գործօն աջակցութեան մը տրամադրութիւնը ստեղծեց Սփիւռքի միւս զաղութիւններուն մէջ:

Ֆրանսահայ բովանդակ մամուլը ունի այն հաստատ համոզումն ու նաեւ վստահութիւնը, որ ազատ Լիբանանի արգարադատ ատենը պիտի վերըստին երաշխիքը տայ իր մարդասէր ոգիին՝ անմեղ արձակելով զոհը, ինչ որ այս պարագային կը նշանակէ լռելիայն դատապարտել պատմութեան Մեծ Ոճրադործն ու անոր գործած ցեղասպանութիւնը:

Կը զիտակցինք, թէ ցորչափ հայ ժողովուրդին մէջ տմուր կը մնայ միանական ոգին, ցորչափ հայ մարդը չի հրաժարի իր արդար իրաւունքներուն տէր դատնալու որոշումէն եւ ցորչափ կը մնայ միշտ պայքարի դիրքերուն վրայ, ո՛չ մէկ ուժ, որքան ալ բիրտ ու անմարդկային ըլլայ ան, չի կրնար կասեցնել մեր ժողովուրդին յաղթական երթը պատմութեան քառուղիներուն վրայ:

Հայութեան դատը արգարութեան դատն է եւ անոր յաջող պսակաւորումը՝ քաղաքակիրթ մարդկութեան յաղթանակը:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ  
«ՅԱՌԱՋ», «ԱՇԽԱՐՀ», «ՀԱՅԱՍՏԱՆ», «ՆՈՒՅՐ ԳՈՒԱ»

### Դ Ա Ս Ա Ռ Ի Վ

Անցեալ Զորեկշարքի առտու Արդարութեան Պալատն էի, հոն տեսայ հոծ բազմութիւն մը, որուն նմանը երբեք չէի տեսած դատարանին մէջ եւ դուրսը: Քանի մը հազարի հասնող բազմութիւն էր... Բարձրացուցած էին պաստառներ, որոնցմէ մէկուն վրայ գրուած էր՝ «Լիբանանեան դատարանը խտտե՛հ է, որ պետի ջլատ թրքական ոտնձգութիւնը»: Ուրիշի մը վրայ՝ «Վրաստանը միշտ վեր կը մնայ, կարելի չէ հանել անոր բարձրութեան»: Տեսայ անմահ կարգադատութիւն: Ղեկավարները, երբ կը հրահանգէին. «մէն ոք կը հնազանդէր անոնց: Բնական է, առանց ղեկավարութեան եւ հրահանգութեան՝ յառաջ կու գայ խառնանք եւ խառնամուտ...: Ամէնքը մէկ սիրտ եւ մարմին էին: Մէկու մը հարցոցի. թէ ի՞նչ է այս պատասխանեց.

— Հայեր ենք, Մամլոյ Դատարանը ամբաստանած է ծայկական երկու քերթերու պատասխանատու տնօրէնները, 1915ի Մեծ Ծղեռնի մասին յօդուածներ հրատարակած ըլլալուն համար...

Խօսակիցս անկցուց.

— Հայկական բոլոր հոսանքները, յարանուանական թէ կուսակցական, երկու օրէ ի վեր մոռցած են իրենց տարակարծութիւնները, դարձած են միատարր եւ որոշած են ծառանալ այս հարցին հանդէպ, հակառակ անոր որ նախատարական հարց մը չէ: Պետի ծառանանք, մտռնալով ամէն նստիւթիւն, նախան, հէն ու ատելութիւն...: Ահաւասիկ կը տեսնես. հագարներ՝ գլխարկութեամբ իայ երեսփոխաններու, որոնք իրենց զգացումները կ'արտայայտեն գուսպ ու միակամ:

Ամօթեւ ծռեցի գլուխս, եւ սկսայ մտածել, թէ ի՞նչ է պատահածը մեր ընտանիքէն ներս, ուր կը տիրէ տարակարծութիւն, անհամաձայնութիւն եւ բշխամութիւն: Սատանայի մը սեռեմ, ոչքէ քաղաք մը կ'այրի ու կը բռնկի: Հիացումով դիտեցի ցեղի մը գաւազները, բռնատիրութենէն եւ գուլամներէն հալածուածներ ու անպատանեալներ հիւրընկալ ու ազատ Լիբանանի մէջ... որոնք տաք սիրտ գտան, բարախող կործէ գտան ու երայտագէտ եղան անոր հանդէպ: Ամէն տագնապի ու նեղութեան ժամանակ, Լիբանանի կողմէն են:

Սակայն մենք... Ինչքան ամօթ, ո՞րք ենք մենք:

Ղեկավարներ, քաղաքական ղեկավարներ, դուք, որ քաջ գիտէք եւ պայծառ կը տեսնէք, միայն սիրով եւ համերաշխութեամբ կրճանք հասնիլ փրկութեան եւ միայն անով կրճանք անբարգաւառիկ այլևս սրուած ախորժակներէն: Եղէք անկեղծ, գործեցէք միակամ ու համերաշխ: Աստուածային սիրով գործեցէք միշտ... ու դատարանէք Արդարութեան Պալատին մէջ մեր տեսածէն:

«Էլ ճէրիատ» ՇԱՀԱՍԷ ԵՒ ՂՈՒՄԵՅՆ

## ԼԻԲԱՆԱՆՑԻ ՆԱՀԱՏԱԿԻ ՄԸ ԶԱԽԱԿ ՅԱՐԳԱՆՔ ԿԸ ՄԱՏՈՒՑԱՆԷ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԶԱԽԱԿՆԵՐՈՒՆ

Զորեկշարքի, 20 Մայիս 1970-ի առաւօտեան, ներկայ գտնուեցաւ ձեր սողանցքին եւ ցոյցին Արդարութեան Պալատին առջեւ, մէջը եւ դատական ատենանի արահէն ներս, որոնք լեցուցիք ձեր գանգուածներով, ինչպէս լեցուցիք այս Պալատին շուրջը շուրջը գրեւորապէս փողոցները եւ պողոտաները, Պալատ մը՝ որ խորհրդանիշն է մեր արդարութեան եւ պատկէշը՝ մեր իրաւունքներուն:

Իմ հայ եղբայրներ եւ հայրենակիցներ, զաւակները եւ բռնները երկու միլիոն հայ նահատակներուն, որ օսմանն պետութիւնը, եւ մասնաւորաբար ձեմալ փաշա ջարդեց: Ես, ձեր հայրենակիցը զազափարով, հայրենակիցները եւ առաջնութեամբ, ես՝ զաւակը նահատակ Սաիտ Աբի, գոր բռնապետ ձեմալ փաշան 1916ին կախիլ տուաւ, ես ձեզ կ'ողջունեմ ձեր փառքին եւ նահատակութեան բարձրութեան մէջ:

Ես այսօր խառնուեցայ ձեր գանգուածին, եղայ ձերիններէն մէկը, ինչ որ կարտութիւն պատճառեց ինձի:

Լիբանանեան սարեգրութեանց մէջ իր տեսակին մէջ, իր ինքնաբերական ձեւով, իր կենսունակութեամբ, իր փառահեղութեամբ, իր կարգապահութեամբ եւ իր անկախութեան ձգտող իմաստով եզակի այս ցոյցով, դուք փառաբանեցիք հոգին իմ նահատակ հօր, որ կը առաւելը մեր վերել, ձեր մարտիրոսներուն հոգիներուն հետ, մեզ պաշտպանելով վերելն եւ հսկելով մեր համայնական հայրենիքին:

24 Ապրիլը եւ 6 Մայիսը իրականութեան մէջ մէկ բուսական են եւ կը խօսեցնեն պատմութիւնը՝ հերոսութեան, զոհողութեան եւ ազատութեան. պատմութիւն մը, գրուած մեր հայրերուն կողմէ, իրենց արիւնով՝ ազատելու համար իրենց հայրենիքը, նահատակներու պատմութիւն մը, որ սպասուեց մեր պատմութիւնը:

Նրբ բարբ կառավարութիւնը դատ բացաւ ձեզի դէմ, ուզելով որ դատուիք՝ քանի որ յարգեցիք ձեր նահատակները, որ նոյն ատեն մերիններն ալ են, ան հոյն ատեն պահանջեց, որ մեր մարտիրոսները իրենց գերեզմաններէն դուրս հանուին՝ անգամ մը եւս դատուելու եւ նուաստացալու համար:

Ես չեմ կրնար գատել ձեր մարտիրոսները մերիններէն: Անոնց դահիճը մէկ է, ինչպէս որ մէկ է անոնց դատը եւ պատգամը:



1913ին, առաջին արարական համագումարը, որ տեղի ունեցաւ Փարիզի մէջ, որդեգրած էր հայերու պահանջները և միացուցած արարներու պահանջներուն հետ, որոնք կը ձգտէին ազատութեան եւ անկախութեան: Այդ համագումարը գոյգ պահանջները արծարծեց միջազգային ատեաններու առջեւ:

Այս թուականէն ի վեր մեր ճակատագիրը նոյնն է:

Անոնք որ այսօր ձեզ կ'ամբաստանեն, մե'զ ալ ամբաստանած էին:

Լիբանանի մէջ տեղ չունին այն դատական ատեանները, որ կը դատաւարտեն իրաւունքը եւ հայրենիքը: Մեր դատական ատեանները խորհրդանիշն են մեր փառքին:

Ձեր ցոյցը, ձեր նահատակներուն, ձեր իրաւունքին եւ արժանապատուութեան համար, կամ մեր ցոյցը՝ մեր նահատակներուն, մեր իրաւունքին եւ ազատութեան համար, աւելի պերճախօս եղաւ, աւելի զօրաւոր, քան որեւէ պաշտպանութիւն բանատրներու, անգութներու, արժանաւորութեան, անկախութեան եւ ազատութեան թշնամիներուն առջեւ:

Լիբանան երբե'ք թոյլ պիտի չտայ ամենադոյզն միջամտութիւնը, որ ճամբայ կրնայ բանալ յարձակումի մը մեր ազատութեան եւ անհատականութեան դէմ:

Լիբանանահայ մեր պաշտօնակիցները, որ թրքական կտաւաբուծութիւնը պահանջեց որ հետապնդուին, կը վայելին նեցուկը լիբանանեան մամուլին ամբողջութեան եւ լիբանանցի ժողովուրդը զանոնք կը հռչակէ անմեղ: Լիբանանի ժողովուրդը անոնց կարծիքն կը կախի շէնճանը շնորհակալութեան եւ երախտապարտութեան:

Իմ հայ եղբայրներ և հայրենակիցներ, իմ լիբանանահայ պաշտօնակիցներ, յանուն այն արեան, զոր իմ հայրս թափեց գոհարբումի խորանին վրայ՝ ազատագրելու համար Լիբանանը օտմանցիներէն, ես կը յայտարարեմ իմ միասնականութիւնս եղբայր հայ արեան. զոր ձեր հայրերը թափեցին, նոյնպէս գոհարբումի խորանին վրայ՝ ազատագրելու համար ձեր հօր ժողովուրդը:

Իմ համեստ գրիչս ձեր տրամադրութեան տակ է, քանի որ այն նշատակը, որուն համար մենք կը պայքարինք, մէկ է: Ձեզ կ'ողջունեմ մեր ազատութեան պաշտպանումին համար, ձեր ուժին համար, զոր ոչինչ կրնայ պարտութեան մատնել, ձեր անբիծ լիբանանցիութեան եւ իրական հայրենասիրութեան համար, ձեր պաշտպանութեանը համար, իրաւունքին, սրբազան ազատութեան, ձեր փայլուն միասնականութեան եւ ձեր երախտապարտութեան՝ հանդէպ ձեր մարտիրոսներուն:

Կեանքը կը պատկանի ձեզի եւ մեզի, Աստուծոյ շնորհեով:

ՖԱՏԵԼ ՍԱԻՏ ԱՔԷ

Ջուական լիբանանցի նահատակ Սաիւ Աբիլ, անդամ Լիբանանի Մամուլի Սենտիքային

Մայիս 20, Գէորտ

## ԴԱՍ ԱՌԷՔ՝ ՀԱՅՆԵՐԷՆ

«1961-էն ի վեր արաբերէն լեզու կը դաստանդեմ հայ նոր սերունդին: Ամէն օր, հիացումս կը կրկնապատկուի ուշիմութեամբ եւ հանճարով օժտուած այս ժողովուրդին հանդէպ:

«Առաջին օրէն, երբ դպրաց մտայ, նկատեցի որ հայ ժողովուրդը ունի երեք կուսակցութիւններ, որոնց միջեւ պայքար կայ: Ատեն-ատեն, այս կուսակցութիւններուն պայքարը կը սաստկանայ, կիրքերը կը հրահրուին եւ կը յանգին կռիւի, մինչեւ անգամ արիւնահեղութեան: Սակայն, օրհասական վայրկեաններուն, կը կազմեն հայկական միասնականութիւն մը: Հայ ժողովուրդը գիտէ արմատայնի ընել քաղաքական անհասկացողութիւնները: Գիտէ միանալ ու բարձրանալ՝ ընդհանուրի շահին պաշտպանութեան համար:

«Անցեալ Չորեքշաբթի, հայ ժողովուրդը տուաւ ազգայնութեան ամէնէն վեհ ու խորիմաստ դասը: Դաս մըն է, որուն մենք՝ արաբներս կ'արժէ որ հետեւինք: Հետեւինք ու դաս առնենք անոնցմէ:

«Հագարաւոր հայեր ցոյց կատարեցին դատական պալատին մէջ, հայկական երկու օրաքերթերուն դէմ Թուրքիոյ դեսպանատան բացած դատին առիթով: Որովհետեւ, Պէյրութ հրատարակուող հայկական այդ երկու օրաքերթերը, Ապրիլ 24-ի մահատակաց տօնին առիթով, եղեռնի եւ քրքական բարբարոսութիւններու դէմ յօդուածներ գրած էին:

«Հայ ժողովուրդը, իր բոլոր հոսանքներով, ղեկավարներով ու երեսփոխաններով, կատարեց սքանչելի կարգապահութեամբ ցոյց մը: Տոյց մը, որ հիացում պատճառեց իր արտայայտած գիտակցութեան ուժեղ ոգիով: «Լեւրանանեան դասարանը կը մերժէ Թրքական ոտնձգութեան ընթացք տալ» նշանաբանը հաստատ հաւատք դարձած էր:

«Արար ժողովուրդին ալ հայկական դատի նման դատ մը ունի: Դատ մը, որուն համար ազատագրութեան ոգին բռնկած է եւ փետայիներ ոտքի են: Բայց մեր շարքերուն կը պակսի միասնական աշխատանքը: Ճղնիմ քաղաքականութիւնները կը ջլատեն մեր կամքը, մինչդեռ մեծ է դատը, որուն դէմ յանդիման կը գտնուինք բոլորս:

«Հայ ժողովուրդին տուած գեղեցիկ օրինակը քող վարակէ արար ազգը: Հետեւինք անոնց ցուցաբերած առաքինութեան, ճակատագրական այս մեծ հանգրուանին մէջ»:

«Մատա էլ Շիմալ»

ՅՈՒՔԻ. ՖԱՐՈՒՔ ՏԻՓՓԱՆԻ

## ՅՆՈՐՀԱԿԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱՆՔ

- ԸՆԿԵՐ Բ. ՓԱՆՋՈՒՆԻ, արարելէն, Քարգմ. Յովհ. Աղպաշեան, Պէյրուս, 1970
- ՅԱՆՈՒՆ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ, յօդուածներ, Շատարշ Կարդուին, Պէյրուս, 1970
- ՅՕԴՈՒԱԾՆԵՐ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ, Բարգէն Վրդ. Թօփչեան, Պէյրուս, 1970
- ԱՔԱՌՐԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒՇԵՐԷՆ, Սօսեաց Տղան, Պէյրուս, 1970
- ՓՈՒՆՁ՝ ԳԵՂԵՑԿԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԱԾԳՆԵՐՈՒ, Ե. Խատար, Խաչատուց՝ Ս. Զաւէն, Պէյրուս, 1970

Տպարան  
ՀԱՄԱՅՆՈՒԹՅԱՆ

ՏՈՒՆԻՍԻԱԿԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ

ԳՐԱԳՐԱՆ 22 Լ. 0000  
ԷԿՍՊՈԶԻՑԻԱՆ 8 ՏՐԱԿՐ  
ԲԱՆԴԱԿԱՆ 2 Լ. 0000



Վարչութեան հասցէ  
G. SASSOUNI  
Rue Sélim Boustani,  
Beyrouth - Liban